



## Հիմնադիր և հրատարակիչ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## № 126 2021

ՀՀ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՒԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Վերոգ Քաղդասարյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

**Աշոտ Եսայան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

**Արմեն Մարուխյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

**Վերոգ Դանիելյան** ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Հովհաննես Սրեփանյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Գառնիկ Սաֆարյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Արման Թաթոյան** Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Ռուբեն Մելիքյան** իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Դավիթ Մելքոնյան** իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Արթուր Չախոյան** ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

### Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.  
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5  
Հեռախոս՝ 511-640  
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,  
orinakanutyun@prosecutor.am  
www.prosecutor.am  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 17.11.2021թ.  
Ֆորմատ՝ 60x84 1/8  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 4.5 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»  
հրատարակչության տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2021թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 28 անձ դիպլոմ է ստացել ..... 3  
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է ԵՄ կողմից իրականացվող ծրագրի ներկայացուցիչներին ..... 4

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Իզնատ Խաչատրյան** Ընտանեկան անբարենպաստ միջավայրը և քրեական ենթամշակույթը՝ որպես անչափահասների հանցավորությանը նպաստող գործոններ ..... 5  
**Նելլի Տեր-Թորոսյան** «Պաշտոնատար անձ» հասկացության վերաբերյալ որոշ հիմնահարցեր..... 12

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Արայիկ Ասլանյան** Փորձագետի ներքին համոզմունքը քրեական դատավարությունում ..... 17

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Լուսինե Սարգսյան** Հայցի նախնական ապահովման միջոցները ..... 23

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Էդգար Ավետիսյան** Մասնավոր մարմինների նկատմամբ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի կիրարկման իրավական սահմանները ..... 29  
**Վախթանգ Բաբայան** Հայաստանի Հանրապետությունը որպես սոցիալական պետություն ..... 35  
**Հասմիկ Հակոբյան** Հանրապետության նախագահը՝ որպես սահմանադրական վերահսկողության սուբյեկտ ..... 40

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Սյուզաննա Վարդանյան** Վարչական պատասխանատվության իրավական հիմքերը ապրանքների չհայտարարագրման կամ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրման դեպքում ..... 45

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

**Նորայր Ստեփանյան** Արդարադատության մոդելները տարբեր երկրներում ..... 51

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Լեոնիդ Նահապետյան** Զինվորական հանցագործությունների ընդհանուր կանխարգելման հիմնախնդիրները ... 56

## ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Abstractы / Abstracts ..... 61

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները ..... 72

## ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 28 ԱՆՃԻ ԴԻՊԼՈՍ Է ՍՏԱՅԵԼ

«Արդարադատության ակադեմիայում ուսումնառության ծրագիրն ավարտած և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 28 անձի հանձվել են դիպլոմներ:

«ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի ունեցած արարողությանը մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի նախագահ Գևորգ Բաղդասարյանը, ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանը:

Ակադեմիայի հերթական շրջանավարտներին շնորհավորելով՝ ուսումնառությունը բարեհաջող ավարտելու և դատախազության համակարգ մուտք գործելու իրավունքը վստակելու համար ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտորը նշել է, որ դատախազների թեկնածուների ստացած գիտելիքներն ու հմտությունները բավարար են հետագայում իրենց մասնագիտական գործունեությունը բարձր մակարդակով և բարեխղճորեն իրականացնելու համար:

«ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը ևս շնորհավորել է երիտասարդներին, նշել, որ նրանք ընտրել են բավականին պատասխանատու, բարդ, մեծ զոհողություններ, էներգիա և կենտրոնացում պահանջող, միևնույն ժամանակ խիստ պատվաբեր և կայուն, զարգացող, իրավահեն պետության կերտման ճանապարհին առանցքային կարևորություն ունեցող գործունեության ոլորտ: Դրան, ըստ գլխավոր դատախազի, պետք է մոտենալ ոչ թե սոսկ իբրև աշխատանքի, այլ որպես առաքելության:

«Հատկապես մեր երկրի համար ներկայիս բարդ ժամանակահատվածում չափազանց մեծ է դատախազության համակարգի պատասխանատվությունը սահմանադրությամբ իրեն վերապահված գործառույթների համատեքստում պետության և հասարակության բնական կենսագործունեությունն ապահովելու, մեր երկրի ներքին իրավական անվտանգության ապահովման հարցում:

Դատախազության համակարգ մուտք գործող ցանկացած անձ իրեն պետք է զգա պետության մաս՝ ունենալով պետական մտա-



ծողություն և իրապես իր երկրին ու ժողովրդին ծառայելու գիտակցում ու նվիրում: Դատախազ դառնալու պարագայում ձեր յուրաքանչյուր դատավարական որոշում մարդկանց ճակատագրի է վերաբերելու, և յուրաքանչյուր որոշման որակով, մարդկային ու մասնագիտական նկարագրով, կենցաղով ու վարքագծով միասին մեր հանրությանը տալու ենք ազդակներ, թե որքանով ենք գործնականում ուզում ունենալ արդար, օրենքի ու իրավունքի, բոլորի իրավահավասարության վրա խարսխված հայրենիք ու պետություն, որքանով ենք ունակ նպաստելու մարդակենտրոն քրեական արդարադատության իրականացմանը, մարդու ու պետության իրավունքների պաշտպանությանը: Մեր համատեղ աշխատանքի որակը ուղիղ համեմատական է մեր պետության արդյունավետությանն ու կենսունակությանը», -ասել է ՀՀ գլխավոր դատախազը:

Դիպլոմներ ստացող դատախազության թեկնածուներին մաղթելով հաջողություններ՝ Արթուր Դավթյանը ակնկալիք է հայտնել, որ նրանք իրենց հետ համակարգ կբերեն նոր շունչ, նոր աշխատելաճ, նոր գաղափարներ և, ավագ գործընկերներից ստանալով նաև բավարար փորձառություն՝ կնպաստեն ժամանակի պահանջներին, իրավական մտքի զարգացման միտումներին համարժեք դատախազության զարգացմանը:

Համակարգը որակյալ երիտասարդ կադրերով համալրելու կարևորագույն խնդրի լուծման ճանապարհին Արդարադատության ակադեմիայի ստանձնած դերակատարության, դատախազների թեկնածուների ուսումնառության գործընթացը որակյալ կազմակերպելու համար ՀՀ գլխավոր դատախազը շնորհակալություն է հայտնել նաև Ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանին:

## 2021Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՄ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՋՆԵՐԻՆ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ Բաղդասարյանն ընդունել է «Աջակցություն Հայաստանում դատական ոլորտի բարեփոխումների իրականացմանը» ծրագրի աջակցող խմբի ներկայացուցիչներին:

Ողջունելով հյուրերին՝ Գ. Բաղդասարյանն ընդգծել է ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող՝ ՀՀ արդարադատության համակարգի բարեփոխմանն ուղղված ծրագրերի կարևորությունը և փաստել, որ դրանց արդյունավետությունը գործնականում ակնհայտ վկայություններ ունի:

Ծրագրի ներկայացուցիչները ներկայացրել են կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում նախատեսվող աջակցության ծրագրի ուղղությունները և պատրաստակամություն հայտնել օժանդակել կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով դատավարական ղեկավարման, հսկողության և վերահսկողության ոլորտի բարեփոխումներին:

Քննարկման արդյունքում կողմերը պայմանավորվել են կարճ ժամկետում հստակեցնել կոնկրետ ծրագրային մոտեցումները՝ դրանց իրագործումն ապահովելու նպատակով:



● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 126 2021

**ԻԳՆԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀՀ ոստիկանության ԵՔՎ Կենտրոնական բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ,  
ոստիկանության լեյտենանտ

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ  
ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻ  
ՉԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ**

21-րդ դարի նախաշեմին անչափահասների հանցավորության խնդիրները շարունակում են մտահոգել ողջ հանրությանը: Այս վտանգավոր երևույթի վրա անհրաժեշտ ազդեցություն գործելու և դրա դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու ուղղությամբ լուրջ աշխատանքներ են տարվում աշխարհի գրեթե բոլոր պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ):

20-րդ դարի 90-ական թվականները մեր երկրում նշանավորվեցին բուռն իրադարձություններով, որոնք իրենց անմիջական ազդեցությունն ունեցան նաև անչափահասների և երիտասարդության վրա: Տնտեսական ճգնաժամը, գաղափարական նախկին հայեցակարգերի փլուզումը, հասարակությունում տեղի ունեցող բուռն գործընթացները, սոցիալ-տնտեսական արմատական բարեփոխումները խթանեցին այնպիսի երևույթների (հանցավոր միջավայր, հանցավոր հեղինակություն և այլն) տարածմանը, որոնք նախկինում գտնվել էին ստվերում:

Գիտության մեջ հանցավորության հասկացության վերաիմաստավորման համար, ըստ երևույթին, խթան հանդիսացան Է. Դյուրքեյմի դատողություններն այն մասին, որ հանցավորության գոյությունը նորմալ երևույթ է, այն իրենից ներկայացնում է հասարակության որոշակի գործառույթ, դրա անքակտելի մասը և ոչ միայն ենթադրում է անհրաժեշտ փոփոխությունների ուղիների առկայություն, այլև՝ որոշ դեպքերում ուղղակիորեն նախապատրաստում է այդ փոփոխությունները<sup>1</sup>:

Ինչպես յուրաքանչյուր պետությունում, այնպես էլ ՀՀ-ում գոյություն ունեն անչափա-

հասների հանցավոր վարքագծի դրսևորումներ: Հատկանշական է անչափահասների կողմից դրսևորվող հակաօրինական, հանցավոր վարքագծի վրա սոցիալական, քաղաքական, իրավական, հոգեբանական, ինչպես նաև փլուզվող արժեհամակարգի գործոնների ազդեցությունը: Եթե փորձենք համակարգել անչափահասների հանցավոր վարքագծի դրսևորմանը նպաստող պատճառներն ու պայմանները, ապա դրանց թվին կարող ենք դասել նաև ընկերական շրջապատի բացասական ազդեցությունը, հոգևոր արժեքների ցածր մակարդակը, անչափահասների շրջանում ձևավորված ենթամշակույթը, մշակութային ժամանցի համար սահմանափակ հնարավորությունները, համացանցի միջոցով բացասական տեղեկատվության տարածումը, անբարենպաստ իրավիճակը ընտանիքում: Այս հանգամանքները թույլ են տալիս եզրակացնելու, որ անչափահասների կողմից կատարված իրավախախտումների խնդիրը շարունակում է մնալ հրատապ<sup>2</sup>:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունի տարածված կարծիք առ այն, որ շեղվող վարքագիծը տվյալ հասարակությունում ընդունված իրավական, բարոյական և, ընդհանրապես, սոցիալական նորմերին հակասող վարքագիծն է, որի հիմքում ընկած են անձի սոցիալականացման խնդիրները: Իհարկե, անչափահասի դրսևորած շեղվող վարքագծի ոչ բոլոր դեպքերն են հանգեցնում քրեական պատասխանատվության: Սակայն, որպեսզի հետագայում շեղվող վարքագիծը չստանա հանցավոր դրսևորում, անհրաժեշտ է նախօրոք ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ:

<sup>1</sup> Տե՛ս Дюркгейм Э. Норма и патология // Социология преступности. Москва, 1966, ст. 39.  
<sup>2</sup> Տե՛ս Малков В. Д. Криминология: Учебник для вузов. 2-е изд., перераб. и доп. М., 2006, ЗАО «Юстицинформ», ст. 84-95.

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 126 2021

Ինչպես արդեն նշել ենք, անչափահասների հանցավորությունը՝ որպես միջազգային հետաքրքրություն ներկայացնող ոլորտ, աշխարհի գրեթե բոլոր պետություններում համարվում է լուծում պահանջող կարևորագույն հիմնախնդիրներից մեկը:

Անչափահասների կողմից և նրանց մասնակցությամբ կատարվող հանցագործությունների դեմ քրեաիրավական պայքարը, այս բնույթի հանցագործությունների նախականխումն ու կանխումը, ինչպես նաև դրանց նպաստող պատճառների, պայմանների վերհանումն ու վերացումը մնում է պետության հիմնական անփոփոխ առաջնահերթություններից մեկը:

ՀՀ-ում անչափահասների հանցավորության 2017-2019թթ. վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2017թ. համեմատությամբ 2018թ. նշված ցուցանիշը որոշակիորեն նվազել է (2020թ. ընթացիկ վիճակը միջանկյալ ամփոփման փուլում է): Եթե 2017թ. արձանագրվել է անչափահասի կողմից կամ նրա մասնակցությամբ կատարված հանցագործության 403 դեպք, ապա 2018 թ. արձանագրվել է նման 359 դեպք, այսինքն՝ նվազումը եղել է 44 դեպքով կամ 12%-ով: 17 դեպքով կամ 5%-ով նվազել է նաև հանցանք կատարած, իսկ 32 դեպքով կամ 19,3%-ով դատապարտված անչափահասների թիվը: Իսկ 2019 թ. արձանագրվել է անչափահասի կողմից կամ նրա մասնակցությամբ կատարված հանցագործության 327 դեպք:

Չնայած այս դրական միտումներին՝ 2018թ. աճել են անչափահասների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված առանձին վտանգավոր հանցատեսակներով, մասնավորապես, սպանության, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու, ավազակության, կողոպուտի դեպքերը:

Անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի պատճառների և պայմանների բացահայտումը, կանխման արդյունավետ միջոցառումների մշակումն ու իրականացումն անհնար են առանց հանցավոր վարքագծի մեխանիզմի օղակի՝ հանցավոր անձի

ուսումնասիրության: Հանցանք կատարած անչափահասի քրեաբանական բնութագրի ուսումնասիրությունը ենթադրում է նրա ոչ միայն սոցիալական, այլև հոգեբանական առանձնահատկությունների վերլուծություն: Վերջինիս կարևորությունը պայմանավորված է նրանով, որ անձի ոչ սոցիալական կարգավիճակը, ոչ սոցիալական դերերը և ոչ էլ հանցավոր վարքագծի դրսևորման պատճառ հանդիսացող օբյեկտիվ և սուբյեկտիվ այլ գործոնները չեն կարող հանգեցնել հանցանքի կատարման՝ առանց հանցանք կատարող անձի հոգեբանական ոլորտով անցնելու, հոգեբանական կարգավիճակ ստանալու<sup>3</sup>:

Անչափահասների հանցավորությունն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք որոշվում են դիտարկվող տարիքի անձանց հոգեբանական հատկանիշներով: Որոշակի տարիքի հասած անչափահասների մոտ տեղի է ունենում անհատականության ձևավորում, որն իրենից ներկայացնում է «միջանկյալ», «կրկնվող» անհատական սոցիալականացում: Նշենք նաև, որ դեռահասներն այս տարիքում առավելապես խոցելի են արտաքին ներգործություններից, հասակակիցների և, ինչը հատկապես կարևոր է, մեծերի բացասական ազդեցություններից: Այս համատեքստում կարելի է պնդել, որ դա է անչափահասների կողմից «քրեածին վարակվածության» բարձր աստիճանի հիմքը, ինչը հանցաշխարհի պարագլուխներին հիմք է տալիս անչափահասներին դիտելու որպես իրենց «կադրային ռեզերվներ»:

Գոյություն ունեն որոշակի գործոններ, որոնց նշանակությունը կարևորվում է հատկապես անչափահասների նոր ձևավորվող վարքագծի համար: Այդ գործոնների թվին են դասվում ընտանիքը և անչափահասների շրջանում ձևավորված ենթամշակույթը:

Նշենք, որ ընտանիքում է տեղի ունենում անչափահասի սկզբնական սոցիալականացումը, ձևավորվում են դերային, արժեքային և աշխարհայացքային կողմնորոշումները: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին,

<sup>3</sup> Տե՛ս Попандопуло В. В. Преступность несовершеннолетних: состояние, функции, последствия, социальный контроль: Дис. ... канд. юрид. Наук, Краснодар, КубГУ, 2007, ст. 56-64:

կրթում, դաստիարակում նրան, ապահովում նրան հոգեբանական աջակցությամբ: Հետևաբար, բարոյությունից զերծ, հոգեբանորեն կայուն, հասարակության պահանջները ընկալող և դրանց համարժեք արձագանքելու ունակ անձի ձևավորման առաջնային նախադրյալը առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ ունեցող, երեխայի իրավունքները, նրա հանդեպ ունեցած պարտականությունները գիտակցող և դրանք կյանքի կոչող ընտանիքի առկայությունն է: Ազնվությունը, մարդասիրությունը, կենցաղային խնդիրներին դիմակայելու կարողությունը երեխայի մոտ ձևավորվում են միայն այն դեպքում, երբ երեխան մանկուց մեծացել է ընտանիքում գոյություն ունեցող անկեղծ ու ջերմ հարաբերությունների պայմաններում<sup>4</sup>:

Անչափահասների իրավախախտ վարքագծի ձևավորմանը առավելապես նպաստող գործոնը ընտանիքում անբարենպաստ իրավիճակն է, որը շտկելու գործին պետության հետ պետք է ներգրավված լինի նաև ընտանիքը: Պատահական չէ, որ երեխայի իրավունքների պաշտպանությանը միտված միջազգային փաստաթղթերում ևս կարևորվում է ընտանիքի դերը: Այսպես՝ անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների («Պեկինյան կանոններ») 1.1-րդ կետը սահմանում է, որ անդամ պետությունները պետք է ձգտեն նպաստելու անչափահաս տղայի կամ աղջկա և նրա ընտանիքի բարեկեցությանը<sup>5</sup>: Համանման կարգավորում է պարունակում նաև Անչափահասների շեղվող վարքագծի կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշների (Ռիադյան ուղենիշներ)<sup>6</sup> 11-րդ կետը, որը սահմանում է, որ յուրաքանչյուր հասարակություն պետք է խիստ կարևորի ընտանիքի և դրա բոլոր անդամների կարիքներն ու բարեկեցությունը:

Ռիադյան ուղենիշերի 12-19-րդ կետերը ևս ուղղակիորեն վերաբերում են երեխայի վար-

քագծի ձևավորման ընթացքում ընտանիքի, ծնողների կողմից երեխայի հանդեպ դրսևորվող վերաբերմունքին՝ կարևորելով դրանք երեխայի առաջնային սոցիալականացման, պաշտպանության և խնամքի ապահովման գործընթացում<sup>7</sup>:

Ինչպես հայտնի է, շատ ընտանիքներ տարբեր պատճառներով չեն կատարում իրենց դաստիարակչական գործառույթը, որն ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստում է անչափահասների հակահասարակական և երբեմն անօրինական կողմնորոշումների ձևավորմանը: Յուրաքանչյուր նոր ձևավորվող անձի վարքագծի համար անփոխարինելի նշանակություն և դերակատարություն ունի ընտանիքը: Մինչդեռ ընտանիքում առկա սոցիալ-հոգեբանական խնդիրները (անչափահասի ծնողների միջև պարբերաբար կրկնվող կոնֆլիկտները, ծնողների անտարբերությունը միմյանց և երեխայի նկատմամբ, ձևական բնույթ կրող՝ հանուն երեխայի հարաբերությունները, հանդուրժողականության պակասի արդյունք հանդիսացող ընտանեկան խնդիրները) հանգեցնում են անչափահասի կողմից շեղվող, իսկ առանձին դեպքերում՝ հանցավոր վարքագծի դրսևորման:

Յուրաքանչյուր ընտանիքում ծնողների կողմից իրականացվում են դաստիարակչական բնույթի աշխատանքներ՝ ուղղված երեխայի կայուն հոգեբանության, աշխարհայացքի, արժեհամակարգի ձևավորմանը: Ծնողների կողմից իրականացվող նշված աշխատանքների ամբողջությունը ծնողական դաստիարակության մի մասն է, որի բացակայության կամ թերի իրականացման դեպքում անչափահասի մոտ ձևավորվում է հակօրինական, շեղվող վարքագիծ: Այս հանգամանքի կարևորությունը, ինչպես արդեն նշել ենք, այն է, որ ընտանիքում են ձևավորվում անչափահասի հոգեբանական հայացքները, ինչն էլ առանցքային նշանակություն ունի անչափահասի հոգեբա-

<sup>4</sup> Տե՛ս Ковтуненко Л. В. Семья как социокультурная среда воспитания и ресоциализации несовершеннолетних правонарушителей // Вестник Воронежского института МВД России, 2012, № 3, ст. 137-143.

<sup>5</sup> Տե՛ս «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ» («Պեկինյան կանոններ»), հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թ. նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով:

<sup>6</sup> Տե՛ս «Անչափահասների շեղվող վարքագծի կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշներ» («Ռիադյան ուղենիշներ»), (հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1990 թ. դեկտեմբերի 14-ի 45/112 բանաձևով):

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում:

նության հետագա զարգացման հարցում: Ան-  
չափահասները ծնողների կողմից ոչ բավարար  
ուշադրության արժանանալու դեպքում շատ  
հաճախ փորձում են այն լրացնել իրենց հասա-  
կակիցների շրջանում:

Երեխայի անձի ձևավորման վրա ընտա-  
նիքի ազդեցությունը գնահատելիս կարևորա-  
գույն հարցերից մեկը ծնողների դաստիարա-  
կության մեթոդն է: ՀՀ-ում շեղվող վարքագիծ  
հաճախ դրսևորվել է արտաքուստ լիարժեք  
համարվող ընտանիքներում մեծացող երեխա-  
ների կողմից: Ընդ որում, որպես նման վիճակի  
բացատրություն, մենք ավելի հակված ենք այն  
տեսակետին, որ խնդիրը դաստիարակության  
ուղորտում է, երբ ծնողների և ընտանիքի մյուս  
անդամների կողմից երեխայի նկատմամբ չա-  
փից դուրս ուշադրությունը, նրան բոլոր տե-  
սակի կենցաղային պարտականություններից  
ազատելը<sup>8</sup> երեխայի մեջ ձևավորում են ամե-  
նաթողության և անպատժելիության պատկե-  
րացում:

Երեխայի դաստիարակությունը վեհ, բայց  
նաև խիստ պարտավորեցնող առաքելություն  
է, որը ենթադրում է նախապատրաստություն,  
մանկավարժական, հոգեբանական գիտելիք-  
ների ու հմտությունների ձեռքբերում: Մինչդեռ  
ՀՀ-ում, ի տարբերություն արևմտաեվրոպա-  
կան բազմաթիվ երկրների, ծնողների համար  
նման դասընթացների անցկացումը դեռևս  
տարածված երևույթ չէ: Հետևաբար, ծնողները  
երեխաներին դաստիարակում են կամ իրենց  
ծնողների օրինակով, վերջիններիս խորհուրդ-  
ներով ու ցուցումներով (ինչու չէ՝ նաև սխալնե-  
րով), կամ գործում են փորձարկումների մեթո-  
դով՝ մոռանալով, որ «փորձարկվողը» երեխա  
է, և իրենց յուրաքանչյուր սխալ կարող է կոր-  
ծանարար լինել նրա համար:

Ամենաառանցքային խնդիրը, որն այ-  
սօր առկա է դաստիարակության ոլորտում,  
ծնողների և երեխաների արժեքային տարբեր  
կողմնորոշումներն են<sup>9</sup>: Այսօրվա դեռահաս-  
ներից շատերի ծնողները դաստիարակություն  
են ստացել Խորհրդային Միության ժամանակ

ընդունելի համարվող արժեհամակարգով:  
ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, բախվելով նոր  
իրականությանը, ի հայտ եկած նոր արժեքնե-  
րին, նրանք հայտնվեցին երկրնորանքի առջև.  
կամ երեխաներին դաստիարակել սկզբունք-  
ներով, որոնք իրենց համար ընդունելի չեն,  
սակայն երեխաներին թույլ կտան գոյատևել և  
առաջ շարժվել նոր ձևավորված հասարակա-  
կան հարաբերություններում, կամ երեխաների  
մեջ սերմանել այն արժեքները, որոնք, իրենց  
կարծիքով, ավելի ճիշտ են և հիմնավոր: Վեր-  
ջին դեպքում, սակայն, հետևանքը լինում է այն,  
որ ծնողների կողմից սերմանվող արժեքները,  
որոնք պետք է օգնեին երեխաներին զարգա-  
նալ, ընդունելի լինել հասարակության կողմից,  
իրականում ցանկալի արդյունք չեն տալիս:  
Ծնողների սերմանածը և իրականությունը հա-  
կադրվում են, երեխայի մեջ առաջանում է ներ-  
քին կոնֆլիկտ, որն էլ հանգուցալուծում է ստա-  
նում առաջադրված հարցերի պատասխանը  
ինքնուրույն կամ հասակակիցների շրջանում  
փնտրելով, հաճախ հանգեցնում ծնողների  
հետ հակասությունների, վերջիններիս հեղի-  
նակազրկման:

Ընտանիքի բացասական ազդեցությունը  
անչափահասի վրա պայմանավորված է այն  
հանգամանքով, որ ընտանիքը անչափահասի  
համար կարող է լինել անբարենպաստ միջա-  
վայր: Ընտանեկան ապաստոցիալականացումը  
կարող է կապված լինել անչափահասի վրա  
ընտանիքի բացասական ազդեցության հետ՝  
նրա հակահասարակական կողմնորոշումների  
ձևավորման, վարքի բացասական չափանիշ-  
ների կամ ընտանիքի կողմից անվերահսկե-  
լիության տեսքով<sup>10</sup>:

Հոգեբանամանկավարժական գիտելիք-  
ների ցածր մակարդակ ունեցող ծնողների կող-  
մից դեռահասների դաստիարակությունը ծնում  
է անչափահասի քրեածին վարքագծի ուղղվա-  
ծություն: Նման ընտանիքներում աստիճանա-  
բար վերանում են դրական, հուզական կապե-  
րը անչափահասների հետ, ինչը հանգեցնում  
է նրան, որ ծնողները կորցնում են անչափա-

<sup>8</sup> Տե՛ս Ковтуненко Л. В., նշվ. աշխ., էջեր 137-143: Տե՛ս նաև՝ «Юридическая психология: учебник», М., 2003, ст. 95-116.

<sup>9</sup> Տե՛ս Жигинас Н. В., Зверева Н. А., Гребенникова Е. В. Девиантное поведение подростков как искажение нравственного воспитания // Вестник Томского государственного педагогического университета, 2014, № 1 (142), ст. 39-44.

<sup>10</sup> Տե՛ս Лелеков В. А., Кошелева Е. В. Влияние семьи на преступность несовершеннолетних. Социологические исследования, Учебное пособие. Воронеж: ВИ МВД России 2007, ст. 85-93.



հասի շփման, այլ ոլորտներում առաջացած կոնֆլիկտային իրավիճակները չեզոքացնելու իրենց հնարավորությունը: Արդյունքում, անչափահասների մոտ ցանկություն է առաջանում շփման եզրեր գտնել այլ փոքր խմբերում օտարված չզգալու համար:

Բազմաթիվ քրեաբաններ վաղուց ապացուցել են այն թեզը, որ հանցագործությունները, ընդհանրապես, իսկ անչափահասների հանցավորությունը, մասնավորապես, շատ հաճախ կապված են աղքատության հետ: Ինչպես արդարացիորեն նշում է Յու. Մ. Անտոնյանը, չպետք է մոռանալ, որ աղքատ հասարակությունը աղքատ է նաև հոգեպես, ինչը անբարոյականության և հանցավորության ներկայիս բարձր մակարդակի գլխավոր պատճառներից մեկն է<sup>11</sup>:

Անչափահասների հանցավորությունը, հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացների ազդեցության տակ ձեռք բերելով զարգացման նոր գծեր և ուղղություններ, մնում է և ընդմիշտ կմնա քաղաքակրթության «հավերժական ուղեկիցը»:

Անչափահասների հանցավորության կանխարգելման գործում մեծ նշանակություն ունի ընտանիքի կողմից իրականացվող սոցիալական վերահսկողությունը: Նման վերահսկողությունը ոչ միայն հանցավորության դեմ պայքարի միջոցների, հնարքների համակարգ է, այլև սա վերաբերում է կանխարգելիչ գործունեության համոզման մեթոդին:

Այսպես՝ Դ. Ա. Շեստակովը անչափահասի անձի վրա էական ազդեցություն ունեցող ընտանեկան խնդիրների թվին է դասում ներընտանեկան և շրջապատի հետ ընտանիքի կոնֆլիկտները, դրանց հետևանքով առաջացած անոմիան, ակոհոլամոլությունը, թմրամոլությունը, այսինքն՝ վարքագծի բացասական չափանիշների ձևավորումը<sup>12</sup>:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ բոլոր դեպքերում ընտանիքը պետք է լինի այն անկյունաքարը, որն կօժանդակի անչափահասին և թույլ չի տա շեղվել բնականոն ու նորմալ վարքագծի ձևավորման ճանապարհից՝ անկախ ընտանիքում առկա սոցիալական, բարոյահոգեբանական և այլ խնդիրներից:

Ինչ վերաբերում է քրեական ենթամշակույթին, ապա պետք է նշել, որ այն նախատեսված չի եղել որպես հանցագործություն, չնայած այն իրենից ներկայացնում է հասարակական մեծ վտանգավորություն, և այդ վտանգը առավել մեծ բացասական ներգործություն կարող է ունենալ անչափահասների վարքագծի ձևավորման վրա:

Քրեական կամ հանցավոր ենթամշակույթը բարոյահոգեբանական արժեքների համակարգ է, որը կարգավորում է հանցավոր գործունեությունը: Այս ինստիտուտի առկայությունը խթանում է հանցավոր հանրույթի համախմբվածությունը, հանցավոր վարվեցողության խրախուսումը և նոր սերունդների շնորհիվ քրեական արժեհամակարգային կանոնների պահպանումը: Քննարկվող երևույթի առանձին բաղադրիչներ, ինչպիսիք են՝ ժարգոնը, դաջվածքները, ժեստերի լեզուն, աստիճանաբար սկսեցին ներառվել օրինապաշտ քաղաքացիների մշակույթում<sup>13</sup>:

Թեև քրեական ենթամշակույթը ունեցել է բավականին լայն տարածվածություն թե՛ ԽՍՀՄ-ում, թե՛ Հայաստանի Երրորդ Հանրապետությունում, սակայն այս երևույթը քրեականացվեց ընդամենը վերջերս և նախատեսվեց ՀՀ քրեական օրենսգրքում<sup>14</sup>:

Քրեական ենթամշակույթը հիմնված է որոշակի ավանդույթների, կանոնների, նորմերի և ծեսերի վրա, որոնց կենսագործումը հակասում է իրավական պետության և օրինապահ հասարակության ելակետային սկզբունքներին՝ խարխլելով դրանց հիմքերը: Այսօրինակ անհամատեղելիությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ քննարկվող ենթամշակույթը արդարացնում և խրախուսում է հանցավոր ապրելակերպը, այդ թվում՝ հանրորեն վտանգավոր արարքների կատարումը: Միևնույն

<sup>11</sup> Տե՛ս Անտոնյան Յ. Մ. Причины преступного поведения, Криминология: Учебник для академического бакалавриата, 3-е изд., пер. и доп., Москва, Издательство Юрайт, 1992, ст. 265.  
<sup>12</sup> Տե՛ս Шестаков Д. А. Криминология. Учебник для вузов, 2-е изд., СПб, изд-во Р. Асланова «Юридический центр пресс», 2006, ст. 19.  
<sup>13</sup> Տե՛ս Вакутин Ю. А. Словарь жаргонных слов и выражений. Татуировки, Омск, 1979, ст. 126.  
<sup>14</sup> Տե՛ս Քրեական օրենսգրքի հոդվածներ 223.1, 223.2, 223.3, 223.4. Լրացումը կատարվել է 20.09.2019թ

ժամանակ, քրեական ենթամշակույթը զգալի վնաս է հասցնում պետության հիմքերին՝ հասարակության առանձին հատվածի համար ստեղծելով վարքագծի նոր կանոններ, որոնք առերևույթ չեն համընկնում (ինչպես նաև՝ հակասում են) պետության նախատեսած համապարտադիր իրավանորմերին:

Քրեական ենթամշակույթ կրող անձանց հատկանիշներից են լեզվական ձևախեղումը, մարմնի տարբեր մասերին դաջվածքների առկայությունը, ժեստային հաղորդակցությունը և այլն:

Ենթամշակույթը փոքրամասնությունների մշակույթ է, որն առաջացել է այն պատճառով, որ հասարակությունը մերժում է հանցագործներին՝ նրանց մեկուսացնելով քրեակատարողական հիմնարկներում: Վերջիններս էլ ձգտում են ձևավորել նոր շերտավորում՝ «հասարակություն հասարակության մեջ», որտեղ կգերիշխեն իրենց նախատեսած ավանդույթները, իսկ կանոններն էլ կարտահայտեն իրենց իսկ հանցավոր ձգտումներն ու գաղափարական արժեքները<sup>15</sup>:

Ներկայումս բավականին տարածված է ենթամշակույթի և այն կրող անձանց ազդեցությունը անչափահասների վարքագծի վրա՝ որպես քրեաբանական և քրեաիրավական հետաքրքրություն ներկայացնող երևույթ:

Տարբեր երկրներում մշտապես առկա է անչափահասների հանցավորության տարածման վտանգ, որն առավել ցայտուն կերպով դրսևորվում է հանցաշխարհի կողմից իր ազդեցության տարածմամբ և իր հանցավոր նպատակների համար անչափահասներին օգտագործելով: Ինչպես նշում են շատ իրավաբան-գիտնականներ, անչափահասների՝ տարբեր խմբերի քրեական ենթամշակույթին հաղորդակից լինելը նրանց հակահասարակական և քրեական վարքը պայմանավորող պատճառներից մեկն է:

Քրեական ենթամշակույթի կրողներն անչափահասների վրա ազդեցություն են ունենում ոչ միայն այն ժամանակ, երբ նրանց հետ միասին մտնում են հանցավոր խմբավորումների մեջ, այլև՝ անուղղակի կերպով՝ հակաիրավա-

կան արարքներ կատարելիս հաճախ լինելով նրանց հանցավոր գործունեության կազմակերպիչը<sup>16</sup>:

Անչափահասները իրենց՝ մեծահասակներից ընդօրինակման վրա հիմնված հոգեբանության պատճառով, ներգրավվելով քրեական ենթամշակույթի մեջ, ոչ միայն ձեռք են բերում հանցագործություններ կատարելու կամ հանցավոր գործունեություն ծավալելու հակում, այլև իրենք են դառնում այդ ենթամշակույթի տարածողները այլ անչափահասների շրջանում: Իրենց հասակակիցներին ներգրավելով շփման մեջ՝ նրանց հաղորդակից են դարձնում քրեական ենթամշակույթին, քարոզում են քրեական ապրելակերպ:

Քանի որ ենթամշակույթի դեմ պայքարն իրականացվում է պետական համապատասխան մարմինների միջամտությամբ, ուստի կարող ենք նշել, որ ենթամշակույթի ազդեցությունը հասարակության առավել խոցելի շերտի՝ անչափահասների վրա կանխելու նպատակով պետության կողմից պետք է ձեռնարկվեն և իրականացվեն առավել արդյունավետ միջոցառումներ:

Ամփոփելով վերընշվածը՝ կարելի է արձանագրել, որ անչափահասներն հասարակության հատուկ սոցիալական շերտ են իրենց արժեքներով և գաղափարներով, որոնք ձևավորվում են տարբեր գործոնների ազդեցության տակ: Կարծում ենք, որ եթե անչափահասներն իրենց ընտանիքներում ապահովված լինեն բավարար ուշադրությամբ, հոգատարությամբ և խնամքով, նրանց մոտ դեռևս նոր ձևավորվող արժեքները, սկզբունքները և կողմնորոշումները կհանդիսանան պատշաճ վարքագծի ձևավորման հիմքը, ինչի մասին ավելի մանրամասն խոսվել է վերևում: Նշենք նաև, որ ընտանեկան անբարենաստ միջավայրից բացի, անչափահասի վարքագծի վրա բացասական ազդեցություն կարող է ունենալ նաև ենթամշակույթը, ինչի տարածման համար հիմք է հանդիսանում անչափահասների կողմից հանցավոր խմբավորումների մեջ ներգրավվելը:

Կարծում ենք, որ հասարակության մեջ

<sup>15</sup> Sեն Капорский С. Я. Воровской жаргон среди школьников: По материалам обследования Ярославская школа // Вестник просвещения, 1927, № 1, ст. 45-50.

<sup>16</sup> Sեն Пирожков В. Ф. Законы преступного мира молодежи (криминальная субкультура), Тверь, 1994, ст. 74.

անչափահասների կողմից հանցագործությունների կատարումը նվազեցնելու, ինչպես նաև վերջիններիս վարքագծի մեջ կրիմինոգեն տարրերի չեզոքացման հարցում կարևորվում է ընդհանուր սոցիալական վերահսկողությունը, որն առավել էֆեկտիվ է դառնում ընտանիքի կողմից իրականացվելու դեպքում. մասնավորապես՝ ծնողերի կողմից պետք է հաճախակի կազմակերպվեն ժամանցի, հանգստի, ինչպես նաև անչափահասների առօրյան հետաքրքիր և արդյունավետ դարձնելուն ուղղված միջոցառումներ և ծրագրեր:

Այսպիսով՝ անչափահասների հանգստի և ժամանցի տարաբնույթ ձևերի կազմակերպումը ոչ այլ ինչ է, եթե ոչ աճող սերնդի համար առողջ կենսակերպի ապահովում, որի հետ մեկտեղ լուծվում են նաև անչափահասների հանցավորության կանխարգելման խնդիրները: Չնայած, որ ընդհանուր սոցիալական բնույթի կանխարգելման միջոցները չեն կարող ունենալ հատուկ նշանակություն, սակայն կարող են էականորեն ազդել հանցավորության մակարդակի, շարժի և կառուցվածքի վրա, քանի որ կստեղծեն պայմաններ՝ չեզոքացնելու, արգելափակելու կամ էլ վերացնելու այն գործոնների ազդեցությունը, որոնք պայմանավորում են անչափահասների հանցավոր խմբերի ձևավորումը և գործունեությունը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ անչափահասների հանցավորության նվազեցման, ինչպես նաև անչափահասի նոր ձևավորվող վարքագծի համար կարևորվում է այն հարցը,

թե ծնողների կողմից դաստիարակության ինչպիսի մեթոդներ են կիրառվում:

Երեխաների դաստիարակության հարցերում ոչ բոլոր ծնողներն են իրենց մոտեցումներում կարևորում անհրաժեշտ հոգեբանական, մանկավարժական տարրերը, և վերջիններիս բացակայության հետևանքով, ծնողների կողմից թույլ են տրվում երեխայի իրավունքների խախտում, բռնության գործադրում, ազատությունից զրկում, ինչպես նաև իրենց այդ վարքագծով երեխայի մոտ հոգևոր արժեքներ սերմանելու փոխարեն ձևավորում են շահադիտական, սպառողական հոգեբանություն:

Ուստի կարծում ենք, որ ՀՀ-ում անհրաժեշտ է ծնողների համար պետական մակարդակով նախատեսել հատուկ դասընթացներ՝ երեխաների դաստիարակման գործընթացում անհրաժեշտ մանկավարժական, հոգեբանական գիտելիքներ տալու, հմտություններ ու կարողություններ ձևավորելու նպատակով, ինչը խթան կհանդիսանա նաև հասարակության անդամների իրավագիտակցության բարձրացման համար:

Կարծում ենք, որ մեր հասարակությունում արմատացած հիմնական խնդիրներից է նաև անչափահասների շրջանում վստահության պակաս իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ոստիկանության նկատմամբ, հետևաբար անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել երեխաների և ընդհանուր բնակչության շրջանում իրավապահ մարմինների հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ:



**ՆԵՐՄԱՆ ԵՐ-ԹՈՐՈՍՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

**«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆԾ» ԶԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ԶԻՄՆԱՅԱՐՑԵՐ**

«Պաշտոնատար անձ» հասկացության բովանդակության բացահայտումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ գործող իրավական ակտերում նշված հասկացության կիրառումը և դրա մեկնաբանության բացակայությունը, նոր իրավական ակտերի ընդունումը, որոնցում կիրառվող «պաշտոնատար անձ» հասկացությունն ընդգրկում է մինչ այդ ընդունված իրավական ակտերում կիրառվող նշված հասկացության բովանդակությունից տարբերվող՝ անձանց այլ շրջանակ, որն առաջացնում է իրավական անորոշություն և ընդգծում բովանդակությանն անդրադառնալու կարևորությունը:

Ինչպես նշում է Դ.Ն. Բախրախը, «Ցավոք «պաշտոնատար անձինք» հասկացության միասնական սահմանում չկա թե՛ դաշնային օրենսդրության (ՌԴ), թե՛ իրավագիտության մեջ, չնայած որ այն օգտագործվում է թե՛ սահմանադրական, թե՛ վարչական, թե՛ քրեական իրավունքում, ինչպես նաև իրավունքի այլ ճյուղերում»<sup>1</sup>:

ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրական այլ ակտերով բազմիցս կիրառվում է «պաշտոնատար անձ» հասկացությունը: Սակայն, Սահմանադրությամբ չի տրվում այդ հասկացության սահմանումը: Քննարկվող հասկացության սահմանում չի տրվում նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով (սույն օրենքի 34-րդ հոդվածն անդրադարձ է կատարում միայն «հայտարարատու պաշտոնատար անձ» հասկացությանը): «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին»

ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետն անդրադառնում է «պաշտոնատար անձ» հասկացությանը, սակայն նշված սահմանումը տարածվում է միայն օրենքի կարգավորման առարկան կազմող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի հետ կապված հարաբերությունների վրա: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2020 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվեց միայն «բարձրաստիճան պաշտոնատար անձանց» շրջանակը:

Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառն այն է, որ իրավագիտության ոլորտում դեռևս մշակված չէ քննարկվող հասկացության միասնական սահմանում: Մինչդեռ իրավունքի բոլոր ճյուղերի համար պաշտոնատար անձ հասկացության միասնական սահմանման անհրաժեշտությունն ակնհայտ է: Այդպիսի սահմանումը պետք է լինի ընդհանրական, իսկ անհրաժեշտության դեպքում հասարակական հարաբերությունների առանձին ոլորտներ կարգավորող օրենսդրական ակտերում կարող են մտցվել որոշակի ճշգրտումներ<sup>2</sup>:

ՀՀ քրեական օրենսգրքի տեսանկյունից պետական և տեղական ինքնակառավարման մարմնի ծառայողին պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ համարելու կարևոր չափանիշ է այն, որ տվյալ անձը պետք է օժտված լինի իրավական նշանակություն ունեցող՝ իրավահարաբերություններ առաջացնող, դադարեցնող կամ փոփոխող գործողություններ կատարելու լիազորությամբ: Հետևաբար, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ կարող է համարվել այն պետական ծառայողը,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 126 2021

<sup>1</sup> Снѝ Бахрах Д.Н. Административное право России, М., 2000, ст. 155.  
<sup>2</sup> Снѝ Бахрах Д.Н. Административное право России, ст. 156.

ով իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության անունից պաշտոնական փաստաթղթեր տրամադրել քաղաքացիներին և դրանով իսկ կարգավորել նրանց վարքագիծը:

ՀՀ Սահմանադրական դատարանը, ՍԴՈ-882 որոշմամբ անդրադառնալով հատուկ սուբյեկտ հասկացությանը, արձանագրում է, որ քրեական օրենսգիրքը հանցակազմի ընդհանուր սուբյեկտներից առանձնացնում է հատուկ սուբյեկտներին: Հատուկ սուբյեկտն իր պաշտոնական, ծառայողական կամ մասնագիտական գործունեության բերումով հանրորեն վտանգավոր այնպիսի գործողություն (անգործություն) կատարող անձն է (օր.՝ պաշտոնատար անձը, զինծառայողը, բժիշկը, դատավորը, դատախազը և այլն), որպիսին չեն կարող կատարել այլ անձինք: Այդպիսի անձանց հատուկ սուբյեկտներ ճանաչելը բխում է ոչ թե նրանց սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից, որը կհակասեր օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքին (ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մաս և օրենսգրքի 6-րդ հոդված), այլ, որովհետև հանրորեն վտանգավոր նման արարքները կարող են կատարվել միայն այդ անձանց կողմից<sup>3</sup>:

ՀՀ քրեական օրենսգրքում պաշտոնատար անձանց կողմից կատարվող հանցանքները հիմնականում նախատեսված են 11-րդ բաժնի («Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունները») գլուխներ 29-ում («Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները») և 31-ում («Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները»): Նշված անձանց կողմից կատարվող հանցավոր որոշ արարքներ նախատեսված են նաև ՀՀ քրեական օրենսգրքի այլ բաժիններում և գլուխներում: Այսպես՝ քր. օր.-ի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը պատասխանատվություն է սահմանում պաշտոնական դիրքն օգտագործելով յուրացում կամ վատնում

կատարելու համար, 187-րդ հոդվածով («Օրինական ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը») նախատեսված հանցագործության սուբյեկտն է համապատասխան պաշտոնատար անձը և այլն: Նշված բոլոր արարքները, ըստ էության, պաշտոնական լիազորությունները չարաշահելու կամ անցնելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք նախատեսված են հատուկ հանցակազմերով և ոտնձգում են հասարակական տարբեր հարաբերությունների դեմ:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պաշտոնատար անձինք են՝

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք:

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Մինևույն ժամանակ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների այն ծառայողները, ովքեր զուտ մասնագիտական գործառույթներ են իրականացնում (օրինակ՝ բժիշկը՝ վիրահատություն, հիվանդության ախտորոշում, բուժում իրականացնելիս, դասախոսը՝ դասախոսություն կարդալիս կամ գործնական պարապմունք անցկացնելիս և այլն), քննարկվող հանցագործությունների սուբյեկտ չեն հանդիսանում:

ՀՀ Վճռաբեկ դատարանը 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ԵԷԴ/0040/01/16 որոշմամբ նշել է. «14.(...) Անդրադառնալով այն իրավական հարցին, թե արդյոք բժշկական գործունեության ոլորտի աշխատողը (բուժաշխատողը) կարող է համարվել պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ կաշառք ստանալու

<sup>3</sup> Տե՛ս ՍԴՈ-882, 11 մայիսի, 2010 թ, 7-րդ կետ:

հանցակազմի սուբյեկտ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերջինս զուտ իր մասնագիտական գործառույթներն իրականացնելիս պաշտոնատար անձի կարգավիճակ չունի: Սակայն բժշկական գործունեության ոլորտում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք կարող են քննարկվող կարգավիճակն ունենալ:

Բժշկական գործունեության ոլորտում կազմակերպական-տնօրինչական գործառույթները, մասնավորապես, ներառում են պետական մարմնի, պետական կամ տեղական հիմնարկի (դրա կառուցվածքային ստորաբաժանման) աշխատանքային կոլեկտիվի կամ իր ծառայողական ենթակայության ներքո գտնվող անձանց ղեկավարումը, կադրային կազմի ձևավորման կամ աշխատանքային գործառույթների, ծառայություն անցնելու կարգի սահմանումը, խրախուսման և պարգևատրման միջոցների, կարգապահական տույժերի կիրառումը, ինչպես նաև իրավական նշանակություն ունեցող կամ իրավական հետևանքներ առաջացնող որոշումների ընդունումը (օրինակ՝ անձի աշխատունակության, առողջական վիճակի վերաբերյալ փաստաթուղթ տալը, փորձագիտական հանձնաժողովի կամ զորակոչային հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու հետ կապված լիազորություններ իրականացնելը)<sup>4</sup>:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քր. օր.-ի հոդվածներ 311-ով (կաշառք ստանալը), 311.2-ով (իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելը), 312-ով (կաշառք տալը), 312.2-ով (իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը) և 313-ով (կաշառքի միջնորդությունը) նախատեսված հանցակազմերի իմաստով պաշտոնատար անձինք են նաև. 1) օտարերկրյա պետության՝ տվյալ պետության ներպետական իրավունքին համապատասխան՝ պետական պաշտոնյայի գործառույթներ իրականացնող անձինք, ինչպես նաև օտարերկրյա պետության օրենսդիր մարմնի կամ վարչական լիա-

զորություններ իրականացնող որևէ ներկայացուցչական մարմնի անդամները. 2) միջազգային կամ վերազգային հանրային կազմակերպության կամ մարմնի, որի անդամ է Հայաստանի Հանրապետությունը, պաշտոնյաները կամ այդ կազմակերպության կամ մարմնի կանոնակարգերով նախատեսված դեպքերում պայմանագրերով աշխատողները կամ այլ անձինք, որոնք կատարում են նման պաշտոնյաների կամ աշխատողների կողմից իրականացվող գործառույթներին համապատասխանող գործառույթներ. 3) միջազգային կամ վերազգային կազմակերպության, որի անդամ է Հայաստանի Հանրապետությունը, խորհրդարանական վեհաժողովի կամ նման գործառույթ իրականացնող այլ մարմնի անդամները. 4) միջազգային դատարանի, որի իրավասությունն ընդունել է Հայաստանի Հանրապետությունը, դատական գործառույթներ իրականացնող անդամները կամ պաշտոնյաները. 5) օտարերկրյա պետությունների դատարանների երդվյալ ատենակալները:

Նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրված է, որ հոդվածով սահմանված «պաշտոնատար անձինք» հասկացությունը կիրառելի է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխի համար («Սույն գլխում պաշտոնատար անձինք են՝...»): Սակայն, ինչպես նշվեց, պաշտոնատար անձանց պատասխանատվության միջոցներ են սահմանված նաև ՀՀ քրեական օրենսգրքի այլ գլուխների հոդվածներով, և այդ հոդվածները գործնականում կիրառվում են:

Արդյունքում ստացվում է, որ քննարկվող դեպքերում կիրառվում է օրենքի անալոգիա, այսինքն՝ անալոգիայով կիրառվում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի սահմանումը: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված կարգավորմամբ անընդունելի է համարվում անալոգիայի կիրառումը, մասնավորապես՝ քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպումից հետևում է նաև, որ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ համարվում է այն անձը, ով կազմակերպական-տնօրինչական կամ

<sup>4</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=133945>:

վարչատնտեսական գործառույթներն իրականացնում է ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ համապատասխան լիազորություններն այս անձանց պետք է տրված լինեն օրենքով սահմանված կարգով: Հակառակ դեպքում նշված անձինք պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ չեն հանդիսանա: Դա նշանակում է, որ համապատասխան լիազորությունները, որպես կանոն, պետք է վերապահված լինեն պաշտոնատար անձին միայն գրավոր ձևով: Հակառակ պարագայում հնարավոր չի լինի հստակ հիմքերով անձին դասել պաշտոնատարների շարքը: Այս կանոնից, թերևս, կարող է լինել միայն մեկ բացառություն, կապված զինվորական ծառայության առանձնահատկությունների հետ: Մասնավորապես, զինծառայողին պետ նշանակելու հրամանի գրավոր ձևը ոչ միշտ է պարտադիր<sup>5</sup>:

Հարկ է նշել նաև, որ քննարկվող հանցագործությունների առումով պարտադիր չէ, որպեսզի հանցանքը կատարելու պահին պաշտոնատար անձը ցուցադրի իշխանության արտաքին բաղադրիչները (համազգեստ հագած լինի, վկայական ներկայացնի և այլն): Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է, որ հանցավորը հանդես գա որպես պաշտոնատար անձ, ընկալվի շրջապատի և տուժողի կողմից հենց որպես այդպիսին<sup>6</sup>:

Այս առումով որոշակի բարդություն է առաջացնում այն դեպքերի որակումը, երբ անձը փաստացի իրականացնում է պաշտոնատար անձի պարտականություններ՝ դրա համար օրինական որևէ հիմք չունենալով: Մինչևորհրդային դատական պրակտիկայում, ինչպես նշում է Ա.Վ. Գալախովան, «... ընդունված էր այն մոտեցումը, որ անձը կարող է համարվել պաշտոնեական հանցագործության սուբյեկտ ոչ միայն այն դեպքերում, երբ օրենքով սահմանված կարգով ճանաչվել է որպես պաշտոնատար անձ, այլև, երբ իր գործունեության բնույթով իրականացնում է նման անձին

բնորոշ գործառույթներ»: Նման անձանց շարքին հեղինակը դասում է, օրինակ, հասարակության՝ հասարակական կարգի պահպանության պարտականություններ իրականացնող ներկայացուցիչներին<sup>7</sup>:

Քրեական իրավունքի ներկայիս հայեցակարգում և իրավակիրառ ժամանակակից պրակտիկայում, սակայն, արդարացիորեն ձևավորվել և գործում է հակառակ մոտեցումը, որի համաձայն՝ պաշտոնատար (ուստի և՛ պաշտոնեական հանցագործության սուբյեկտ) կարող է համարվել միայն այն անձը, ով օրենքով սահմանված հիմքերով օժտված է համապատասխան լիազորություններով<sup>8</sup>:

Հարկ է նկատել, որ 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 20-րդ կետով որպես ընդհանուր դրույթ սահմանված է պաշտոնատար անձ հասկացությունը: Մասնավորապես՝

ա. հանրային ծառայող, հանրային պաշտոն զբաղեցնող անձ, պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձ,

բ. այլ պետության հանրային իշխանության ոլորտում, օրենսդիր, գործադիր կամ դատական իշխանության ոլորտում մշտապես, ժամանակավորապես, կամ հատուկ լիազորությամբ պաշտոն զբաղեցնող կամ ծառայություն իրականացնող, կամ այդ կառույցի անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձ կամ իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձ,

գ. միջազգային կամ վերապետական հանրային կազմակերպությունում կամ կառույցում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ պաշտոն զբաղեցնող կամ ծա-

<sup>5</sup> Sեն Квициния А.К. Проблемы ответственности за должностные преступления: Дис... д-ра юрид. наук. Сухуми, 1990, ст. 84.

<sup>6</sup> Sեն Снежко А.С. Превышение должностных полномочий: Дис... канд. юрид. наук. Краснодар, 2004, ст. 101.

<sup>7</sup> Sեն Галахова А.В. О понятии представителя власти // Сборник статей адъюнктов и соискателей. М., 1967, ст. 81.

<sup>8</sup> Sեն ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 785-786:

ռայություն իրականացնող կամ նշված կազմակերպության կամ կառույցի անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձ կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձ,

դ. միջազգային կամ վերպետական միջազգային կազմակերպության ներկայացուցչական մարմնի կամ նման գործառույթ իրականացնող կառույցի ներկայացուցիչ,

ե. միջազգային դատարանում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ պաշտոն զբաղեցնող, կամ ծառայություն իրականացնող, կամ դատարանի անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձ կամ դրա անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձ,

զ. այլ պետության կամ միջազգային դատարանի երդվյալ ատենակալ:

Ստացվում է, որ որպես ընդհանուր դրույթ կիրառված պաշտոնատար անձ հասկացության բովանդակությունը տարածվում է բոլոր այն նորմերում, որոնցում այն կիրառվում է, ինչն առավել արդարացված է:

Սակայն հարկ է նկատել, որ քննարկվող նորմն ունի վերախմբագրման անհրաժեշտություն: Մասնավորապես՝ նորմի ա) ենթակետով որպես պաշտոնատար անձ սահմանվում են և՛ հանրային ծառայողը, և՛ հանրային պաշտոն զբաղեցնող անձը: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները:

Այսինքն՝ հանրային պաշտոնը և հանրային ծառայությունը հարաբերակցվում են այնպես, ինչպես մասը և ամբողջը, հետևաբար՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը հանրային ծառայող է, և քննարկվող նորմում հանրային պաշտոն զբաղեցնող անձին առանձնացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

Բացի այդ, նշված նորմով ամրագրված կարգավորումը թերի է նաև այն տեսանկյունից, որ նախատեսել է այնպիսի սահմանում, որի շրջանակներում չի կարող ընդգրկվել, օրինակ, բժշկական գործունեության ոլորտի այն աշխատողը, ով նշված ոլորտում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ է իրականացնում, և ով կարող է դիտարկվել, օրինակ, որպես կաշառք ստանալու հանցակազմի սուբյեկտ:

Հարկ է նկատել սակայն, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 272-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մասնավոր ոլորտում կաշառք ստանալու համար, և այս հանցակազմի սուբյեկտային կազմի մեջ ի թիվս այլոց նախատեսված է նաև Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության առևտրային կամ այլ կազմակերպության աշխատողը, ով իրավամբ կարող է լինել նաև բժշկական գործունեության ոլորտի աշխատողը, հետևաբար, չնայած այն հանգամանքին, որ նոր օրենսգրքով բժշկական գործունեության ոլորտի աշխատողը պաշտոնատար անձ չի համարվում, սակայն կարող է դիտարկվել որպես մասնավոր ոլորտում կաշառք ստանալու սուբյեկտ:

Բայց խնդիրն ամբողջովին չի լուծվում, քանի որ բժշկական գործունեության ոլորտի աշխատողը նոր կարգավորմամբ արդեն չի կարող դիտարկվել որպես պաշտոնատար անձ, և հետևաբար՝ պետական ծառայության դեմ (նոր օրենսգրքով հանրային ծառայության շահերի դեմ) ուղղված հանցագործությունների սուբյեկտ, որպիսի մոտեցումը, կարծում ենք, արդարացված չէ:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոշարադրյալը, գտնում ենք, որ անհրաժեշտ է քննարկվող նորմը ձևակերպել այնպես, որ այն նախատեսի բժշկական գործունեության ոլորտի աշխատողին որպես հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ դիտարկելու հնարավորությունը և բացառի նույնաբովանդակ հասկացությունների կրկնությունը:



**ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ**

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՓՈՐՁԱԳԵՏԻ ՆԵՐՔԻՆ ՅԱՄՈՉՍՈՒՆՔԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մասնագիտական գրականության մեջ փորձագետի ներքին համոզմունքին վերաբերող հարցը առավել քիչ ուսումնասիրված հիմնախնդիրներից մեկն է: Թերևս, կարելի է փաստել, որ նմանատիպ վերաբերմունքի դրսևորման հիմնական պատճառը, տվյալ հարցի նկատմամբ ցուցաբերած ուշադրության և հատուկ հետաքրքրության (վերաբերմունքի) բացակայությունն է: Ընդամենը պետք է նշել, որ քրեագետ-գիտնականները տվյալ հարցի ուսումնասիրությամբ սկսել են զբաղվել դեռևս 20-րդ դարի 50-ական թվականներից: Այս հարցի շուրջ առաջինն իր տեսակետն է արտահայտել Վ. Պ. Կոլմակովը, որին հաջորդել են՝ Ս. Վ. Ավերյանովան, Վ. Դ. Արսենևը, Ռ. Ս. Բելկինը, Ա. Վ. Կուդրյավցևան, Յու. Կ. Օրլովը, Յա. Մ. Յակովլևը և ուրիշներ: Սակայն, դատական փորձագետի ներքին համոզմունքին վերաբերող առանձին (հատուկ) հետազոտություններ մինչ օրս այդպես էլ չեն իրականացվել:<sup>1</sup>

Փորձագետի ներքին համոզմունքը, հիմնականում, ձևավորվում է այն փաստական տվյալների վրա, որոնք ստացվել են հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ այդպիսի տվյալների գնահատման արդյունքում: Սակայն, փորձագիտական արդյունքների գնահատման ընթացքում, չեն կարող կիրառվել այնպիսի տվյալներ, որոնք դուրս են վերջինիս հատուկ մասնագիտական գիտելիքների շրջանակից: Մինևույն ժամանակ, ներքին համոզմունքի ձևավորման հարցում, կարող են որոշիչ դերակատարություն ունենալ ոչ միայն սեփական հետազոտության արդյունքները, այլև դրանց

ձեռք բերման առանձին հանգամանքները: Փորձագետը պետք է մշտապես կարողանա գնահատել այն մեթոդների արժանահավատությունը, որոնց կիրառման արդյունքում ստացվել են համապատասխան արդյունքները: Այն պետք է հիմնված լինի ոչ միայն սեփական անձի ինքնահամոզման, ինչը համապատասխան փաստերի սակավության պատճառով կարող է հաճախակի հանդիպող երևույթ հանդիսանալ, այլև այս կամ այն հանգամանքի կամ փաստական տվյալի նկատմամբ իրականացված, խորը վերլուծության ու հետազոտության արդյունքում ստացված համոզիչ տվյալների և ինտուիտիվ մտածելակերպի ձևավորման վրա: Այդպիսի մտածելակերպի առկայությունը, երբեմն, մեծ դերակատարություն է ունենում նաև որևէ ստեղծագործական աշխատանքի կազմակերպման հարցում: Այլ կերպ ասած՝ «... *ինտուիցիան բանականության կազմակերպող նախասկիզբն է*»:<sup>2</sup> Սակայն, փորձագիտական եզրակացության մեջ, ինտուիցիան պետք է օգնի ոչ միայն համապատասխան հետևությունները կազմելու, այլև իրականացվող համապատասխան հետազոտությունները ճիշտ կազմակերպելու և առաջադրված խնդիրներին, հատուկ գիտելիքների շրջանակներում, ճիշտ լուծումներ ներկայացնելու համար:

Ընդհանրացնելով ինտուիտիվ մտածելակերպի վերաբերյալ առկա մոտեցումները՝ կարելի է ընդամենը փաստել հետևյալը. ի տարբերություն այլ գործունեության, փորձագետի ինտուիտիվ մտածելակերպը պետք է հիմնված լինի միայն վերջինիս հատուկ գիտելիքների

<sup>1</sup> Տե՛ս. Бушув В.В. Внутреннее убеждение судебного эксперта в уголовном судопроизводстве /Специальность 12.00.09., автореферат: диссертации на соискание ученой степени кандидата юридических наук/, Москва, 2008. ст. 5 - <https://www.dissercat.com/content/vnutrennee-ubezhdenie-sudebnogo-eksperta-v-ugolovnom-sudoproizvodstve/read>:  
<sup>2</sup> Տե՛ս. **Մելանյա Հարությունյան** Ինտուիտիվի և տրամաբանականի փոխհարաբերությունը նոր գիտելիքների ձեռքբերման պրոցեսում /քննարկումներ/, էջ 85 - [http://arar.sci.am/Content/36242/file\\_0.pdf](http://arar.sci.am/Content/36242/file_0.pdf).

վրա:<sup>3</sup> Այն պահը, երբ հավանականությունը վերածվում է վստահության, ձևավորվում է *ներքին համոզմունքը*։<sup>4</sup> Այն պետք է տարածվի ոչ միայն գնահատման ամբողջական, այլև եզրակացության ձևավորման վերջնական ընթացքի վրա՝ դիտարկվելով որպես գնահատման մեթոդ կամ վերջնական արդյունք։ Դա նաև սուբյեկտի վստահությունն է ինչ-որ բանում համոզված լինելու հոգեբանական վիճակի վերաբերյալ։

Փորձագետի ներքին համոզմունքին վերաբերող խնդրի ձևավորումը ՀՀ քրեական դատավարության (այսուհետ՝ ՀՀ ՔԴՕ) մեջ իր վերջնական արտահայտվածությունն ու վճռական նշանակությունն է ստանում փորձագիտական եզրակացության իրավական գնահատման ընթացքում։ Փորձագետի եզրակացության գնահատմանը վերաբերող կոնկրետ խնդրի առնչությամբ, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Արայիկ Օնիկի Խաչատրյանի գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14 որոշման մեջ, որտեղ, մասնավորապես, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«... փորձագետի եզրակացությունը ապացույցների տեսակներից մեկն է և որպես այդպիսին չունի նախապես հաստատված ապացույցի ուժ, իսկ դրա գնահատման նկատմամբ կիրառելի են ապացույցների գնահատման ընդհանուր կանոնները (ապացույցների գնահատման կանոնների վերաբերյալ մանրամասն տե՛ս օրինակ Արարապ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 31-31.3-րդ կետերը)՝ հաշվի առնելով ապացույցի այդ տեսակի առանձնահատկությունները։

Այսպես՝ փորձագետի եզրակացությունը արժանահավատության տեսանկյունից գնահատելիս վարույթ իրականացնող մարմինը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի օրենքով փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջների պահպանվածությունը։ Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (համապատասխան հոդվածների – խմբ.) վերլուծությունից հետևում է, որ փորձագետի եզրակացությունը պետք է բավարար չափով հստակ և հիմնավորված լինի։ Այլ խոսքով՝ փորձագետի եզրակացությունում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները, պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, կատարված հետազոտությունների և հետևությունների միջև պետք է առկա լինի տրամաբանական կապ, բացառվեն իմաստային հակասությունները։ Միայն այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա հասկանալ հետազոտության էությունը և պարզաճ գնահատել դրա արդյունքները»։<sup>5</sup>

ՀՀ վճռաբեկ դատարանն, անդրադառնալով ապացույցների զանգվածում ներառված փորձագիտական եզրակացությունների գնահատման խնդրին, նաև նշել է, որ **փորձագիտական եզրակացությունների գնահատումը պետք է կատարել այնպես, որ ամբողջ եզրակացությունը, այլ ոչ թե այդ եզրակացության որոշակի բաժնում արտացոլված տվյալները, գնահատվեն որպես մեկ ապացույց**։<sup>6</sup> Վերջինս հատկապես առանձնացրել է այն հիմնական չափորոշիչները, որոնք, ապացույցը գնահատելիս, ենթակա են կիրառման **վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության** տեսանկյունից»։<sup>7</sup>

<sup>3</sup> Տե՛ս. «Судебная экспертиза: типичные ошибки» (под ред. Е.Р. Россинской) (“Проспект”, 2012), документ предоставлен КонсультантПлюс - дата сохранения: 23.10.2012, ст. 3-25. <http://sudsovet.ru/content/files/00/0c/64/eo93Eu5fBcW3.pdf>

<sup>4</sup> Տե՛ս. Борлуленков Ю.П. Теоретические основы процессуального познания. - Владимир: ВГПУ, 2006, ст. 82. [http://skspba.ru/wp-content/uploads/2016/12/borulenkov\\_monografiya\\_03-2016.pdf](http://skspba.ru/wp-content/uploads/2016/12/borulenkov_monografiya_03-2016.pdf)

<sup>5</sup> Տե՛ս. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արայիկ Օնիկի Խաչատրյանի վերաբերյալ գործով, 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14 որոշման 16-ից 18-րդ կետերը: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=100079>

<sup>6</sup> Տե՛ս. Ռաֆայել Ավետիսյանի ընդդեմ Սեյրան Վարդանյանի իրավահաջորդներ Արթուր և Անժելա Վարդանյանների թիվ ԿԴ3/0133/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=103183>

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի հուլիսի 17-ի թիվ ԵԴԴ/1284/02/12 քաղաքացիական գործով որոշման 4-րդ կետը: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=103183>

Հեղինակներից՝ Վ.Գ. Ենգիբարյանը, կարծում է, որ փորձագետի եզրակացության գնահատման «չափանիշները» գիտությամբ և պրակտիկայով մշակված այն կողմնորոշիչներն են, որոնց վրա հիմնվելով՝ վարույթն իրականացնող մարմինը ձևավորում է ներքին համոզմունք փորձագետի եզրակացության այս կամ այն տարրի առկայության կամ բացակայության մասին:<sup>8</sup>

Կարելի է փաստել, որ ապացույցների գնահատման հարցում, ներքին համոզմունքը՝ սուբյեկտի լիակատար վստահությունն է ստացված հետևությունների հուսալիության վերաբերյալ:<sup>9</sup> Եթե ճշմարտացի դատողությունը՝ վերջինիս համապատասխանությունն է իրականության հետ, ապա հուսալիությունը՝ հիմնավոր վստահությունը ճշմարտության նկատմամբ:<sup>10</sup>

«...Դատական ճանաչողության գործընթացը եզրափակվում է դատավորի ներքին համոզմունքով, որը հիմնվում է հաստատված փաստերի վրա: Ներքին համոզմունքն անձնական մտավոր երևույթ է, որը չի ենթարկվում իրավական ուղղակի կարգավորմանը: Յուրաքանչյուր ապացույց կոնկրետ գործով որևիցե նշանակություն է ձեռք բերում դատավորի գիտակցությունում գնահատվելուց հետո...»:<sup>11</sup> «... Ներքին համոզումը հիմնված է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ և անմիջական հետազոտման վրա և

ոչ մի դեպքում չի կարող ընկալվել որպես դատարանի կողմից կամայականության դրսևորում...»:<sup>12</sup>

«...Այսպիսով՝ «ներքին համոզմունքը» սուբյեկտիվ-օբյեկտիվ կատեգորիա է: Այն ապացույցների գնահատման իրականացնող սուբյեկտի գիտակցված և ողջամիտ համոզվածությունն է իր իսկ կողմից կայացված որոշման հիմնավորվածության մեջ (սուբյեկտիվ բնույթ): Այդպիսի համոզվածությունը պետք է ձևավորված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում և հիմնվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավասար ապացույցների բավարար համակցությամբ հաստատված փաստերի վրա, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն կձևավորեն նույն համոզվածությունը (օբյեկտիվ բնույթ)...»:<sup>13</sup>

Հոգեբանական տեսանկյունից՝ փորձագետի համոզվածությունը դիտարկվում է որպես ձևավորված վստահության հետ կապված մի իրավիճակ, երբ այն, հիմնված լինելով հատուկ գիտելիքների շրջանակներում իրականացված հետազոտական արդյունքների վրա, արտահայտում է օբյեկտիվ իրականությունը...:<sup>14</sup> Փորձագետի ներքին համոզմունքը՝ «բնագր կամ անպարասխանատու ինտուիցիա չէ. դա օբյեկտիվ հիմքերի վրա ձևավորված գիտակցական և ազատ համոզմունք է, որը թույլ է տա-

<sup>8</sup> Տե՛ս. Վ. Ենգիբարյան Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակության առանձնահատկությունները քրեական դատավարությունում /քրեական դատավարություն և կրիմինալիստիկա/, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդես, ԵՊՀ իրատարակչություն, №1 (28), Երևան, 2019, էջ 51-53: <http://www.yus.am/faculties/Law/banber/Banber2019N1.pdf>

<sup>9</sup> Տե՛ս. **Смирнов А.В.** Уголовный процесс: учебник / А.В. Смирнов, К.Б. Калиновский; под общ. ред. проф. А.В. Смирнова. – 4-е изд., перераб. и доп. – М.: КНОРУС, 2008, ст. 77. [http://lib.maupfib.kg/wp-content/uploads/UGOLOVNY-PROCESS-smirnov\\_kalinovsky.pdf](http://lib.maupfib.kg/wp-content/uploads/UGOLOVNY-PROCESS-smirnov_kalinovsky.pdf)

<sup>10</sup> Տե՛ս Ключевой А.С. Заключение эксперта и заключение специалиста: Сравнительный анализ /НИУ «БелГУ», Юридический институт, Кафедра судебной экспертизы и криминалистики/. Выпускная квалификационная работа обучающейся по специальности 40.05.03 Судебная экспертиза очной формы обучения, Белгород, 2018, ст. 19. <https://nauchkor.ru/uploads/documents/5c1a5cf67966e104f6f85585.pdf>

<sup>11</sup> Տե՛ս. ՀՀ Արդարադատության խորհրդի 2008թ.-ի №**ԱԽ-3-Ո-8** որոշումը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Կարինե Հակոբյանին, Լևոն Գրիգորյանին և ՀՀ վարչական դատարանի դատավոր Լարիսա Սոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը կարճելու մասին: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=43083>

<sup>12</sup> Տե՛ս. ՀՀ Արդարադատության խորհրդի 2011թ.-ի №**ԱԽ-1-Ո-4** որոշումը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ՝ Ա. Խառատյանին, Ն. Տավարացյանին և Դ. Խաչատրյանին կարգապահական պատասխանատվություն ենթարկելու վերաբերյալ: <http://www.irtek.am/views/act.aspx?aid=59006>

<sup>13</sup> Տե՛ս. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արարատ Ավագի Ավագյանի և Վահան Սերյոժայի Սահակյանի վերաբերյալ գործով, 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 28-ից 32-րդ կետերը: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=95718>

<sup>14</sup> Տե՛ս. Правовые и методологические проблемы судебной экспертизы / Сборник научных трудов 10/, Министерство Юстиции СССР, Всесоюзный НИИ судебных экспертиз, ред. кол.: А.И. Винберг /председатель/, Г.П. Прошина, В.Д. Арсеньев и др., М., 1974, ст. 72.

լիս կատարելու միայն մեկ՝ ճշմարիտ հետևություն»:<sup>15</sup> Վերջինիս ձևավորման հիմքն ու գործիքը (մեթոդը) նաև «ողջամիտ դատողությունն» է, որտեղ «ողջամտությունն» ու «ներքին համոզմունքը», հակադրություններ չեն, այլ մեկ ամբողջության մասեր:<sup>16</sup>

Անչափ կարևոր է, հատկապես, ՀՀ ՔԴՕ-ի մեջ «ներքին համոզմունք» եզրույթի, իրավական բնորոշման հարցը. այն կիրառվելով բազմաթիվ քրեադատավարական նորմերում՝ դեռևս չի ստացել իր հստակ օրենսդրական կարգավորումը: Նշված եզրույթին վերաբերող հստակ բնորոշում դժվար է գտնել նաև իրավաբանական բառարաններում կամ հանրագիտարաններում: Ուստի, ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ սույն եզրույթի բնորոշման հետ կապված օրենսդրական բացը, էական խնդիր է նաև իրավական որոշակիության<sup>17</sup> տեսանկյունից: Ինչպես նշված է Դավիթ Ալբերտի Սիմիոյանի վերաբերյալ, ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի ԵԷԴ/0122/01/13 քրեական գործով կայացված որոշման մեջ. «...իրավական որոշակիության չափանիշին բավարարելն առաջին հերթին օրենսդրական կարգավորման խնդիր է, իսկ դատական մեկնաբանումը լրացնող դերակատարություն ունի...»:<sup>18</sup>

Ենթադրվում է, որ «ներքին համոզմունք» եզրույթի իրավական բնորոշումը, որպես կարևոր ու դժվար ընկալվող քրեադատա-

վարական հասկացություն, օրենսդիրն արդեն վաղուց պետք է սահմանած լիներ: Կարելի է ասել, որ իրավաբանական գրականության մեջ, նշված եզրույթի հետ կապված մեկնաբանությունները, նույնիսկ տարբերվող են. դրանք կարող են լինել տարաբնույթ, իսկ երբեմն էլ՝ միմյանց հակասող: Այնուամենայնիվ, սույն հարցի հետ կապված, տեսության մեջ և պրակտիկայում ի հայտ եկող հարցադրումները, հետևյալն են՝ ինչպե՞ս պետք է մեկնաբանվի նշված եզրույթը համապատասխան իրավաբանական բնորոշում պետք է այն ունենա:

«Ներքին համոզմունքը՝ օբյեկտիվ իրականության նկատմամբ ձևավորված սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտման չափանիշն է»:  
Անձնական համոզվածությունը չի կարող հանդես գալ որպես **օբյեկտիվության չափանիշ**: Այսինքն՝ ներքին համոզմունքի վրա հիմնված ապացույցների գնահատումը, քրեական դատավարություն իրականացնող պաշտոնատար անձանց համար, չի կարող որոշակի սխալների կամ բացթողումների իրավունք վերապահել: Այն ենթադրում է, որ համապատասխան սուբյեկտները պետք է պատասխանատվություն կրեն ոչ միայն իրենց սեփական (անձնական) համոզմունքի, այլև իրենց ոչ պատշաճ մասնագիտական այն որակների կամ սխալ գործողությունների համար, որոնք նմանատիպ համոզմունքի ձևավորման պատճառ են հան-

<sup>15</sup> Տե՛ս. Колмаков В.П. О внутреннем убеждении советского судебного эксперта. – В кн.: Вопросы советской криминалистики. М., 1951, ст. 28.

<sup>16</sup> Տե՛ս. Багдасаров Р.В. Принцип состязательности в уголовном процессе России и стран Европейского Союза / Р.В.Багдасаров. – М.: Юрлитинформ, 2008, ст. 174.  
<https://mgimo.ru/upload/iblock/493/49327214e64d8ed355874959f95c0663.pdf>

<sup>17</sup> Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ դիրքորոշումներն ամրագրված են Սահմանադրական դատարանի մի շարք, մասնավորապես, ՍԴՈ-630, ՍԴՈ-753, ՍԴՈ-1270 որոշումներում, որոնցից բխում է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ (ՍԴՈ-1357):

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ, մասնավորապես, որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին: Այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՍԴՈ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի: Իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՍԴՈ-753): Օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՍԴՈ-1176, ՍԴՈ-1449):

<sup>18</sup> Տե՛ս. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Դավիթ Ալբերտի Սիմիոյանի վերաբերյալ գործով, 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0122/01/13 որոշման 17-րդ կետը: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=93898>

դիսացել:<sup>19</sup> Ընդ որում, կարծիք է արտահայտվել նաև այն մասին, որ «ներքին համոզմունք» եզրույթն, որպես այդպիսին, ճիշտ չէ: Խնդիրն այն է, որ համոզմունքի որևէ այլ տեսակ, քան ներքին համոզմունքն է, ուղղակի չի լինում: Հետևաբար, ստացվում է այնպես, որ ներքին համոզմունքի տեսությունը՝ որպես ապացույցի գնահատման չափանիշ, անխուսափելիորեն կրում է *սուբյեկտիվ բնույթ*:<sup>20</sup> Այս առումով՝ փորձագետի ներքին համոզմունքը, որպես այդպիսին, նույնպես սուբյեկտիվ կատեգորիա է: Այն, ըստ էության, փորձագետի վստահությունն է իր իսկ կողմից տրված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ: Դա նաև հոգեբանական-մտավոր գործունեության մի յուրահատուկ իրավիճակ է, որը, տվյալ սուբյեկտի մոտ, ի հայտ է գալիս համապատասխան խնդիրների լուծման վերջնական արդյունքում:

Փորձագետի եզրակացությունն այն միջոցներից մեկն է միայն, որը թույլ է տալիս դատարանին ձևավորելու իր ներքին համոզմունքը՝ օբյեկտիվ իրականության կապակցությամբ: Փորձագիտական եզրակացության գիտական հիմնավորվածությունը փորձագետի հետևությունների այն հիմնական հատկանիշն է, որի հիման վրա դատարանը համոզվում է փորձագետի հավանական ենթադրության ճշմարտացիության մեջ:<sup>21</sup> Այլ կերպ ասած՝ դատական փորձաքննությունը համարվում է այն հիմնական ուղին, որի միջոցով գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստի նվաճումները ներդրվում են դատական պրակտիկայում՝ նպաստելով գործի արդարացի քննությամբ և ճշմարտության բացահայտմանը:<sup>22</sup>

Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակության գնահատման և

ներքին համոզմունքի ձևավորման հարցում, առավել քան էական են համարվում վերջինիս՝ պատշաճ մասնագիտական որակների տիրապետման, ինչպես նաև ձեռնհասության գնահատմանը վերաբերող, խնդիրների քննարկումը: Վարույթն իրականացնող մարմինը խիստ կարևորում է փորձագետի՝ համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում և աշխատանքային փորձ ունենալու, հանգամանքի գնահատումը: Այսինքն՝ ենթադրվում է, որ վարույթն իրականացնող մարմինը, մինչ փորձաքննություն նշանակելու մասին համապատասխան որոշում կայացնելը, պարտադրված է իրականացնելու փորձագետի մասնագիտական որակների և ձեռնհասության գնահատում: Նույնիսկ, համալիր փորձաքննությունների կատարման ընթացքում, պետք է հատուկ ուշադրություն դարձնել դրա կազմմանը մասնակցող փորձագետներից յուրաքանչյուրի անձին՝ հատկապես գնահատելով նրանցից յուրաքանչյուրի իրավասությունը համալիր փորձաքննությանը մասնակցելու առումով:

Ներքին համոզմունքի ձևավորման հարցում, կարևոր նշանակություն է տրվում նաև փորձագիտական եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատմանը, որի առաջին չափանիշը՝ փորձագետի ձեռնհասության և տվյալ գործով նշանակված փորձաքննության առարկայի գնահատումն է: ...Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը գնահատվում է համապատասխան բնագավառում նրա ունեցած հատուկ գիտելիքների բավարարության ստուգմամբ, որը վերջինիս ձեռնհասության բովանդակությունն է կազմում:<sup>23</sup>

Մասնագիտական բացատրական բառա-

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>20</sup> Տե՛ս. Доказывание в уголовном процессе: Учебно-методические материалы / Краснояр. гос. ун-т; Сост. А.С. Барабаш. Красноярск, 1997, էջ 838-839: <http://law.sfu-kras.ru/data/method/e-library-kup/Mono/%D0%9A%D0%BD%D0%B8%D0%B3%D0%B8%20%D0%B4%D0%BB%D1%8F%20%D1%87%D1%82%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F/%D0%B4%D0%BE%D0%BA%D0%B0%D0%B7%D1%8B%D0%B2%D0%B0%D0%BD%D0%B8%D0%B5-5.pdf>

<sup>21</sup> Տե՛ս. **Ենգիբարյան Վ. Գ., Հովսեփյան Ա. Ն.** Դատական փորձաքննությունների տեսական և գործնական արդի հիմնախնդիրները/ Վ. Գ. Ենգիբարյան, Ա. Ն. Հովսեփյան.- Եր.: ՀՀ արդարադատության ակադեմիա, 2020, էջ 150: [http://www.justiceacademy.am/assets/attachments/book\\_part\\_1.pdf](http://www.justiceacademy.am/assets/attachments/book_part_1.pdf)

<sup>22</sup> Տե՛ս **Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, ընդհանուր մաս:** Դասագիրք բուհերի համար: Հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր **Գ.Ս. Ղազինյան:** Երևան, 4-րդ հրատ. փոփոխ. և լրաց., ԵՊՀ հրատ., 2006, էջ 323:

<sup>23</sup> Տե՛ս. **Ենգիբարյան Վ. Գ., Հովսեփյան Ա. Ն.** Դատական փորձաքննությունների տեսական և գործնական արդի հիմնախնդիրները/ Վ. Գ. Ենգիբարյան, Ա. Ն. Հովսեփյան.- Եր.: ՀՀ արդարադատության ակադեմիա, 2020, էջ 121: [http://www.justiceacademy.am/assets/attachments/book\\_part\\_1.pdf](http://www.justiceacademy.am/assets/attachments/book_part_1.pdf)

րանում՝ «փորձագետի ձեռնհասություն» եզրույթի տակ, հասկացվում է որպես իրազեկ անձի ընդունակությունը՝ լուծելու փորձաքննության առարկային առնչվող հարցերը: Այն որոշվում է նրա կրթությամբ, հատուկ պատրաստվածությամբ, նմանատիպ խնդիրներ լուծելու փորձով, էվրիստիկ մտածողության անհատական ընդունակություններով:<sup>24</sup> Կարծում ենք, որ սույն հասկացության բնութագրմանը վերաբերող իրավակարգավորումներում, ՀՀ գործող ՔԴՕ-ի մեջ առկա են որոշակի բացեր. այն լրացնելու նպատակով, առավել նպատակահարմար կլիներ, եթե ՀՀ ՔԴՕ-ի 6-րդ հոդվածով (*Սույն օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները*) նաև սահմանվեր՝ «փորձագետի ձեռնհասություն» եզրույթի, քրեադատավարական սահմանումը:

Այսպիսով՝ ընդհանրացնելով կատարված ուսումնասիրությունների արդյունքները՝ հարկ ենք համարում փաստել, որ փորձագետի ներքին համոզմունքին վերաբերող հարցը, շարունակում է մնալ որպես արդիական նշանակության կարևորագույն հիմնախնդիր:

Միանշանակ է, որ ՀՀ օրենսդրական դաշտում առկա որոշակի բացերը, ինչպես նաև սույն հարցի շուրջ մասնագիտական գրականության մեջ ձևավորված տարաբնույթ մոտեցումները, դեռևս բավարար չեն փորձագետի ներքին համոզմունքին վերաբերող հարցը, իր էության մեջ, ամբողջությամբ պարզաբանված դիտարկելու համար:

Ուստի, ելնելով վերոգրյալից, ինչպես նաև քննարկվող խնդրի կարևորությունից, առաջարկում ենք՝ ՀՀ ՔԴՕ-ի մեջ սահմանել «փորձագետի ներքին համոզմունք» եզրույթի, հետևյալ իրավական բնորոշումը.

*«Փորձագետի ներքին համոզմունքը՝ մասնագիտական հատուկ գիտելիքների վրա հիմնված, բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ հետազոտության ու վերլուծության արդյունքում ձևավորված, փորձագետի գիտակցական և ազատ համոզմունքի արտահայտումն է ստացված տվյալների (հետազոտության արդյունքների) հուսալիության, վստահելիության, ճշմարտացիության և գիտականորեն ամրագրված պատշաճ հիմնավորվածության վերաբերյալ»:*



<sup>24</sup> Տե՛ս. Ավագյան Ա. Բ., Հովսեփյան Ա. Գ., Պետրոսյան Տ. Ռ. «Ռուս-հայերեն քրեագիտական համառոտ բառարան», Եր., «Այբ-Քե», 1993, էջ 56:

**ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**

Փաստաբան, Հայ-Ռուսական համալսարանի հայցորդ

**ՀԱՅՑԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է առաջին ատյանի դատարանն անձի դիմումով կարող է կիրառել *հայցի նախնական ապահովման միջոցներ*, որոնք ուղղված են դիմողի կողմից հարուցվելիք հայցի ապահովմանը:

Հայցի նախնական ապահովման միջոցների հասկացությունը ներդրվել է ՀՀ քաղաքացիական դատավարությունում 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Այսպիսով՝ այն նոր է հայրենական օրենսդրության և դատավարական տեսության համար, ինչով էլ պայմանավորված է այս թեմայի վերաբերյալ հետազոտությունների բացակայությունը:

Հայցի նախնական ապահովման միջոցները տարածված են արտասահմանյան երկրների մեծ մասում: Օրինակ՝ Անգլիայի Քաղաքացիական դատավարության կանոնների 4.1 կետը հնարավորություն է տալիս դիմել դատարան՝ նախքան հայց ներկայացնելը: Այս դեպքում դիմողը պարտավորվում է անհապաղ դատական հայց ներկայացնել կամ դատարանը սահմանում է ժամկետ հայցադիմում ներկայացնելու համար: Նախնական միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը պետք է հիմնավորված լինեն այդ միջոցների կիրառման հրատապությամբ, անհետաձգելիությամբ կամ արդարադատության շահերից ելնելով<sup>1</sup>:

Անգլիայի դատական պրակտիկային ամենահայտնի արգելանքներից մեկը Մարևայի հրահանգն է, որի անունը գալիս է 1975-ի *Mareva Compania Naviera SA v. v. International Bulk carriers SA* գործով հայտնի դարձած նավի անունից, և արտահայտում է պատասխանողին

իր ակտիվները օգտագործելուն ուղղված գործողություններ կատարելուն արգելելը<sup>2</sup>: Ամերիկյան օրենսդրությանը ևս հայտնի են նախնական հայցի ապահովման միջոցները, որոնք հիմնականում արգելանքներ կիրառելու միջոցով են արտահայտվում<sup>3</sup>: Ֆրանսիայի օրենսդրությունը ևս նախատեսում է հայցի նախնական ապահովման միջոցների համակարգ, սակայն դրանց կիրառման համար կարևոր նախապայման է համարում ծայրահեղ անհրաժեշտությունը: Հայցի նախնական ապահովման միջոցները հայտնի են նաև գերմանական օրենսդրությանը (*der einstweilige Rechtsschutz* կամ *vorlaeufliger Rechtsschutz*)<sup>4</sup>:

Մինչ ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի ընդունումը, դատավարագիտության տեսության մեջ գերակշռում էր այն տեսակետը, համաձայն որի, դատավարական իրավահարաբերությունները սկսվում են դատարանի կողմից հայցադիմումի կամ դիմումի ընդունման պահից: Նախկինում գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հայցի ապահովման ինստիտուտի հատկանիշներից գլխավորը արդեն իսկ ներկայացված հայցի համար կիրառվող ապահովման միջոցներն էին: Հայցվորի նյութաիրավական պահանջը պատասխանողի հանդեպ կարող էր գոյություն ունենալ հայցադիմում ներկայացնելուց առաջ, սակայն հայցվորի իրավունքը, իր նյութաիրավական պահանջի հարկադիր կատարման վերաբերյալ, առաջանում էր միայն հայցադիմումը դատարանի կողմից ընդունվելու պահից հետո: Հայցային վարույթը սկսվում էր միայն հայցադիմումը դատարան ներկայացնելու պահից, և ապահովել կարելի էր միայն արդեն իսկ դատարան ներ-

<sup>1</sup> Տե՛ս **Селькова А.А.** Институт обеспечительных мер в процессуальном законодательстве России и Англии: сравнительно-правовой аспект. Дисс... канд.юрид.наук. Екатеринбург. 2018. ст. 200.  
<sup>2</sup> Տե՛ս *Mareva Compania Naviera SA v International Bulkcarriers SA The Mareva* //URL: <http://www.uniset.ca/other/cs4/19801AER213.html>.  
<sup>3</sup> Տե՛ս **Павлова Н.В.** Предварительные обеспечительные меры в международном гражданском процессе: дис... канд. юрид. наук. М., 2002. ст. 80-89.  
<sup>4</sup> Տե՛ս *Dunkl H., Moeller D. Handbuch des vorlaeufigen Rechtsschutzes. Muenchen, 1999. Մաս А: 154 պարբ.:*

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 126 2021

կայացված հայրը: Ներկայումս գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածը թույլ է տալիս առաջին ատյանի դատարանին՝ անձի դիմումով, կիրառել հայցի նախնական ապահովման միջոցներ, որոնք ուղղված են դիմողի կողմից հարուցվելիք հայցի ապահովմանը: Այսպիսով՝ այս հոդվածի տրամաբանությամբ քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունները տվյալ պարագայում սկսվում են հայցադիմումը ներկայացնելուց առաջ, հետևապես կարելի է տարբերակել հայցի ապահովման միջոցների երկու տեսակ՝ *հայցի նախնական ապահովման միջոցներ* և *հայցի ապահովման միջոցներ*:

Հայցի նախնական ապահովման միջոցների հաջորդ հատկությունը դրանց կիրառման անսպասելիությունն է, ինչն էլ, ըստ Վ.Յարկովի, դրանց արդյունավետությունն է<sup>5</sup>: Երբ հայցի ապահովման միջոցները կիրառվում են հայց հարուցելուց հետո, դրանք որոշակիորեն կանխատեսելի են դառնում անձի համար, սակայն հայց հարուցելուց առաջ այն հնարավոր չէ կանխատեսել, ինչի արդյունքում անձը չի կարող ձեռնարկել որևէ գործողություն՝ ուղղված իր գույքը թաքցնելուն կամ դատարանի հետագա վճռի կատարումը անհնարին դարձնելուն: Մ.Ա. Ռոժկովան տարբերակում է հայցի նախնական ապահովման միջոցների ևս մեկ հատկություն՝ այն է, այդ միջոցների կիրառման անհետաձգելիությունը<sup>6</sup>:

Ուսումնասիրելով հայցի նախնական ապահովման միջոցների հասկացությունը՝ քաղաքացիական դատավարության մեջ կարելի է տալ հետևյալ բնորոշումը. *հայցի նախնական ապահովման միջոցները անձի դիմումով առաջին ատյանի դատարանի կողմից կիրառվող ապահովման միջոցներ են, որոնք ուղղված են դիմողի շահերի պաշտպանությանը՝ հայց ներկայացնելուց առաջ*:

Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումով, ի տարբերություն հայցի ապահովման միջնորդության, կարող է հանդես գալ միայն հետագա-

յում հարուցվող գործով հայցվորը: Այսպիսով՝ պատասխանողը և երրորդ անձինք չեն կարող ներկայացնել հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմում, քանի որ այն գործով վարույթը, որով իրենք հանդես կգան որպես գործին մասնակցող անձ, դեռևս չի սկսվել և մինչև հայցվորի կողմից համապատասխան հայցի ներկայացումը իրենք չեն կարող հանդես գալ որևէ դիրքորոշմամբ:

Հայցի նախնական ապահովման միջոցները կարող են կիրառվել հետագայում ներկայացվող հայցով ոչ միայն պատասխանողի, այլ նաև այլ գործին մասնակցող անձանց հանդեպ: Օրինակ՝ հողամասի սեփականատիրոջ խախտված իրավունքների պաշտպանության ուղղված հայցով՝ հայցի նախնական ապահովման միջոցներ կարող են կիրառվել ոչ միայն հողամասի վարձակալի կամ սեփականատիրոջ հանդեպ, այլ նաև կառուցապատողի, ով իրականացնում է այդ հողամասի վրա կառուցապատման աշխատանքներ:

Անհրաժեշտ է նշել, որ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը դատարանի կողմից պետք է հանգեցնի հայցի ապահովման ինստիտուտի դատավարական նպատակներին: Այսինքն՝ անկախ այն բանից, որ հայցադիմումը դեռևս դատարան ներկայացված չէ, հայցի նախնական ապահովման միջոցների ընդունումը պետք է երաշխավորի դիմումատուի, նյութաիրավական պահանջի բավարարման դեպքում, դատական ակտի փաստացի կատարումը, կամ կանխարգելի վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխությունը, կամ անձին էական վնաս հասցնելը: Ուստի, գտնում ենք, որ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի տեղեկատվություն այդ միջոցների կիրառման անհրաժեշտության մասին, սակայն այդ հիմնավորումների վերաբերյալ ապացույցներ ներկայացնելը չպետք է լինի պարտադիր: Այսպիսով՝ անհրաժեշտ ենք համարում, ՀՀ քաղաքացիական դատա-

<sup>5</sup> Стн Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации (постатейный) (3-е издание, переработанное и дополненное) / под ред. **В.В. Яркова**. М.: Инфотропик Медиа, 2011. // СПС “Консультант Плюс” (10.10.2019):

<sup>6</sup> Стн **Новоселова Л.А., Рожкова М.А.** Интеллектуальная собственность: некоторые аспекты правового регулирования: монография. М.: Норма, ИНФРА-М, 2014 // СПС “Консультант Плюс” (10.10.2019).



վարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել, և որպես հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումի բովանդակությանը ներկայացվող պահանջ ավելացնել *հիմնավորումներ ապահովման նպատակի մասին*, որով կարելի կլինի պարզել, որ հարուցվելիք հայցի ապահովումը համապատասխանում է հայցի ապահովման ինստիտուտի դատավարական նպատակներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ ինչպես հայցի ապահովման միջոցները, այնպես էլ հայցի նախնական ապահովման միջոցները կարող են կիրառվել միայն առաջին ատյանի դատարանում: Հոդվածով սահմանված են նաև հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումի բովանդակության պահանջները:

Գտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասը, որով սահմանված են հայցի նախնական ապահովման միջոցներ ներկայացնելու դիմումի պահանջները, թերի են: Հնարավոր է, որ օրենսդիրը ենթադրել է այս հոդվածի ավելի լայն մեկնաբանում կիրառողի կողմից, քանի որ օրենսգրքում սահմանված է, որ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումն իրականացվում է հայցի ապահովման մասին սահմանված ընդհանուր կանոններով՝ հայցի նախնական ապահովման միջոցների առանձնահատկությունների հաշվառմամբ, այսինքն՝ այն պահանջները, որոնք սահմանված են հայցի ապահովման միջոցների կիրառման համար, պետք է պահպանվեն նաև հարուցվելիք հայցի ապահովման համար: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ օրենսդիրի նման մոտեցումը չի կարող արդարացվել: Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է դատարան՝ նախքան հայցադիմումի ներկայացումը, այլ ոչ թե հետո, հետևաբար, օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները բավարար չեն հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելու համար: Առկա բացը շտկելու նպատակով՝

առաջարկում ենք 137-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել և ձևակերպել հետևյալ կերպ. *հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները. 1) դատարանի անվանումը, որտեղ ներկայացվում է դիմումը. 2) դիմողի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից), դիմող քաղաքացու անձնագրային տվյալները, դիմող իրավաբանական անձի պետական գրանցման համարը, նրա ներկայացուցչի անունը, անձնագրային տվյալները, իսկ եթե հայցը ներկայացրել է դրա իրավունքն ունեցող պաշտոնատար անձը՝ նաև այդ անձի անունը, պաշտոնը. 3) պարտապանի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն. 4) հարուցվելիք հայցի առարկան, որի կապակցությամբ պետք է կիրառվի հայցի նախնական ապահովում. 5) տեղեկություններ՝ դիմումում որպես պարտապան նշված անձի նկատմամբ դիմողի պահանջի հիմքերի վերաբերյալ. 6) հիմնավորումներ՝ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման իրավական նպատակի մասին 7) հիմնավորումներ՝ հայցի նախնական ապահովման միջոցի անհապաղ ընդունման մասին. 8) նշում՝ հայցի ապահովման միջոցի մասին: Գործող ՀՀ քաղ. դատ. օր. 137-րդ հոդվածի 4-րդ մասը ներառում է միայն 1-4 և 6-րդ կետով առաջադրված պահանջները:*

Պետք է նշել, որ հայցի նախնական ապահովման միջոցները կարող են ներկայացվել ինչպես հետագայում՝ գույքային պահանջով հայց ներկայացնելու համար, այնպես էլ՝ ոչ գույքային: Օրենսդիրի այսպիսի մոտեցումը գտնում ենք հիմնավոր, քանի որ ոչ նյութական իրավունքների պաշտպանության համար ևս կարող է անհրաժեշտ լինել կիրառել հայցի նախնական ապահովման միջոցներ:

Հայցի նախնական ապահովման միջոցների վերաբերյալ դիմում ներկայացնելու համար գործում է ընդդատության հատուկ կանոն. դիմումը ներկայացվում է դիմողի հաշվառման կամ գտնվելու վայրի դատարան: Օրենսդիրի այսպիսի մոտեցումը գտնում ենք հիմնավոր, քանի որ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը կրում է անհապաղ բնույթ,

իսկ ներկայացնել դիմում՝ գործով հետագայում որպես պատասխանող կամ երրորդ անձ հանդես եկող անձի բնակության վայրի դատարան, կարող է ձգձգել գործընթացը, ինչի արդյունքում իմաստազուրկ կդառնա հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը:

Հայցի նախնական ապահովման միջոցները, ինչպես և հայցի ապահովման միջոցները, պետք է համաչափ լինեն հետագայում ներկայացվող հայցապահանջին: Գտնում ենք, որ համաչափությունը գնահատելիս դատարանները պետք է ղեկավարվեն հետևյալ չափանիշով՝ ապահովված պահանջի չափը չի կարող լինել ավելի փոքր, քան հակառակ կողմի համար առաջացող հնարավոր կորուստների չափը: Ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ համաչափության սկզբունքը բաղկացած է երեք տարրերից՝ պիտանիություն, անհրաժեշտություն և չափավորություն: Ըստ այդմ՝ կոնկրետ պահանջի ապահովման նպատակով կարող են կիրառվել բացառապես այն ապահովման միջոցները, որոնք պիտանի, անհրաժեշտ և բավարար (չափավոր) են՝ կայացվելիք դատական ակտի կատարումը երաշխավորելու կամ իրավատիրոջն անդառնալի վնաս պատճառելու հավանականությունը բացառելու համար: Համաչափության սկզբունքի այն պահանջը, համաձայն որի, հետապնդվող նպատակին հասնելու համար գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, նշանակում է, որ իր հայեցողությանը վերապահված միջոցներից դատարանը պետք է ընտրի այն միջոցը, որով կարող է հասնել այդ նպատակին: Եթե պիտանի միջոցները մեկից ավելի են, ապա դրանցից պետք է ընտրվի տվյալ նպատակին հասնելու համար առավել անհրաժեշտը, իսկ պիտանի և անհրաժեշտ միջոցներից այն միջոցը, որը առավել նվազ ձևով միջամտելով անձի իրավունքներին, այդուհանդերձ, թույլ է տալիս առավելագույնս հասնել հետապնդվող նպատակին: Չափավորությունը ենթադրում է, որ անհրաժեշտ և պիտանի միջոցը, միևնույն ժամանակ, պետք է ապահովի ողջամիտ հավասարակշռություն՝ ձեռնարկվող միջամտության և հետապնդվող նպատակի միջև<sup>7</sup>:

Այսպիսով՝ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումը դատարանի կողմից քննության առնելու համար, պարտադիր վավերապայման է դիմողի կողմից հարուցվելիք հայցի հայցագնի չափով ապահովող գումարը դատարանի դեպոզիտ վճարելը: Օրենսդիրի այս պահանջը գտնում ենք հիմնավոր, քանի որ դատարանը, կիրառելով հայցի նախնական ապահովման միջոցներ, դեռևս վստահ չէ, որ առկա է իրավունքի որևէ խախտում հայցվորի հանդեպ: Դատարանը, չտիրապետելով գործին վերաբերող ամբողջական տեղեկատվության, չի կարող կանխատեսել հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման հետևանքները, ուստի անհրաժեշտ է, որպեսզի հակառակ դատավարական կողմի բոլոր ռիսկերը զսպված լինեն:

Հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման միջազգայնորեն ընդունված ընդհանուր մոտեցումը այնպիսին է, որ դատարանի կողմից հետագայում սահմանվում է ողջամիտ ժամկետ՝ վեճի վերաբերյալ հայց ներկայացնելու համար<sup>8</sup>: Եթե դատարանը հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումի վերադարձման հիմքեր չի գտնում, ապա առանց դատական նիստ հրավիրելու՝ եռօրյա ժամկետում, որոշում է կայացնում դիմումը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ: Նշված սեղմ ժամկետում դատարանի կողմից որոշում կայացնելը կապված է հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման այն պայմանի հետ, որը իրավաբանական գրականության մեջ հայտնի է որպես *periculum in mora* (դանդաղումը վտանգավոր է): Հայցի ապահովման միջոցները կրում են հրատապ բնույթ նույնիսկ այն ժամանակ, երբ ապահովում են արդեն իսկ հարուցված հայցը, իսկ այն դեպքում, երբ ուղղված են դեռևս չներկայացված հայցի ապահովմանը, առավել ևս պետք է կատարվեն շատ արագ: Ծայրահեղ արագության անհրաժեշտության մասին խոսում է արդեն իսկ այն փաստը, որ դեռևս հնարավորության չկա հայց ներկայացնելու, սակայն անհրաժեշտություն է առաջացել կիրառել հայցի ապահովման միջոց: Ներկայիս

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015 թ. որոշումը:

<sup>8</sup> Տե՛ս **Павлова И. В.** Предварительные обеспечительные меры в международном гражданском процессе. Дисс... канд. юрид. наук. М., 2002. ст. 100.

գործող քաղաքացիական դատավարությանը չի նախատեսում periculum in mora որպես հայցի նախնական ապահովման միջոցների դիմումի բավարարման պայման, սակայն այդպիսի կիրառման արագության անհրաժեշտության բացակայության դեպքում՝ կկորեր հայցի նախնական ապահովման միջոցների իմաստը: Այսպիսով՝ «periculum in mora»-ն չլինելով հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ դիմումի բավարարման պայման՝ այդպիսին փաստացի հանդիսանում է: Այս իսկ պատճառով, սույն աշխատանքում, առաջարկել ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել ևս մեկ դրույթով, այն է՝ հիմնավորումներ հայցի նախնական ապահովման միջոցների անհապաղ կիրառման անհրաժեշտության վերաբերյալ:

Հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումն իրականացվում է հայցի ապահովման միջոցների կիրառման համար սահմանված կանոններով (ՀՀ քաղ. դատ. օր 137-րդ հոդված): Քանի որ, հայցի ապահովման միջոցները կիրառվում են առանց դատական նիստ հրավիրելու, կարող ենք փաստել, որ հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ հարցը, ևս իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու և առանց կողմերին ծանուցելու, այսինքն ex parte (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 6-րդ մաս): Այս ընթացակարգը նախատեսված է դիմողի իրավունքների ամբողջական պաշտպանությունը երաշխավորելու համար: Տվյալ պարագայում հակառակ դատավարական կողմին ծանուցելը կարող է հանգեցնել նրան, որ վերջինս կարող է միջոցներ ձեռնարկել վեճի առարկա հանդիսացող գույքը կամ այլ իր ակտիվները թաքցնելու համար, այսինքն անել այն, ինչը փորձում է կանխել դիմողը:

Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումը քննարկելու արդյունքում, ինչպես և հայցի ապահովման միջոցների պարագայում, դատարանը կարող է այն մերժել (ՀՀ քաղ. դատ. օր 131-րդ հոդվածի 4-րդ մաս): Ինչպես և հայցի ապահովման

միջոցության մերժման պարագայում, այդպես էլ հայցի նախնական ապահովման միջոցների միջոցության դեպքում, այն կարող է մերժվել, երբ բացակայում են այդպիսի միջոցների կիրառման հիմքերը: Օրինակ՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ՍԴ/0531/02/18 քաղաքացիական գործով հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ հայցի ապահովման միջոցը նույնաբովանդակ է եղել ներկայացվող հայցի առարկայի հետ, հետևաբար հայցի ապահովման միջոցի կիրառումը կարող էր հանգեցնել ներկայացվելիք հայցի պահանջի փաստացի կատարման, ինչը անթույլատրելի է<sup>9</sup>:

Քանի որ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը կարգավորող ՀՀ քաղ. դատ. օր.-ի 137-րդ հոդվածը չի պարունակում որևէ դրույթ, որը կվերաբերեր հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ ներկայացված միջոցության մերժմանը, ինչը կարող է հանգեցնել իրավակիրառողների մոտ տարակարծությունների առաջացման, ուստի, գտնում ենք, որ այդ հոդվածը պետք է լրացնելով հետևյալ նորմով՝ *Հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջոցությունը լրիվ կամ մասնակի մերժվում է, եթե. 1. բացակայում են հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու հիմքերը, 2. հայցի ապահովման միջոցը համաչափ չէ ներկայացված պահանջին և /կամ հայցի ապահովմամբ հետապնդվող նպատակին:*

Անդրադառնանք նաև հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման հետևանքով անձին պատճառված վնասների հարցին: Համաձայն գործող օրենսդրության՝ անձը, որի դեմ կիրառվել է հայցի նախնական ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի նախնական ապահովման միջոց պահանջած անձի՝ նախնական ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե սահմանված ժամկետում չի ներկայացվել հայցադիմում այն պահանջով, որի կապակցությամբ կիրառվել է նախնական ապահովման

<sup>9</sup> Տե՛ս Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՍԴ/0531/02/18 քաղաքացիական գործի նյութեր:

միջոց, կամ ներկայացված հայցը մերժվել է, թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ ցանկացած անձ, ում նկատմամբ կիրառվել են հայցի նախնական ապահովման միջոցներ, կարող է դիմել իր կրած վնասների հատուցման համար: Այսպիսի հայց ներկայացնելու իրավունք կարող է ունենալ թե՛ պատասխանողը, թե՛ երրորդ անձը, ում հանդեպ ձեռնարկվել են հայցի նախնական ապահովման միջոցներ:

Սույն հետազոտության համար հետաքրքրություն է ներկայացնում նաև հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման ուսումնասիրությունը ապօրինի գույքի բռնագանձման վարույթում, որն ունի իր մի շարք առանձնահատկությունները: Այսպես՝ նշված վարույթի շրջանակներում դիմողը ազատված է պետական տուրքի, ինչպես նաև հնարավոր վնասների հատուցումն ապահովող գումարը դատարանի դեպոզիտ վճարելու պարտականությունից: Տվյալ գործերի շրջանակում թույլատրվում է հայցի առարկայի և հայցի նախնական ապահովման դիմումի առարկայի մասնակի կամ ամբողջական համընկնումը, ինչպես նաև նախատեսվում է հայցադիմում ներկայացնելու համար ավելի երկար ժամկետ, քան

նախատեսված է ՀՀ քաղ. դատ. օր.-ի 137-րդ հոդվածի 9-րդ մասով, այն է 6 ամիս: Դիմողի առնչությամբ, տվյալ պարագայում, չեն կարող կիրառվել հակընդդեմ ապահովման վերաբերյալ ՀՀ քաղ. դատ. օր.-ի նորմերը: Հայցի նախնական ապահովման միջոցները ՀՀ քաղ. դատ. օր.-ի 134-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից բացի, կարող են լրիվ կամ մասնակի վերացվել այն անձի դիմումի հիման վրա, որի գույքի նկատմամբ կիրառվել է ապահովման միջոցը, եթե նա հիմնավորում է, որ գույքի մի մասն արգելանքից ազատելն անհրաժեշտ է իր փաստաբանի ծախսերը կամ իր կամ իր խնամքի տակ գտնվող անձանց ապրուստի ողջամիտ ծախսերը հոգալու կամ ավիմենտի վճարման կամ կյանքին առողջությանը պատճառված վնասների հատուցումներ կատարելու համար:

Ամբողջացնելով վերոգրյալը՝ գալիս ենք հետևյալ եզրահանգման. հայցի նախնական ապահովման միջոցները Հայաստանի Հանրապետության համար հանդիսանում է նոր դատավարական կատեգորիա, որի իրավական նպատակը ևս գործով կայացվող վերջնական դատական ակտի փաստացի կատարման երաշխավորումն է, սակայն ի տարբերություն հայցի ապահովման միջոցների հայցի նախնական ապահովման միջոցները կիրառվում են նախքան հայց հարուցելը:



**ԷԴԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ԵՀ, Իրավագիտության ամբիոն, ասպիրանտ

**ՄԱՍՆԱՎՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

Տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի նկատմամբ գիտական և գործնական ընկալումներն, առաջին հերթին, արտահայտվում են հանրային (պետական և տեղական ինքնակառավարման) մարմիններից տեղեկատվություն ստանալու համատեքստում, մինչդեռ առնվազն անլուրջ է համարել, որ մարդու համար կարևոր ու կենսական համարվող տեղեկատվության տնօրինող կարող են հանդիսանալ միայն հանրային մարմինները: Հետևաբար հարց է առաջանում՝ որո՞նք են տեղեկատվության այլ տնօրինողների նկատմամբ (սույն դեպքում՝ մասնավոր մարմինների) տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի կիրարկման իրավական սահմանները:

Ռուս իրավագետ Բաչիլոն տեղեկատվական իրավահարաբերու թյունների սուբյեկտերին բաժանում է երկու մասի՝ ակտիվ և պասիվ: Ըստ նրա՝ ակտիվ են համարվում այն սուբյեկտները, որոնք իրավունք ունեն տեղեկատվություն ստանալ, իսկ պասիվները, որոնք պարտավոր են իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկությունը տրամադրել<sup>1</sup>: Կարող ենք փաստել, որ ՀՀ-ում բոլոր տեսակի սուբյեկտները համարվում են տեղեկատվության ազատության ակտիվ սուբյեկտներ, մինչդեռ պասիվ սուբյեկտի շրջանակն այդքան էլ հստակ չէ: Անվիճելի է, որ դրա մեջ են մտնում, առաջին հերթին, հանրային մարմինները, իսկ մասնավոր մարմինների տեղեկատվության տրամադրման պարտականություն կրող (որպես պասիվ) մարմինների հարցը հստակ կարգավորված չէ:

Ինդրո առարկայի վերաբերյալ տեսական ուսումնասիրությունների գերակշիռ մասը ևս տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի շրջանակն անցկացնում է հանրային մարմինների սահմանով: Ն. Այվազյանը, ներկայացնելով տեղեկատվության ազատության իրավունքի նշանակությունը, գրում է, որ պետության քաղաքացիները՝ հասարակության անդամները, պետք է տեղյակ լինեն, թե ինչով են զբաղված պետական մարմինները, ինչ միջոցներ են ձեռնարկում հասարակության հետ առնչվող խնդիրները կարգավորելու և իրենց (քաղաքացիների) իրավունքներն ու ազատությունները իրականացնելու ուղղությամբ<sup>2</sup>: Ըստ Գ. Հարությունյանի՝ քաղաքակրթության բարձրագույն աստիճանին հասնում է այն հասարակությունը և պետությունը, որը տնօրինում է ամենից որակով տեղեկույթին, մեծ ծավալով և արագ յուրացնում է այն՝ արդյունավետ կերպով օգտագործելով համամարդկային նպատակների իրականացման համար<sup>3</sup>: Միևնույն ժամանակ անհերքելի է, որ հասարակությունը հիմնավոր և ողջամիտ հետաքրքրություն (եթե ոչ անհրաժեշտություն) ունի նաև մասնավոր մարմինների տնօրինման ներքո գտնվող տեղեկատվության նկատմամբ, այն էլ ժամանակակից դարաշրջանում, երբ մասնավոր ոլորտի սուբյեկտների հետ քաղաքացին երբեմն ավելի հաճախ է իրավահարաբերությունների մեջ մտնում, քան պետական մարմինների հետ:

Պահպանողական տեսակետը, համաձայն որի, պետական մարմինների ուժեղ իշխանության պայմաններում մարդու իրավունք-

<sup>1</sup> Տե՛ս “Информационное право: учебник для магистров”, И. Л. Бачило. 2-е изд., перераб. и доп. М.: Издательство Юрайт, 2011. Серия: Магистр, ст. 54.  
<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք», Վ. Այվազյան և ուրիշներ, Եր.: ԵՊՀ հրատարակչություն, 2016թ., էջ 288:  
<sup>3</sup> Տե՛ս «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ», ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.- Եր.: «Իրավունք», 2010, էջ 308:

ների պաշտպանության ուղիղ պարտականություն չի կարող դրվել մասնավոր մարմինների վրա, երկար ժամանակ գերիշխում է մարդու իրավունքների միջազգային պաշտպանության ոլորտում: Այս տեսակետի համաձայն՝ մասնավոր մարմինները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրենց ունեցած դերի համար կարող են պատասխանատվություն կրել միայն պետության միջոցով: Մինչդեռ վերջին տարիներին նկատվում է նման տեսական մոտեցումների փոփոխություն, որը պայմանավորված է մասնավոր մարմինների՝ տնտեսության ու հանրային նշանակություն ունեցող գործառույթների աճով: Պետական մարմինները ներկայումս իրենց գործառույթները հնարավորինս չափ ուղղում են ապակենտրոնացման՝ դրանք պատվիրակելով մասնավոր մարմիններին<sup>4</sup>: Այս երևույթը Լյուիսն անվանում է «կառավարության մասնավոր աշխարհ»<sup>5</sup>:

Դեռևս 2004թ.-ին Դենվուդ Չիրվան նշում էր, որ միայն պետական մարմնի գործողությունները ներկա դարաշրջանում բավարար չեն մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու համար: Օրինակ՝ մարդու առողջապահական իրավունքների ապահովումը կախված չէ միայն պետական մարմնի որոշումներից. դրանում մեծ դերակատարում ունեն նաև բժշկական մասնավոր հաստատությունները, նրանց որոշումներն ու գործողությունները: Նմանօրինակ դերակատարում ու նշանակություն ունեն նաև բանկերը, ֆինանսական ընկերությունները, մասնավոր ոլորտի այնպիսի ծառայությունների մատուցմամբ զբաղվող ընկերություններ, ինչպիսիք են՝ ջրի, էլեկտրաէներգիայի, կապի, կրթության և այլ ոլորտում ծառայությունների մատուցմամբ զբաղվող մասնավոր ընկերությունները: Վերջիններիս որոշումներով, որդեգրած քաղաքականությամբ ու գործողություններով է հաճախ պայմանավորվում մարդու իրավունքների

պաշտպանության արդյունավետ ապահովումը<sup>6</sup>:

Քննարկվող թեմայի հետ կապված իրավա-հարաբերությունները ՀՀ-ում կարգավորվում են Սահմանադրությամբ և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ ՏԱ օրենք): ՀՀ Սահմանադրությունը տեղեկատվության ազատության կարգավորմանը վերաբերող երկու հոդված է ներառում՝ 42-րդ և 51-րդ հոդվածները, որոնցից առաջինի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի (...) տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն*: Իսկ մյուսը սահմանում է՝ *յուրաքանչյուր ոք ունի պեղական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք*: Ինչպես նկատում ենք, վերոգրյալ հոդվածներից երկրորդը՝ 51-րդ հոդվածը, վերաբերում է տեղեկատվության կոնկրետ տնօրինողի՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկատվության ստացման իրավահարաբերություններին, ուստի այս հոդվածը չի ընդգրկվում քննարկվող թեմայի հետաքրքրության շրջանակում: Ինչ վերաբերում է 42-րդ հոդվածին, ապա այն, հանդիսանալով ընդհանուր տեղեկատվության ազատության իրավունքի երաշխավորման հիմք, ճանաչելով անձի տեղեկատվության ազատության իրավունքը՝ չի սահմանափակում տեղեկատվության ստացման աղբյուրները:

Հաջորդիվ կարևոր է անդրադառնալ ՏԱ օրենքին, որի 1-ին հոդվածի համաձայն՝ ՏԱ օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնա-

<sup>4</sup> Տե՛ս «Journal of Alternative Perspectives in the Social Sciences (2010) Volume 2, No 1. Exclusion of Private Sector from Freedom of Information Laws: Implications from a Human Rights Perspective», Mazhar Siraj, Institute of Social and Policy Sciences, Islamabad, Pakistan, 2010, p. 214. <https://bit.ly/3gMG4hs> [վերջին այցելություն՝ 14.06.2021թ.]

<sup>5</sup> Տե՛ս «Law and Governance: Cavendish Publishing Limited», Lewis, N. Douglas, London, UK, 2001, p. 111 <https://bit.ly/3xwjnVA> [վերջին այցելություն՝ 15.06.2021թ.]

<sup>6</sup> Տե՛ս «The Doctrine of State Responsibility as a Potential Means of Holding Private Actors Accountable for Human Rights», Danwood Mzikenge Chirwa, Melbourne Journal of International Law, Cape Town, South Africa, 2004, p. 2. <https://bit.ly/3xvPMeY> [վերջին այցելություն՝ 15.06.2021թ.]

տար անձանց վրա: Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հանրային նշանակության կազմակերպություն է համարվում ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունը: Այսինքն՝ ՏԱ օրենքը տեղեկատվություն տրամադրելու պարտականություն է դնում մասնավոր մարմինների միայն մի մասի վրա՝ հաշվի առնելով դրանց առանձնահատուկ հանրային նշանակությունը (օրինակ՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն, «ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՂՊՈՒԼԻՏԵՆ» ՓԲԸ-ն և այլն):

Վերոնշյալ տեսական մոտեցումները, կարելի է ասել, մասամբ ընդունված են ՀՀ-ում գործող իրավակարգավորումներում, և, ընդհանրապես, տեղեկատվության ազատության նկատմամբ միջազգային հետաքրքրությունն ուղղվում է մասնավոր հատվածի որոշ ներկայացուցիչներին տեղեկատվության ազատության կարգավորման ոլորտ ներգրավելուն: Օրինակ՝ Անգոլան, Պերուն, Լիխտենշտեյնը տեղեկատվության ազատության կարգավորման իրավահարաբերությունների սուբյեկտ են համարում այն իրավաբանական անձանց, որոնք իրականացնում են պետության կողմից պատվիրակված որոշակի գործառույթներ: Չեխիան, Ֆինլանդիան, Սլովակիան, Լեհաստանը, Իսլանդյան դրանց թվին են դասում այն իրավաբանական անձանց, որոնք ֆինանսավորվում են պետական բյուջեից, իսկ Ֆրանսիան, Էստոնիան և ՄԲ-ն, առայժմ, մասնավոր ոլորտի կոնկրետ ներկայացուցիչների են ներգրավում՝ հաշվի առնելով հստակ առանձնահատկություններ:

ՀՀ-ում գործող ՏԱ օրենքը, կարծում ենք, ամեն դեպքում անորոշ է ձևակերպում հենց հանրային նշանակության կազմակերպության հասկացությունը, և, ըստ էության, հնարավոր չէ հստակ հասկանալ, թե որն է, օրինակ, սո-

ցիալական ապահովության ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություն, դրա ներքո կարող ենք դիտարկել, օրինակ, բանկերին: Այլ օրինակ՝ ՀՀ փաստաբանների պալատը, որպես մենաշնորհ դիրք ունեցող ոչ պետական ընկերություն, արդյո՞ք համարվում է հանրային նշանակության կազմակերպություն, և այլն: Հաշվի առնելով այն, որ շրջանառության մեջ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ՝ իրավաբանական անձանց վերաբերող գլխում փոփոխություններ կատարելու մասին հայեցակարգը<sup>7</sup>, որտեղ առաջարկվող փոփոխություններից է իրավաբանական անձանց՝ հանրայինի և մասնավորի դասակարգումը՝ կարծում ենք՝ հիմնավոր և որոշակի կլինի նաև հանրային իրավունքի իրավաբանական անձանց որպես ՏԱ օրենքի իմաստով հանրային նշանակության կազմակերպություն դիտարկելը:

ՏԱ օրենքի իմաստով հստակ բացահայտված չէ նաև բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների շրջանակը: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը նշում է, որ կազմակերպությունը կարող է համարվել բյուջեից ֆինանսավորվող, եթե տվյալ բյուջեում ի սկզբանե նախատեսված է եղել կոնկրետ կազմակերպության ֆինանսավորումը կոնկրետ նպատակային ծախսերի մասով, որոնք ի սկզբանե նախատեսված են բյուջեի ելքային մասով<sup>8</sup>: Այս առումով կարևոր ենք համարում անդրադառնալ Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիային, որի 1-ին հոդվածի համաձայն՝ պետական մարմնի սահմանումը ներառում է ցանկացած հիմնարկ, ընկերություն, որևէ այլ իրավաբանական անձ, որը ֆինանսավորվում կամ համաֆինանսավորվում է պետության կողմից, կամ պետության կամ համայնքի՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող իրավաբանական անձինք, հիմնականում պետական միջոցներից ֆինանսավորվող իրավաբանական անձինք, ինչպես նաև ֆիզիկական անձ, անհատ ձեռներեց կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգ, գլուխ 5՝ իրավաբանական անձինք, հեղ. Վ. Ավետիսյան, Դ. Սերոբյան, Եր., 2014, էլեկտրոնային ռեսուրս: <https://bit.ly/2UaIZdi> [վերջին այցելություն՝ 15.06.2021թ.]

<sup>8</sup> Տե՛ս Թիվ 4Դ/0015/05/14 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.04.2016թ.-ի որոշում:

հանրային գործառույթներ կամ վերահսկում է պետական միջոցներ: Իսկ տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրների ուսումնասիրության շրջանակում «Բաց Հասարակության Հիմնադրամ»-ն անհրաժեշտ է համարում տեղեկատվություն տնօրինողների ցանկում ընդգրկել նաև հանրային ռեսուրսներ օգտագործող կազմակերպություններին<sup>9</sup>:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է հնարավորինս հստակեցնել տեղեկատվության տրամադրման պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակը, ինչպես նաև դրանում ընդգրկել այն սուբյեկտներին, որոնք կհանդիսանան պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող, հիմնականում պետական միջոցներից ֆինանսավորվող, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատվիրակված լիազորություններ իրականացնող իրավաբանական անձ:

ՀՀ-ում գործող օրենսդրությունն, ամեն դեպքում, մասնավոր մարմինների վրա որոշակի տեղեկատվություն տրամադրելու (հրապարակելու) պարտականություն է դնում, սակայն այն պայմանավորված է կոնկրետ մասնավոր մարմնի որոշակի «հատկությունից».

1. ըստ գործունեության տեսակի՝ ՀՀ-ում գործող բանկերը, վարկային կազմակերպությունները որոշակի տեղեկատվության տրամադրման պարտականություն ունեն («Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ հոդվածը բանկերին պարտավորեցնում է ցանկացած անձի պահանջով նրան տրամադրել նույն հոդվածում նշված որոշակի տեղեկատվություն),

2. ըստ կազմակերպարավական ձևի՝ բաց բաժնետիրական ընկերությունները պարտավոր են պրոակտիվ կերպով հրապարակել օրենքով նախատեսված տեղեկատվությունը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 96-րդ),

3. ըստ գործունեության նշանակության՝ հասարակական կազմակերպությունը կամ կուսակցությունը պարտավոր են հրապարակել իրենց ֆինանսական աղբյուրների, ինչպես

նաև իրականացրած ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվություն («Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ, 27-րդ հոդված) և այլն:

Մասնավոր մարմինների տեղեկատվություն տրամադրելու պարտականության ծագման յուրահատուկ հիմք է հանդիսանում փաստաբանական հարցումը: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ *փաստաբանն իրավունք ունի դիմելու պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) սրահալու պահանջով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են տրամադրել ժամկետում փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները: Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը փաստաբանների հարցմանը պատասխանելու պարտականություն է դրել միայն հանրային՝ պետական և տեղական մարմինների վրա: Ստացվում է, որ մասնավոր ոլորտի իրավաբանական անձը պարտավոր չէ պատասխանել փաստաբանի հարցմանը և տրամադրել տեղեկատվություն: Օրենսդրի նման դիրքորոշումը, հավանաբար, ուղղված է մասնավոր ոլորտի իրավաբանական անձանց ինքնավարության ապահովմանը, սակայն այն, կարծում ենք, չպետք է լինի բացարձակ, հատկապես, երբ խոսքը վստահորդի իրավունքների պաշտպանությանն է վերաբերում: Նման իրավակարգավորումների պարագայում փաստաբանը կարող է մասնավոր իրավաբանական անձից տեղեկատվություն ստանալ միայն դատական կարգով: Միջոցով, հաշվի առելով դատական ընթացակարգերի տևողությունը, դատական կարգով մասնավոր ոլորտի իրավաբանական անձից տեղեկատվության ստացումը մարդու իրավունքների պաշտպանության համար արդյունավետ լինել չի կարող:*

Փաստաբանները հարցումներ են ուղար-

<sup>9</sup> Տե՛ս «Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնդրամ, «Բաց Հասարակության Հիմնադրամ», Երևան, 2020, էջ 11: <https://bit.ly/3vBU9nv> [վերջին այցելություն՝ 15.06.2021թ.]



կում պետական մարմիններին և իրավաբանական անձանց, որպեսզի իրականացնեն իրենց հիմնական և ամենակարևոր գործառույթներից մեկը՝ ապացույցների հավաքման գործընթացը: Ցավոք, ոչ բոլորն են գիտակցում ապացույց հավաքելու փաստաբանի գործառույթի կարևորությունն ու նշանակությունը և հաճախ, հարցմանը պատշաճ պատասխան ուղարկելու փոխարեն, բավարարվում են ոչնիչ չասող գրություններով կամ նույն այն օրենքի անհաջող մեկնաբանություններով, որն առավելապես կոչված է երաշխավորելու հենց փաստաբանի գործունեության արդյունավետությունը<sup>10</sup>: Մինչդեռ փաստաբանների այս իրավունքը երաշխավորող կամ տեղեկատվությունը տնօրինող կազմակերպության համար պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող նորմեր սահմանված չեն օրենքով:

Ստացվում է, որ ցանկացած անձ, այնուամենայնիվ, օրենքով սահմանված տեղեկատվություն ստանալու իրավունք ունի, մինչդեռ դրա կարգավորումները չեն տեղավորվում ՏԱ օրենքում, քանի որ վերոնշյալ կազմակերպությունները ՏԱ օրենքի իմաստով չեն համարվում տեղեկատվություն տնօրինող: Իրավակիրառ պրակտիկայում, հավանաբար, օրենքի կարգավորման բացի պատճառով կարող է կիրառվել անալոգիա, որն այս պարագայում միայն տեղեկատվություն տնօրինողի բարի կամքի դրսևորումն է:

Իրավաբանական անձանց համար ՀՀ օրենսդրությունը տեղեկատվություն տալու պարտականություն է առաջանում նաև հարցում իրականացնող հատուկ սուբյեկտով պայմանավորված: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ... *կազմակերպությունները պարտավոր են մարդու իրավունքների պաշտպանին անվճար և հնարավոր կարճ ժամկետում տրամադրել անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ ...*, կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ *պաշտպանն իրավունք ունի հարցման ենթարկել մասնավոր անձանց, ինչպես նաև*

*տարբեր կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր, եթե դրանք չեն պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք: Վերջիններս պարտավոր են սահմանված կարգով տրամադրել այդ փաստաթղթերը կամ դրանց պատճենները:*

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը որոշակի առանձնահատկություններից ելնելով, այնուամենայնիվ, որոշ մասնավոր մարմինների վրա տեղեկատվության տրամադրման պարտականություն դրել է: Մինչդեռ նման իրավահարաբերությունները փաստացի կարգավորվում են ոլորտային օրենքներով, որոնք ոչ հաճախ (գրեթե երբեք) չեն ընդգրկում տեղեկատվության ազատության արդյունավետ ապահովումը նախատեսող երաշխիքներ: Այլ խոսքով, թեև ոլորտային իրավական ակտերը մասնավոր մարմինների համար առաջացնում են որոշակի տեղեկատվության տրամադրման պարտականություն, սակայն նշված իրավահարաբերության վրա չի տարածվում ՏԱ օրենքը:

Նման դրությունում, կարծում ենք, անհրաժեշտ է ՏԱ օրենքի կարգավորումները տարածել ցանկացած տեսակի մարմնից օրենքով նախատեսված տեղեկատվության ստացման հարաբերությունների վրա, որի արդյունքում անձը ցանկացած մարմնից օրենքով նախատեսված տեղեկատվության ստացման համար «կօգտվի» ՏԱ օրենքով նախատեսված երաշխիքներից՝ տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներից, տրամադրման ժամկետներից, պատասխանատվությունից և այլն: Վերջինիս իրականացման համար, կարծում ենք, անհրաժեշտ է այն ուղղակի նշել ՏԱ օրենքում, ուստի առաջարկում ենք, ՏԱ օրենքի 1-ին հոդվածի մեջ օրենքի գործողության տարածման շրջանակի մեջ ներառել նաև *տեղեկատվություն տնօրինող այն մարմինները, որոնք օրենքով նախատեսված դեպքերում որոշակի տեղեկատվության տրամադրման պարտականություն ունեն:* Հաշվի առնելով, որ որոշ մասնավոր մարմինների դեպքում տեղեկատվության տրամադրման պարտականություն նախատեսող իրավական

<sup>10</sup> Տե՛ս «Փաստաբանական հարցում. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3 կետի գործնական կիրարկման խնդիրներ», Այլեքս փաստաբանական գրասենյակ. 06.06.2016: <https://bit.ly/2SDQxUF> [վերջին այցելություն՝ 15.06.2021թ.]

ակտով առանձին կարգավորումներ են առկա, ապա պետք է նշել, որ ՏԱ օրենքը կտարածվի այն դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ դրանք կարգավորող հատուկ օրենքներում:

Անհրաժեշտ ենք համարում նաև ՏԱ օրենքի իմաստով ընդլայնել «հանրային մարմինների» շրջանակը, այն համապատասխանեցնել Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայի 1-ին հոդվածին (ինչպես վերևում նշեցինք): Ինչպես նաև՝ հանրային իրավունքի իրավաբանական անձանց ևս ներառել ՏԱ օրենքի գործողության ոլորտ:

Միևնույն ժամանակ կարևոր ենք համարում նաև փաստաբանի դերի բարձրացման և (թեկուզ) մարդու իրավունքի պաշտպանին՝ տեղեկատվության ազատության ոլորտում ունեցած լիազորության իմաստով հավասարեցմանը, որի արդյունքում փաստաբանին տեղեկատվություն տրամադրելու պարտականություն կունենան նաև մասնավոր մարմինները: Կարծում ենք՝ նշվածը տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի երաշխավորումից զատ, նաև իրավաբանական օգնություն ստանալու՝ անձի հիմնական իրավունքի ապահովման կարևոր ձեռքբերում կլինի:



**ՎԱՆԹԱՆԳ ԲԱԲԱՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի հայցորդ,  
 ՀՀ Միասնական սոցիալական ծառայության նշանակման վարչության երրորդ բաժնի պետ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պետությունը իրավական ժողովրդավարական պետության տեսակ է: Այն ձևավորվում է մարդկության պատմական զարգացման որոշակի փուլում, ապահովում է փոխհարաբերությունների օպտիմալ զարգացումն պետության և անձի, ինչպես նաև հասարակության ու անձի միջև: Սոցիալական պետությունը այն կատարելությունն է, որին մարդկությունը ձգտել է բազում դարերի ընթացքում: Այն պետական շինարարության նոր որակ է, որի գործունեությունը հիմնված է սոցիալ-տնտեսական իրավունքների ճանաչման և երաշխավորված պաշտպանության վրա: Սոցիալ-տնտեսական, մշակութային բնապահպանական և այլ իրավունքները, մարդու և քաղաքացու ազատություններն ու օրինական շահերը ապահովում են մարդու արժանապատիվ գոյությունը: Սոցիալական պետության հիմնական խնդիրը անհրաժեշտ ու բավարար քաղաքական, սոցիալ-տնտեսական ու հոգևոր-բարոյական պայմանների ստեղծումն է մարդու արժանապատիվ կյանքի, անհատի ազատ ու բազմակողմանի զարգացման համար: Իրապես քաղաքակիրթ է համարվում այն պետությունը, որը կողմնորոշված է արդարության, մարդկային արժանապատիվության, ազատության գաղափարների վրա: Այդպիսի պետության համար բարձրագույն արժեքը և ամենամեծ կապիտալը մարդն է, նրա հիմնական իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական իրավունքներ: XIX դարի կեսերին գերմանական հեգելյան դպրոցի ներկայացուցիչների կողմից առաջ քաշվեց պետության նոր տեսակի ստեղծման գաղափարը<sup>1</sup>: Գերմանացի փիլիսոփա, իրավագետ,

պետականագետ Լորենց Ֆոն Շտայնը (1815-1890թթ) առաջինն էր, ով 1850թ. գիտական շրջանառության մեջ դրեց «Սոցիալական պետություն» հասկացությունը: Այն վկայում է պետության նոր որակի առաջացման մասին, համաձայն որի՝ պետությունը պարտավորություն է ստանձնում հոգ տանել իր քաղաքացիների սոցիալական պաշտպանվածության համար<sup>2</sup>: Սոցիալական է կոչվում այն պետությունը, որը ձգտում է իր բնակչության համար ապահովել արժանապատիվ և անվտանգ գոյության պայմաններ, աշխատանք, բարենպաստ կենսական միջավայր, բոլորի համար համեմատաբար մատչելի կենսական հնարավորություններ: Սոցիալական պետությունը գույքային և այլ սոցիալական տարբերությունները հարթեցնում է ազգային եկամուտի մի մասը հոգևոր անապահովների վերաբաշխելու միջոցով, ստեղծում է սոցիալական ապահովագրության և բոլորի համար մատչելի կրթական, առողջապահական համակարգեր, իրականացնում է մշակույթի զարգացման, զբաղվածության ապահովման, աշխատավորների իրավունքների պաշտպանության ծրագրեր, սոցիալական օգնություն է մատուցում գործազուրկներին, մայրությանը, մանկությանը, կարիքավորներին, երիտասարդությանը և այլ խոցելի հասարակական շերտերին<sup>3</sup>: Ժամանակակից սոցիալական պետության բնորոշ հատկանիշը սոցիալական շուկայական տնտեսությունն է, դրա բնականոն գործունեությունը: Սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում ելակետային է համարվում «ազատ անհատի հայեցակարգը», ըստ որի՝ վերջինս «ինքնուրույն է և պատասխանատու իր գործո-

<sup>1</sup> Տես Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան. «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ», Երևան, 2010թ, էջ 48:  
<sup>2</sup> Տես Գ. Հարությունյան – Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Երևան 2016թ., էջ 181:  
<sup>3</sup> Տես Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան. «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ», Երևան, 2010թ, էջ 48:

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 126 2021

ղությունների համար»: Տվյալ դեպքում չի անտեսվել այն, որ անհատի ազատ զարգացումն անխուսափելիորեն հանգեցնում է որոշակի անհավասարությունների, որպիսիք մեղմելուն պետք է ուղղված լինեն մի շարք լծակներ՝ սոցիալական ապահովություն, սոցիալական ապահովագրություն և սոցիալական օգնության նպատակային քաղաքականություն: Սոցիալական պետության սկզբունքն ուղղված է սոցիալական արդարությանը, այն պարտադրում է պետությանն ապահովել արդար սոցիալական կարգ: Սոցիալական պետության սկզբունքը ոչ միայն ընդհանուր ծրագրային դրույթ է կամ սահմանադրաիրավական ուղեւիշ, այլ նաև՝ պարտադիր սահմանադրական նորմ<sup>4</sup>: Պետության սոցիալական բնութագրությունն առաջին անգամ իր արտահայտությունն է գտել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդունված Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների (Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա) սահմանադրություններում: Այնուհետև այն իր ամրագրումը ստացավ ներկա ԱՊՀ շատ երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առաջին հոդվածը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Սահմանադրության անփոփոխելի հոդվածով Հայաստանի Հանրապետությունը ճանաչվում է որպես սոցիալական-իրավական պետություն<sup>5</sup>: Սահմանադրության նշված դրույթը նորմ սկզբունք է, վարքագծի պարտադիր կանոն, այն օժտված է անմիջական գործողության իրավազորությամբ: Սահմանադրական նշված դրույթը գործողության ծրագիր և բովանդակություն է պետական գործունեության և հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում: Սոցիալական պետության կայացումն անընդհատ և մշտական գործընթաց է: Սոցիալական պետության հիմնական բնութագրիչներ-

րից անհրաժեշտ է առանձնացնել՝ ա) մարդկանց սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության բարձրացման օրենսդրական երաշխիքների ապահովումը, բ) սոցիալական պաշտպանվածության պետական և ոչ պետական անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգերի ստեղծումն ու դրանց հստակ աշխատանքի ապահովումը, գ) կենսանվազագույնի երաշխավորումը, դ) անհատի ազատ զարգացման, դավանանքի ու նախասիրությունների անկաշկանդ իրացման ինչպես նաև բանական ինքնադրսևորման երաշխիքների ապահովումը, ե) այդ սկզբունքի իրականացման անշրջելիության երաշխավորումը, զ) մարդու իրավունքների և ազատությունների արտադատական ապահովումը, է) շուկայական տնտեսական հարաբերությունների սոցիալական բնույթի երաշխավորումը և այլն: Սոցիալական պետությունը, մի կողմից, ապահովելով սոցիալական պաշտպանվածության որոշակի միջավայր, դնելով, այսպես կոչված, ներքին չափաձողը, մյուս կողմից՝ անհրաժեշտ միջավայր պետք է ստեղծի, որպեսզի հավասար իրավունքներ ունեցող ամեն մի անհատ իր բանական կարողություններին ու օրինական հնարավորություններին համապատասխան ինքնադրսևորման դաշտ ստանա<sup>6</sup>: Սոցիալական պետության սահմանադրական սկզբունքով պայմանավորված մյուս կարևոր հարցը սոցիալական իրավունքների և այս ոլորտում պետության նպատակների սահմանադրական ամրագրումն է: Ամենակարևորն այստեղ այն է, որ «դասական» հիմնական իրավունքները պետությունների համար պարտադիր են, և դրանց իրագործման ծավալը չի կարող տարբեր լինել կամ կախված լինել պետության հայեցողությունից: Այսպես՝ «դասական» հիմնական իրավունքներ հանդիսացող կյանքի իրավունքը, բնակարանի անձոնմխելիության իրավունքը, օրենքի առջև ընդհանուր հավասարությունը, խոսքի ազատությունը, ընտրելու իրավունքը կամ մյուս հիմնական իրավունքները չեն կա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 126 2021

<sup>4</sup> Տե՛ս Գ. Դանիելյան, Վ. Այվազյան, Ա. Մանասյան, «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները ՀՀ-ում». Գիտագործական հետազոտություն, Երևան, 2015թ., էջ 137-138:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014, էջ 39:

<sup>6</sup> Գ. Հարությունյան «Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» Երևան, 2016թ., էջ 186-189:

րող, կախված պետության հնարավորություններից, պետության կողմից մասնակիորեն պաշտպանվել: Դրանք ունեն ուղղակի ներգործություն և խախտվելու դեպքում ենթակա են դատական պաշտպանության, ներառյալ՝ Սահմանադրական դատարանում: Մինչդեռ սոցիալական իրավունքները, որպես կանոն, անմիջականորեն գործող իրավունքներ չեն, և այդ իրավունքների մեծ մասի իրականացման ծավալները կախված են պետության հնարավորություններից և պահանջում են պետության պոզիտիվ գործողություններ: Օրինակ՝ պետության տնտեսական հնարավորություններով պայմանավորված՝ անվճար բժշկական օգնության ծավալները կարող են երկրից երկիր տարբեր լինել, իսկ պետությունն իր օրենսդրության միջոցով որոշում է դրանց ծավալը<sup>7</sup>:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 82-85-րդ հոդվածներում, որպես օրենսդրական երաշխիքներ, ամրագրվել են աշխատանքային պայմանների, սոցիալական ապահովության արժանապատիվ գոյության և նվազագույն աշխատավարձի, առողջության պահպանության իրավունքները<sup>8</sup>: Հայաստանի Հանրապետությունն, իրեն հռչակելով սոցիալական պետություն, ստանձնում է սոցիալական որոշակի քաղաքականություն վարելու պարտավորություն: Այդ քաղաքականությունը պետք է նպատակամղված լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սոցիալական նվազագույն կարիքների բավարարմանը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սոցիալական նվազագույն կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները պետությունը պարտավոր է ձեռնարկել ելնելով պետության ներկա հնարավորություններից և այն հաշվով, որ սոցիալական ոլորտում ներդրվող միջոցներն ունենան անընդհատ աճող միտում: Սոցիալական իրավունքները ապահովվում են կյանքի համար արժանավայել կենսապայմաններ և սոցիալական պաշտպանվածություն<sup>9</sup>: Սոցիալական իրավունքների՝ մարդու իրավունքների

երկրորդ սերնդի բուն էությունը ուղղակիորեն կապված է սոցիալական քաղաքականության ոլորտում պետության կողմից որոշակի պարտավորությունների կատարման հետ: Սոցիալական իրավունքներն ունեն յուրահատուկ առանձնահատկություններ, որոնք դրանք մեծ կախման մեջ են դնում պետության քաղաքականության կայունությունից: Այսպիսի առանձնահատկություններից է քաղաքական ու քաղաքացիական իրավունքների համեմատ դրանց նկատելի նվազ ունիվերսալությունը, այսինքն՝ բնակչության որոշ կատեգորիաների վրա տարածվածությունը բազային դրույթների (օրինակ՝ բավարար գոյություն, արժանապատիվ կյանք, աշխատանքի արդար և բարենպաստ պայմաններ) ոչ խիստ հանձնարարական կարգի ձևակերպման թույլատրելիությունը, դրանց իրագործման կախվածությունը տնտեսական իրավիճակից և պաշարների առկայությունից<sup>10</sup>: Սոցիալական իրավունքների պաշտպանության աստիճանը կախված է ոչ միայն դրանց իրագործման իրավական մեխանիզմների կատարելությունից այլև այդ իրավունքների համապատասխանությունից հասարակության տնտեսական ներուժին: Այդ իսկ պատճառով «օրենքում տիպիկ սոցիալական իրավունքների սահմանումը, որքան էլ իրավաբանորեն հանգամանայից դրանք ձևակերպված լինեն, քաղաքացիների համար դեռ չի նշանակում նրանց իրավահավակնությունների անմիջական իրագործման ռեալ հնարավորություն»<sup>11</sup>: Միաժամանակ պետության սոցիալական պաշտպանության համաշխարհային նոր հայեցակարգը, որը ձևավորվում է արդի քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմաններին համապատասխան պետք է զարգացնի սոցիալական իրավունքների պաշտպանությունը, ինչպես մասնավոր իրավական, այնպես էլ հանրային իրավական ոլորտներում: Արդի փուլում իրավունքի տեսաբանները, պետականագետները, սոցիոլոգները գրեթե միահամուռ են այն կարծիքում, որ պետականորեն կազ-

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծ և մեկնաբանություններ, Երևան, 2015թ., էջ 111-112:

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, Երևան, 2015թ. էջ 36-37:

<sup>9</sup> Տե՛ս Վ.Պողոսյան, «Մարդու իրավունքներ», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2002թ, էջ 21-22:

<sup>10</sup> Տե՛ս **Гордон Л. А.** Социально-экономические прав человека: своеобразие, особенности, значение для России // Общественные науки и современность. М., 1997г., N3.стр. 7-8.

<sup>11</sup> Տե՛ս **Ледях И. А.** Социальное государство и права человека // Социальное государство и защита прав человека. М., 1994г.,стр. 27.

մակերպված հասարկությունը, անտարակույս, պարտականություն ունի զբաղվել հանրության սոցիալական աջակցման՝ այնտեղ և այն ժամանակ, որտեղ և երբ մարդիկ ի վիճակի չեն ապահովել իրենց նվազագույն կենսամակարդակը: Այդ պարտականությունն ուղղակիորեն ամրագրված է աշխարհի պետությունների մեծ մասի սահմանադրություններում և կոնկրետացված է ընթացիկ օրենսդրությունում: Ճիշտ է, գոյության ապահովման առաջնային և գլխավոր պարտականությունն ընկած է բուն աշխատունակ մարդու վրա և պետության պատասխանատվությունը վրա է հասնում այն ժամանակ, երբ մարդուն ոչ մի կերպ չի հաջողվում պատշաճ կերպով հոգալ իր կարիքները<sup>12</sup>: Սոցիալական իրավունքների համախումբն ամրագրված է նաև բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդվածներ 22,25)<sup>13</sup>, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրում (հոդվածներ 9-12)<sup>14</sup>, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում (հոդվածներ 25-27)<sup>15</sup>, ինչպես նաև այլ միջազգային փաստաթղթերում: Պետության սոցիալական գործառույթի ճանաչումը և սահմանադրորեն ամրագրումն առավել բնորոշ է ազգակենտրոն պետական համակարգերին և, թերևս, նրա ներդաշնակ զարգացման, անցյալի, ներկայի ու ապագայի օրգանական միասնությունն ապահովելու գլխավոր երաշխիքն է: Դա պայմանավորված է տեսակի, մարդկային ինքնության պահպանության ու ներդաշնակ զարգացման բնական օրինաչափությամբ<sup>16</sup>:

Իր առջև նպատակ դնելով կառուցելու սոցիալական պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը ներկա շրջանում գտնվում է այդ նպատակին հասնելու ճանապարհին, իրականացվել և իրականացվում են հսկայածավալ բարեփոխումներ վերոնշյալ նպատակին հասնելու ուղղությամբ: Սոցիալական պետության կայացումը ենթադրում է նաև խելամիտ

սպասելիքների և պահանջմունքների խնդրի առաջադրում: Եռամիասնության մեջ ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունն ամբողջական ձևով ներդաշնակում է անհատի կենսագոյի հիմնական սկզբունքները՝ ազատությունն ու հավասարությունը<sup>17</sup>: Սոցիալական իրավունքների իրականացման և պաշտպանության վիճակով է պայմանավորված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առաջին հոդվածով հռչակված սոցիալական պետության կայացումը: Սոցիալական ոլորտում պետության քաղաքականության նպատակները անհատի անմիջականորեն գործող իրավունքներ չեն, և պետությունը դրանք պետք է իրագործի իր հնարավորությունների շրջանակներում: Սոցիալական իրավունքներին վերաբերող բոլոր սահմանադրական դրույթները կարող են որպես չափորոշիչ օգտագործվել օրենքների սահմանադրականությունը գնահատելու համար: Սոցիալական պետության սահմանադրական մոդելը կանխորոշում է պետական քաղաքականության նպատակն ու ուղղվածությունը՝ ապահովելու մարդու արժանապատիվ կյանքի, բավարար կենսամակարդակի համար անհրաժեշտ պայմաններ: Կենսապայմանների շարունակական բարելավման հնարավորությունների ստեղծումը գործնական դրսևորում է ստանում մարդու՝ որպես բարձրագույն արժեքի նկատմամբ հոգածությունը, նրա արժանապատվության ճանաչումն ու հարգումը: Արժանապատվությունը ենթադրում է կյանքի արժանապատիվ պայմաններ, այդ թվում՝ բնակարանային և այլ սոցիալական հիմնախնդիրների պատշաճ լուծում: Շուկայական տնտեսության պայմաններում բնակչության տարբեր շերտերի դրամական եկամուտները խիստ անհամաչափ են, ինչը նպաստում է հասարակության սոցիալական բևեռացմանը, ազգային համախառն արդյունքի անհավասար բաշխմանը և անհարաժեշտություն դարձնում պետության ճիշտ հասցեագրված սոցիալական քաղաքականու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 126 2021

<sup>12</sup> Տե՛ս **Ջ. Հակոբյան**. «Ժամանակակից իրավունքի և օրենսդրության հարաբերակցություն», Երևան, 2001թ, էջ 75-77:  
<sup>13</sup> Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր 10.12.1948թ.:  
<sup>14</sup> Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագիր 16.12.1966թ.:  
<sup>15</sup> Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին 20.11.1989թ.:  
<sup>16</sup> Տե՛ս **Գ. Հարությունյան** «Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» Երևան, 2016թ., էջ 183:  
<sup>17</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծ և մեկնաբանություններ, Երևան, 2015թ., էջ 114:

թյունը: Այդ նպատակով ՀՀ պետական բյուջեի ծախսերի զգալի մասը կազմում են հենց սոցիալական ծախսերը: Նման ծախսերը իրականացվում են նաև համայնքային բյուջեների և տարբեր սոցիալական ծրագրերի հաշվին՝ ապահովելու համար բավարար կենսամակարդակ, առանց որի անհանարին է անձի կայնքի որակի ապահովումը: Իսկ կյանքի որակը որոշվում է այն հանգամանքով, թե ինչպիսի կենսապայմաններում է ապրում մարդը, ինչպես է լուծում իր սննդի, առողջության, բնակարանի, հանգստի, հագուստի և այլ հարցերը, ինչպես է պետությունը նպաստում անձի կենսամակարդակի բարձրացմանը<sup>18</sup>: Պետության սոցիալական գործառույթն իրենից ներկայացնում է պետության սոցիալական քաղաքականություն, որն էլ իր հերթին համարվում է պետության ներքին քաղաքականության բաղկացուցիչ մասը: Սոցիալական քաղաքականությունը որոշվում է պատմության, դարաշրջանի կոնկրետ պայմաններով, հասարակության զարգացման տնտեսական, քաղաքական և մշակութային առանձնահատկություններով: Ժամանակի ընթացքում սոցիալական քաղաքականությունը ծավալել է ինչպես իր ազդեցության ոլորտները, այնպես էլ դրանց բովանդակությունը: Սոցիալական քաղաքականության ուղիղ օբյեկտ են հանդիսանում բոլոր սոցիալական և ժողովրդագրական խմբերը<sup>19</sup>: Աղքատության կրճատմանը, անհասարության մեղմմանը, արժանավայել ծերության ապահովմանը,

բնակչության խոցելի խմբերի հնարավորությունների ընդլայնմանն ու ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված նպատակային սոցիալական քաղաքականությունը պետության գերակայություններից մեկն է<sup>20</sup>: Ընդհանրացնելով ասվածը՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրելով, որ «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է», կատարվել է առաջին Վճռական ու, բարեբախտաբար, ճիշտ բնորոշումն այն հասարակական հարաբերությունների, որի նախադրյալները ցանկանում ենք ստեղծել, և որը մեր ազգային ու պետական առաջընթացի երաշխիքն է լինելու: Այս մոտեցումը մեր սահմանադրական մշակույթի լավագույն դրսևորումներից է: Ինդիքն այն է, որ յուրաքանչյուր գործնական քայլ արվի այդ ուղղությամբ, բխի այդ հասկացությունների էությունից, ապահովի այդ ուղղությամբ հասարակության զարգացումը: Դրան պետք է ուղղված լինեն օրենսդրական աշխատանքը, համակարգային կառուցվածքային ու կազմակերպական վերափոխումները, գործնական մեխանիզմներն ու դրանց գործադրման եղանակները, ամբողջ հասարակության և յուրաքանչյուր առանձին իրավասուբյեկտի վարքագիծը: Այս հենքի վրա պետք է գծագրվի նաև սահմանադրական զարգացումների փիլիսոփայությունը:



<sup>18</sup> Տե՛ս «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ», խմբագրությամբ Գ. Հարությունյան, Ա.Վաղարշյան. Երևան, 2010թ, էջ 53, 123:

<sup>19</sup> Տե՛ս **Родионова Л. М.**, Содержание и форма социальной функции государства, М., 2011. стр. 111.

<sup>20</sup> Տե՛ս ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Երևան, 2014, էջ 117:

**ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՒՅԱԼ**

ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ, մագիստրոս

ՀՀ սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական վարչության գլխավոր մասնագետ

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ**

Սույն գիտական աշխատանքի շրջանակներում քննարկման առարկա ենք դարձրել Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրացման առանձնահատկությունները սահմանադրական վերահսկողության համատեքստում՝ վերջինիս դիտարկելով որպես սահմանադրական վերահսկողության սուբյեկտ: Նշված թեման գիտական հարթության շրջանակներում դիտարկելու անհրաժեշտությունը պայմանավորված է մի կողմից՝ սահմանադրական վերահսկողության՝ որպես Սահմանադրության գերակայության և կայունության ապահովման կարևորագույն գործառույթի լիարժեք, արդյունավետ իրականացման, մյուս կողմից՝ արդի սահմանադրական զարգացումների համատեքստում այդ գործառույթի իրացման հարցում պետության գլխի առանձնահատուկ դերակատարության նկատառումներով:

Առհասարակ սահմանադրական վերահսկողությունը բնորոշվում է որպես հասարակության կենսագոյի համընդհանուր ճանաչում գտած ու հաստատագրված կանոնների պահպանության երաշխիք, որն իրականացվում է սահմանադրական բոլոր ինստիտուտների ու մարմինների կողմից<sup>1</sup>:

Եթե անառարկելիորեն ընդունենք այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր գործունեության ընթացքում գրանցել է նկատելի և արդյունավետ ձեռքբերումներ երկրում սահմանադրական արդարադատության իրականացման և սահմանադրականության հաստատման հարցում, ապա կարծում ենք, որ սահմանադրական վերահսկողության համակարգը կազմող մյուս մարմինների պարագայում նույնը չենք կարող ասել, և այդ հարցում առկա են մի շարք խնդիրներ, որոնց

արձագանքելն ու լուծումներ առաջադրելն իրենից մեծ կարևորություն է ներկայացնում հատկապես այնպիսի ժամանակահատվածում, երբ երկրի իրավաքաղաքական կյանքի գերխնդիրներից մեկը երկրում սահմանադրականության հաստատումն է, իսկ հատկապես խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում այդ հարցում առավել մեծ է պետության գլխի դերը: Մի բան է, երբ իրավական կարգավորումների կենսագործումը տեսնում ենք իրական կյանքում կամ այն, ինչին ուղղված է իրավակարգավորումը, հայտնի է մեր իրականությանը, տեսանելի և ընկալված է մեր կողմից, սակայն այլ է հարցը բոլոր այն դեպքերում, երբ գործ ունենք այնպիսի ինստիտուտի հետ, որն իր էությամբ և բովանդակությամբ նորույթ է, և, թերևս, գիտական հարթության շրջանակներում նման հարցի ուսումնասիրումն առկա խնդիրների բացահայտման և լուծումների առաջադրման, ինչպես նաև համարժեք ընկալում ձևավորելու առումներով իրենից մեծ կարևորություն է ներկայացնում: Այդպիսին է Հանրապետության նախագահի դերին և կարգավիճակին վերաբերող հիմնադրույթների ուսումնասիրման հարցը, քանի որ պետության գլխի դերը կառավարման խորհրդարանական համակարգում էականորեն տարբերվում է կառավարման նախորդ համակարգերում նրա ունեցած դերից և կարգավիճակից, ինչը, մեր կարծիքով, հանգեցնում է մի իրավիճակի, երբ կամ այն չի ընկալվում իր էությանն ու բնույթին համարժեք կամ ընկալվում է բացառապես այլ պետությունների հետ համեմատականներ անցկացնելու մակարդակով, ինչը նույնպես բերում է Նախագահի դերի թերի և ոչ ամբողջական ընկալման:

Մեր կողմից նման թեմայի հատուկ կա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 126 2021

<sup>1</sup> Հարությունյան Գ. Գ., Մանասյան Ա. Ա. Սահմանադրական վերահսկողություն, Եր, «Իրավունք», 2015, էջ 21:



րևորումը և դրան գիտական աշխատանքի շրջանակներում անդրադարձ կատարելը նպատակ է հետապնդում Նախագահին վերաբերող սահմանադրաիրավական դրույթների ուսումնասիրման արդյունքում հստակեցնել Հանրապետության նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը և բացահայտել Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրավական բովանդակությունը:

Սահմանադրության՝ «Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները» վերտառությամբ 123-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը: Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրացումը Հանրապետության նախագահը իրագործում է նախ և առաջ Սահմանադրական դատարանի դիմելու միջոցով, ըստ այդմ էլ, Սահմանադրության՝ «Սահմանադրական դատարանի դիմելը» վերտառությամբ 169-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ Հանրապետության նախագահը կարող է դիմել Սահմանադրական դատարան Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասով, 139-րդ հոդվածի 2-րդ մասով, 150-րդ հոդվածով, ինչպես նաև 168-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով սահմանված դեպքերում: Եթե ուշադրություն դարձնենք վերոնշյալ 169-րդ հոդվածի իրավակարգավորումներին, որով սահմանվում է Սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտների շրջանակը և այն հարցերը, որոնց կապակցությամբ կարող են դիմել, պարզ է դառնում, որ բոլոր սուբյեկտների դեպքում, բացի Հանրապետության նախագահից, հղում է կատարվում Սահմանադրության՝ «Սահմանադրական դատարանի լիազորությունները» վերտառությամբ 168-րդ հոդվածին կամ դրանք հստակ արտացոլում են վերոնշյալ հոդվածով ամրագրված լիազորություններից որևէ մեկը: Ինչ վերաբերում է Նախագահի կողմից Սահմանադրական դատարանի դիմելուն, ապա այստեղ թե՛ զուտ ձևակերպման, թե՛ բովանդակային առումով դրսևորվել է առանձնահատուկ մոտեցում: Այդ կարգավորումների համաձայն՝ Հանրապետության նախագահը կարող է դիմել Սահմանադրական դատարան ինչպես Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, այնպես էլ Սահմանադ-

րության 129-րդ հոդվածի 1-ին մասով, 139-րդ հոդվածի 2-րդ մասով և 150-րդ հոդվածով սահմանված դեպքերում, որոնք, մասնավորապես, վերաբերում են օրենքի ստորագրման, իր կողմից ընդունվող հրամանագրերի և կարգադրությունների առնչությամբ իրեն ներկայացվող առաջարկությունների և միջնորդությունների և Կառավարության կազմավորման հարցերին: Սահմանադրության 169-րդ հոդվածի ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ ի տարբերություն ՍԴ դիմող մյուս սուբյեկտների, որոնց կողմից բարձրացվող հարցերի շրջանակը տեղավորվում է Սահմանադրության՝ «Սահմանադրական դատարանի լիազորությունները» վերտառությամբ 168-րդ հոդվածի սահմաններում, Նախագահի պարագայում վկայակոչվում են նաև Սահմանադրության այլ դրույթներ, որոնց հիմքով ևս վերջինս իրավասու է դիմել Սահմանադրական դատարան: Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, որ Սահմանադրական դատարանի դիմելու առումով Նախագահին տրված է առավել լայն լիազորությունների շրջանակ, ինչի առնչությամբ, սակայն, հարկ ենք համարում առանձնացնել հետևյալ նկատառումները. նախ, Նախագահի կողմից Սահմանադրական դատարանի դիմելու հիմքերի ուսումնասիրումից պարզ է դառնում, որ դրանցից ոչ բոլորն են նախատեսված Սահմանադրական դատարանի լիազորություններն ամրագրող Սահմանադրության 168-րդ հոդվածով. մասնավորապես՝ Սահմանադրությամբ ամրագրված Սահմանադրական դատարանի լիազորությունների շարքում Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին, 139-րդ հոդվածի 2-րդ մասերով, ինչպես նաև 150-րդ հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ եզրակացություն տալու կամ որոշում կայացնելու առնչությամբ որևէ դրույթ նախատեսված չէ: Ըստ այդ Սահմանադրության տեքստից՝ նույնիսկ պարզ չի դառնում, թե այդ հարցերով Սահմանադրական դատարանը կայացնելու է որոշում թե՛ տալու է եզրակացություն, մինչդեռ Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասով հստակ սահմանվում է, որ Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ կազմավորման և գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և Սահմանադ-

րական դատարանի մասին օրենքով: Ստացվում է, որ Սահմանադրությամբ Նախագահին տրվել է մի շարք հարցերով Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն, սակայն մյուս կողմից Սահմանադրական դատարանին չի տրվել համապատասխան լիազորություն Նախագահի կողմից բարձրացրած հարցերով գործի քննություն իրականացնելու և որոշում կամ եզրակացություն կայացնելու համար: Եթե փորձենք այդ հակասությունը հարթել մեկնաբանության միջոցով, կարծում ենք, դրական արդյունքի չենք հանգի, քանի որ վերոնշյալ դեպքերը, որոնց հիմքով Նախագահը կարող է դիմել Սահմանադրական դատարան, չենք կարող «տեղավորել» Սահմանադրական դատարանի այս կամ այն լիազորության շրջանակներում, քանի որ այդ գործերը թե՛ բովանդակային, թե՛ ժամկետների առումով առանձնանում են միայն իրենց բնորոշ հատկանիշներով:

Վերը նշված հակասությանը կարելի է ասել լուծում է տրվել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Օրենք): Օրենքի՝ «Սահմանադրական դատարանում գործերի քննության և լուծման առանձնահատկությունները» վերտառությամբ 8-րդ գլխում, ըստ հերթականության, հստակ սահմանված են Սահմանադրության 168-րդ հոդվածով սահմանված Սահմանադրական դատարանի յուրաքանչյուր լիազորությամբ գործերի քննության առանձնահատկությունները: Այդ գլխում, ի թիվս ՍԴ-ի «հստակ ամրագրված» լիազորությունների, նախատեսված են նաև Ազգային ժողովի ընդունած օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության (հոդված 73), ինչպես նաև Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով և 150-րդ հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ գործերի քննության կարգը: Ինչպես տեսնում ենք, Սահմանադրական կարգավորումների միջև առկա հակասությունը օրենսդրական մակարդակով ստացել է իր լուծումը, սակայն կարծում ենք, որ Նախագահին ընձեռված՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը պետք է հստակ և իրական

լինի թե՛ զուտ ձևական ամրագրման, թե՛ բովանդակային կենսագործման առումով, քանի որ խորհրդարանական կառավարման համակարգում Նախագահին Սահմանադրության պահպանմանը հետևելու առաքելությամբ օժտելու համար անհրաժեշտ է ոչ միայն ամրագրել, որ «Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը», այլ նրան օժտել այնպիսի գործուն և իրական լիազորություններով և այդ լիազորությունների իրականացման օրենսդրական կառուցակարգերն ու ընթացակարգերն այնքան հստակ սահմանել, որ իրական կյանքում տեսանելի լինի Նախագահի կողմից Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրացումը: Ի հիմնավորումն մեր դիրքորոշման՝ հարկ ենք համարում ներկայացնել նաև այլ հեղինակների տեսակետները վերոնշյալ հարցադրման կապակցությամբ: Իրավաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Գ. Հարությունյանի կողմից նշվում է, որ «Միջազգային սահմանադրական պրակտիկայում, որպես կանոն, Նախագահը հանդիսանում է Սահմանադրության գերակայության ապահովման քաղաքական երաշխավորը: Դրա համար անհրաժեշտ է, մասնավորապես, գործուն սահմանադրաիրավական բովանդակություն հաղորդել այնպիսի սահմանադրական դրույթների, ինչպիսիք են «Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը» (տե՛ս Ֆրանսիա (հոդվ. 5), Լեհաստան (հոդվ. 126, կետ 2), Հայաստան (հոդվ. 123), «Նախագահը հանդիսանում է Սահմանադրության երաշխավորը» (տե՛ս Ռուսաստանի Դաշնություն, հոդվ. 80, մաս 2), «Նախագահն ապահովում է ...ժողովրդավարական ինստիտուտների նորմալ գործողությունը...» (Պորտուգալիա, հոդվ. 120), «Նախագահն ապահովում է պետական մարմինների նորմալ գործունեությունը» (Սլովակիա, հոդվ. 101, մաս 1) և այլն<sup>2</sup>):

Հանրապետության նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակի բացահայտման արդյունքում կարող ենք իրավամբ փաստել, որ նրա գլխավոր դերակատարումը սահմանադրական կարգի պահպանումն

<sup>2</sup> Հարությունյան Գ. Գ. Սահմանադրական մշտադիտարկումը որպես սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարման երաշխիք /Հայեցակարգային մոտեցումներ/, զեկույց Երևանյան միջազգային խորհրդաժողովում, 21 հոկտեմբերի 2016թ., էջ 14:

է, ինչը բնորոշ է խորհրդարանական կառավարման ձև ունեցող մի շարք երկրների պետության գլխի կարգավիճակին: Սակայն մեր իրականության պայմաններում, հավանաբար նաև պայմանավորված այն հանգամանքով, որ սահմանադրաիրավական կարգավորումները դեռ ամբողջապես մեկնաբանված և ընկալված չեն, Հանրապետության նախագահի կարգավիճակն առավելապես ընկալվում է որպես արարողակարգային, խորհրդանշական առանց լուրջ գործուն լիազորությունների, ինչը մեր հիմնական մտահոգություններից մեկն է, որի առնչությամբ անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալը. Հանրապետության նախագահի կարգավիճակի առանցքային բաղադրիչը Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրականացման իրավազորությամբ օժտված լինելն է, ինչը պետք է օրենսդրության մակարդակով ստանա իր կենսագործման կառուցակարգերի ու ընթացակարգերի հստակ ամրագրում վերը նշված գործառույթի լիարժեք ու արդյունավետ իրագործման համար: Այս առումով հարկ է հիշատակել պրոֆեսոր Վ. Չիրկինի խոսքերը, ով գտնում է, որ պետության գլուխն իրականացնում է սահմանադրական կարգի պաշտպանի կամ երաշխավորի գործառույթ, որը նշանակում է նաև Սահմանադրության պաշտպանության գործառույթի իրականացում<sup>3</sup>: Իսկ գերմանացի իրավագետներ Իգնեզեեն և Կիրխովը գտնում են, որ խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող Գերմանիայում նախագահն առնվազն արարողակարգային մակարդակում թիվ մեկ պետական պաշտոնյան է, որը վերահսկողություն է իրականացնում սահմանադրական համակարգի լեգիտիմության նկատմամբ և մասնակցում է քաղաքական համակարգի ձևավորմանն ու գործունեությանը<sup>4</sup>:

Անհրաժեշտ ենք համարում հստակ ընդգծել նաև այն հանգամանքը, որ դժվար է պատկերացնել Հանրապետության նախագահի կողմից սահմանադրական վերահսկողության լիարժեք իրագործումն առանց սահմանադրական մշտադիտարկման իրականացման,

ինչի շնորհիվ է միայն հնարավոր վեր հանել, գնահատել ու վերականգնել խախտված սահմանադրական հաշվեկշիռը: Իսկ թե ինչ եղանակով ու միջոցներով պետք է Նախագահի կողմից իրականացվի այդ մշտադիտարկումը, կարծես թե դեռևս անհայտ է թե՛ Սահմանադրության, թե՛ օրենսդրության հարթությամբ, ինչի կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը. եթե ելակետ է ընդունվել այն գաղափարը, որ իրեն ընձեռված լիազորություններն իրականացնելիս Նախագահն ամեն դեպքում իրականացնելու է նաև սահմանադրական մշտադիտարկում, և ըստ այդմ անհրաժեշտություն չկա հստակ ամրագրել դրա իրականացման հնարավորության, ձևերի ու եղանակների մասին, ապա անհրաժեշտ ենք համարում նշել, որ պետական յուրաքանչյուր պաշտոնատար անձի կողմից որևէ գործառույթի իրացում ակնկալելու համար անհրաժեշտ է գոնե ընդհանուր գծերով, բայց հնարավորինս որոշակի և հստակ ամրագրել այդ լիազորության կատարման անհրաժեշտությունն ու հնարավորությունը: Առհասարակ կարծում ենք, որ նման ամրագրումը կձևավորի նաև Նախագահի դերի ճիշտ և համարժեք ընկալում, հակառակ պարագայում Նախագահն առավելապես ընկալվում է որպես ոչ գործուն, հիմնականում արարողակարգային լիազորություններով օժտված պաշտոնատար անձ: Այս առումով խնդիրը այն է, որ վերը նշված ընկալումը կարծես թե կրում է համակարգային բնույթ, ըստ այդմ վտանգելով այն առաքելության լիարժեք և արդյունավետ իրացումը, որով օժտել է Հանրապետության նախագահին ՀՀ Սահմանադրությունը: Սրա հետ կապված հարկ ենք համարում անդրադառնալ Նախագահի ելույթին վերջինիս երդմնակալության արարողության ժամանակ: Ուշադիր հետևելով Նախագահի ելույթին՝ չեք կարող գտնել որևէ միտք, նախադասություն, հատված, որն ուղղված լինի շեշտելու Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրացումը, ինչը մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ միգուցե հենց Նախագահի կողմից նույնպես համարժեք ընկալված չէ իր դերն

<sup>3</sup> Чиркин В.Е., Глава государства, Москва, 2010, ст. 192.

<sup>4</sup> Й. Изензее, П. Кирхофф, Государственное право Германии, Москва, 1994, ст. 225-230.

ու առաքելությունը երկրի իրավաքաղաքական կյանքում<sup>5</sup>:

Վերոգրյալի հաշվառմամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել Նախագահի կողմից իրականացվող սահմանադրական մշտադիտարկման գործուն համակարգի ներդրման անհրաժեշտությունն ու կարևորությունը, ընդ որում, կարծում ենք, որ իրականացվելիք մշտադիտարկմանը վերաբերող հիմնական և առանցքային հարցադրումներն իրենց ամրագրումը պետք է ստանան օրենսդրության մակարդակով: Վերոնշյալի առնչությամբ հարկ է հիշատակել Գ. Հարությունյանի այն եզրահանգումը, համաձայն որի, սահմանադրական վերահսկողության համակարգվածությունն ու անընդհատությունը հնարավոր է միայն սահմանադրական արտոգոյման և մշտադիտարկման շարունակական գործող ու ամբողջական համակարգի ներդրման պարագայում<sup>6</sup>:

Մեկ այլ հարցադրում, որին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ, վերաբերում է Սահմանադրական դատարանի այն լիազորությանը, որի շրջանակներում լուծվում են հանրաքվեի, Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը: Ինչպես գիտենք ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեն նախ և առաջ այդ ընտրությունների մասնակիցները, որպիսի իրավունքը նախատեսված է Սահմանադրության 169-րդ հոդվածի 11-րդ, 12-րդ մասերով: Սակայն բացի դրանից, նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրվում է, որ հանրաքվեի և Հանրապետության նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունի Ազգային ժողովի խմբակցությունը: Ստացվում է, որ Ազգային ժողովի ընտրության արդյունքով ընդունված

որոշումների հետ կապված վեճերով Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեն միայն ԱԺ ընտրությանը մասնակցած կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները: Այս առումով գտնում ենք, որ առավել արդյունավետ կլիներ, եթե վերոնշյալ հարցով նախատեսվեր նաև Հանրապետության նախագահի՝ Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունքը, քանի որ Նախագահը կոչված է ապահովելու երկրի իրավաքաղաքական կյանքում իրականացվող գործընթացների սահմանադրականությունը և վերը նշված հարցով Սահմանադրական դատարանն ղիմելու իրավասության սահմանումը ևս կնպաստեր Նախագահի այդ առաքելության իրագործմանը:

Ամփոփելով մեր եզրահանգումները՝ գալիս ենք այն հետևության, որ.

- Հանրապետության նախագահի կարգավիճակի գլխավոր և առանցքային տարրը Սահմանադրության պահպանմանը հետևելն է, որը պետք է իրականացվի սահմանադրական մշտադիտարկման և սահմանադրական վերահսկողության շրջանակներում:
- Վերոնշյալ գործառույթների լիարժեք և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է օրենսդրությամբ հստակ ամրագրել դրանց իրականացման կառուցակարգերն ու ընթացակարգերը:
- Հարկ է կենսագործման հստակ մեխանիզմներ ապահովել սահմանադրաիրավական այն նորմերի համար, որոնք ամրագրում են Նախագահի՝ Սահմանադրական դատարանն ղիմելու հնարավորությունը:
- Անհրաժեշտ է ներդնել սահմանադրական մշտադիտարկման գործուն համակարգ՝ այդ հարցում գլխավոր դերակատարումը տալով Հանրապետության նախագահին:

<sup>5</sup> Նախագահ Արմեն Սարգսյանի ելույթը երդմնակալության արարողության ժամանակ, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2018/04/09/President-Armen-Sargsyans-speech-during-inauguration-ceremony/>

<sup>6</sup> Հարությունյան Գ. Գ. Սահմանադրական մշտադիտարկում, Երևան, Նժար, 2016թ., էջ 77:

**ՍՅՈՒՋԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ վարույթների իրականացման ավագ մաքսային տեսուչ

**ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՅԻՄՔԵՐԸ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՉՅԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԿԱՍ ՈՉ ՃՇՊՐԻՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՅԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (9-րդ հոդվածի) կարգավորում է «պետական և հասարակական կարգի ... սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ)» այնպիսի գործողության կամ անգործության դեպքում անձանց պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարաբերությունները, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, և «եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում: Միաժամանակ հետազոտության արդյունքում անդրադարձ է կատարվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքներին, որն ի թիվս այլնի, սահմանում է, որ վարչարարությունը պետք է

ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր (8-րդ հոդված): Վարչական պատասխանատվության նպատակը ոչ թե խախտված իրավունքների վերականգնումն է, այլ «վարչական իրավախախտում կատարած անձին դաստիարակել ... օրենքները պահպանելու, ... համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել ինչպես իր իսկ՝ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը», հիմք ընդունելով ՎԻՎ օրենսգրքի 22-րդ հոդվածը, որի համաձայն, վարչական տույժը համարվում է պատասխանատվության միջոց և կիրառվում է, նպատակ ունենալով վարչական իրավախախտում կատարած անձին դաստիարակել օրենքները պահպանելու, ոգով, ինչպես նաև կանխել ինչպես իր իսկ՝ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը:

Մաքսային օրենսգրքի՝ «Մաքսային կանոնների խախտումները և պատասխանատվությունը դրանց համար» վերտառությամբ 37-րդ գլխի<sup>2</sup> նորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մաքսային կանոնների խախտման երկու հիմնական խումբ:

*ա. մաքսային կանոնների խախտումներ, որոնք չեն առնչվում պետության ֆինանսական շահերին, մաքսային վճարների վճարման*

<sup>1</sup> Տես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ընդունված 18.02.2004թ., ուժի մեջ է մտել 31.12.2004թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2004.03.31/18(317): Պաշտոնական կայքէջ՝ file:///C:/Users/syuzanna\_vardanyan/Downloads/154962.pdf :

<sup>2</sup> Տես ՀՀ մաքսային օրենսգրքը: Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2000.08.21/19(117), ուժի մեջ է մտել՝ 01.01.2001թ.: Օրենսգրքն ուժը կորցրել է 17.12.14 ՀՕ-241-Ն ՀՀ օրենքով 02.01.2015 թվականին, բացառությամբ նույն օրենքի 259-րդ հոդվածով սահմանված դրույթների:file:///C:/Users/syuzanna\_vardanyan/Downloads/95226.pdf

պարտականության կատարմանը, ինչպես նաև այդպիսի պարտականության կատարման ապահովմանը (օրենսգրքի 190-199.1-րդ հոդվածներ),

բ. մաքսային կանոնների խախտումներ, որոնք անմիջականորեն վերաբերում են պետության ֆինանսական շահերին և նպատակաուղղված են մաքսային վճարների վճարման պարտականության կատարման ապահովմանը (օրենսգրքի 200-204-րդ հոդվածներ): Դրանք վերաբերում են, մասնավորապես, մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխմանը՝ մաքսային հսկողությունը շրջանցելով, մաքսային հսկողությունից թաքցնելով, ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելով, մաքսային և այլ փաստաթղթերը կամ մաքսային ապահովման միջոցները խաբեությամբ օգտագործելով: Նշված իրավախախտումների դեպքում այդ չափով չեն ապահովվում տվյալ ապրանքների և տրանսպորտային միջոցների կամ դրանց առանձին խմբաքանակի մասով մաքսատուրքերի, օրենքով սահմանված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը:

Վերոշարադրյալի առնչությամբ Սահմանադրական դատարանը<sup>3</sup> գտնում է, որ նշված բոլոր իրավախախտումների դեպքում փաստացիորեն տեղի է ունենում ապրանքների կամ դրանց որոշակի խմբաքանակի չհայտարարագրում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 200-202-րդ և 204-րդ հոդվածների իմաստով «չհայտարարագրել» հասկացության ներքո օրենսդիրը նկատի է ունեցել ոչ միայն ապրանքները և տրանսպորտային միջոցներն ընդհանրապես չհայտարարագրելը (օրենսգրքի 200 և 201-րդ հոդվածներ), այլ նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների այնպիսի հայտարարագրումը, որը զուգորդվում է մաքսային մարմին մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման համար կեղծ, անօրինական ճանապարհով ստացված, անվավեր համարված կամ այլ ապրանքներին և տրանսպորտային միջոցներին վերաբերող փաստաթղթեր ներ-

կայացնելով, կեղծ մաքսային ապահովման միջոցներ օգտագործելով, ինչպես նաև առանց մաքսային մարմինների թույլտվության՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ ունեցող ապրանքների և տրանսպորտային միջոցների օգտագործմամբ, տնօրինմամբ և այդ արտոնություններով չպայմանավորված նպատակներով այլ անձանց հանձնելով (օրենսգրքի 202 և 204-րդ հոդվածներ): Վերջին դեպքերում ևս փաստացիորեն տեղի է ունենում կոնկրետ ապրանքների և տրանսպորտային միջոցների կամ դրանց կոնկրետ խմբաքանակի չհայտարարագրում: Ընդ որում, նշված իրավախախտումներն իրենց իրավական հետևանքներով այնպիսին են, որ դրանց կատարման դեպքում այդ չափով չեն ապահովվում տվյալ ապրանքների և տրանսպորտային միջոցների կամ դրանց առանձին խմբաքանակի մասով մաքսատուրքերի, օրենքով սահմանված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 200-204-րդ հոդվածների սահմանմամբ օրենսդրի նպատակը վարչական պատասխանատվություն սահմանելն է, ոչ թե Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների չհայտարարագրման դրսևորման բոլոր դեպքերի համար, այլ միայն այն դեպքերի, որոնց հետևանքով չի ապահովվում կոնկրետ ապրանքի և տրանսպորտային միջոցի կամ դրանց առանձին խմբաքանակի այդ չափով մաքսատուրքերի գծով պետական բյուջեի մուտքերը՝ միատեսակ դարձնելով դրանց հասարակական վտանգավորության աստիճանը:

Այսուհանդերձ, վերոհիշյալ համակարգային վերլուծությունը վկայում է, որ վիճարկվող դրույթում «ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրել» բացահայտիչ միջանկյալ ձևակերպման ներքո տվյալ հոդվածի իրավակարգավորման առարկայի շրջանակներում պետք է նկատի ունենալ Հայաստանի Հանրապետության մաքսային

<sup>3</sup> Տե՛ս «ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» ՍԴՈ-920 որոշում, ընդունված 12.10.2010, ուժի մեջ է մտել 12.10.2010թ., սկզբնաղբյուր՝ ՀՊՏ 2010.10.20/51(785) Հոդ.1151: Պաշտոնական կայքէջ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=61436>

**սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մասին այնպիսի ոչ ճշգրիտ տեղեկություններ հայտարարագրելը, որը գործնականում հանգեցնում է իրական բեռի չհայտարարագրման:**

Ընդ որում, նշված նորմում ճշգրիտ տեղեկությունների ներքո նկատի են առնվում ՀՀ մաքսային վարչության՝ 1998թ. հունիսի 12-ի թիվ 71-ՄՎԼ հրամանով նախատեսված միայն այն տեղեկությունները, որոնց ոչ ճշգրիտ հայտարարագրումն իր իրավական հետևանքներով հավասարազոր է մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները հայտարարագրելու պարտականությունը չկատարելուն, այսինքն՝ հանգեցրել է մաքսային պարտավորության չկատարմանը, կամ որ նույնն է, դրանց հետևանքով չեն ապահովվել կոնկրետ ապրանքի և տրանսպորտային միջոցի կամ դրանց առանձին խմբաքանակի՝ այդ չափով մաքսատուրքերի, օրենքով սահմանված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը:

Այս և մի շարք հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է ապրանքների չհայտարարագրման կամ ոչ ճշգրիտ հայտարարագրման համար վարչական պատասխանատվության ենթարկելու կարգի առանձնահատկությունների և տեսական հիմքերի համակարգային վերլուծությունը:

Նախևառաջ, հետազոտության արդյունքում կսահմանենք հիմնական հայեցակարգի բովանդակությունը և իմաստը, որը կապված է իրականացվող հետազոտության օբյեկտի, վերջինիս կիրառելիության և օբյեկտիվության հետ՝ առկա իրավական իրողությունն արտացոլելու համար:

Ապրանքի չհայտարարագրման կամ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրման համար վարչական պատասխանատվության ենթարկելու կարգի վերհանման և մեկ-

նաբանման համար էական նշանակություն ունի և նպատակահարմար է, որ ուսումնասիրությունը սկսվի այն մատնանշող տերմինների մեկնաբանմամբ, քանի որ վերջիններս լեզվականորեն արտահայտում են վերջինիս բուն իմաստը և փոխհարաբերությունները որոշակի հասկացությունների հետ<sup>4</sup>:

Հարկ է նշել, որ մաքսային իրավահարաբերություններում առկա են **ապրանքների չհայտարարագրման կամ ոչ ճշգրիտ տեղեկություններով** հայտարարագրման համար վարչական պատասխանատվության ենթարկելու կարգի երկու միմյանց հետ փոխադարձաբար փոխշաղկապվող *հիմնական տարրեր*, որոնք հնարավորություն են տալիս պարզել դրա էությունը: Ակնկալվող արդյունքը հանդիսանում են վարչական պատասխանատվության ենթարկելը՝ հաշվի առնելով վարչական իրավախախտման առանձնահատկությունները և վարչական պատասխանատվության ենթարկելու իրականացման գործողությունը՝ կարգը: Մաքսային իրավահարաբերությունները կարգավորող մի շարք իրավական ակտերում «վարչական պատասխանատվության ենթարկելը» բուն արտահայտության շարադրանքը ամրագրվում է բավականին հաճախ:

Այսպիսով՝ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 354-րդ հոդվածի<sup>5</sup> ամրագրմամբ, օրենսդիրը, մաքսային մարմինների իրավապահ գործունեության բացահայտումը կատարում է վարչական գործընթացների հետ միասին, **մասնավորապես՝ վարչական իրավախախտումների գործերով մաքսային մարմինները վարչական ընթացակարգ են իրականացնում (վարույթ են իրականացնում) և անձանց վարչական պատասխանատվության ենթարկում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:**

ՎԻՎ օրենսգրքի 302-րդ հոդվածը<sup>6</sup> «**Վարչական տույժեր նշանակելու մասին որոշումների կայարման վաղեմությունը**» վերտա-

<sup>4</sup> Зеленцов А.Б. Административно-правовой спор: вопросы теории: Монография. Изд. 2-е, испр. и доп. - М.: РУДН, 2009. - С. 38.

<sup>5</sup> Տե՛ս Таможенный кодекс Евразийского экономического союза. (Приложение № 1 к Договору о Таможенном кодексе Евразийского экономического союза) // Официальный сайт Евразийского экономического союза URL: <http://www.eaeunion.org/#info> (дата обращения 25.05.2019)

<sup>6</sup> Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքը, ընդունված 06.12.1985, ուժի մեջ է 01.06.1986թ., սկզբնաղբյուր՝ ՀՍՍՀԳՍ 1985/2: Պաշտոնական կայքէջ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73129> :

նությանը, ՎԻՎ օրենսգրքի նախագծի 53-րդ<sup>7</sup> «Վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը» վերտառությամբ հոդվածներում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի<sup>8</sup> «Պատասխանատվությունը հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով պատճառված վնասի համար» շարադրանքում, ՀՀ հողային օրենսգրքի «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները» վերտառությամբ 40-րդ հոդվածում<sup>9</sup>:

Ելնելով վերոշարադրալից՝ կարող ենք փաստել, որ օրենսդրի կողմից այս հայեցակարգի նման լայն կիրառումը վկայում է վերջինիս լայն կիրառման մասին ինչպես իրավական, այնպես էլ վարչական պատասխանատվության տեսության մեջ՝ ապահովելով համապատասխան մարմինների իրավապահ գործունեությունը: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, դրա էությունը տեսականորեն բավարար չափով ուսումնասիրված չէ և անհրաժեշտ է հստակ վերլուծություն:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ վերլուծության ենթակա նորմում՝ «այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը» արտահայտությունը կարող է թույլ տալ նորմի այնպիսի մեկնաբանություն, ըստ որի, վիճարկվող նորմով նախատեսված պատասխանատվությունը կարող է կիրառվել նաև հայտարարագրման սահմանված կարգից ցանկացած շեղման դեպքում, պետք է նշել, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված արարքի համար անձի վարչական պատասխանատվությունն իրավաչափ է միայն այն դեպքում, երբ այդ պատասխանատվությունը նպատակաուղղված է մաքսային պարտավորությունների կատարումն ապահովելու՝ վերը նշված իրավաչափ նպատակին հասնելուն: Հետևաբար, այն դեպքում, երբ տեղափոխվող ապ-

րանքի կամ տրանսպորտային միջոցի մասին ճշգրիտ տեղեկություններ չհայտարարագրելը չի հանգեցրել ապրանքի կամ տրանսպորտային միջոցի **մաքսային արժեքի նվազեցմանը և ըստ այդմ չի հանգեցրել օրենքով սահմանված կարգով և չափով մաքսափուրք վճարելու սահմանադրական պարտականության ոչ պարզաձև կատարմանը**, նշված արարքի համար պատասխանատվությունը դառնում է ինքնանպատակ և չի բխում վելուծվող նորմի (ՀՀ մասային օրենսգրքի 203-րդ հոդվածի) ընդհանուր իրավակարգավորման առարկայից:

Միաժամանակ ուսումնասիրվել է այն, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի կիրառության արդյունքում պահպանվեն Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ հոդվածները, մասնավորապես, սույն հոդվածը չպետք է հակասի իրավական որոշակիության սկզբունքին, ինչի արդյունքում իրավակիրառական պրակտիկայում դրան չտրվի կամայական մեկնաբանություն:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենսդրի բացառիկ իրավասությանն է վերապահված ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունների և պատասխանատվության տեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանումը: Իր այդ լիազորությունն իրականացնելիս՝ օրենսդիրն ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը, սահմանում է վարչական պատասխանատվության միջոցներն ու չափերը: Նշված հարցերում օրենսդրի հայեցողությունը, սակայն, **ունի իր սահմանադրական շրջանակները**, և օրենսդիրն իր նշված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է առանձին

<sup>7</sup> Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի նախագիծ

[https://www.moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_7256154733152\\_yndhanur-mas-naxagic-2.pdf](https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_7256154733152_yndhanur-mas-naxagic-2.pdf)

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, ընդունված 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., սկզբնաղբյուր՝ ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50): Պաշտոնական կայքէջ՝ file:///C:/Users/Hp/Downloads/146260.pdf:

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ հողային օրենսգրքը, ընդունված 02.05.2001թ., ուժի մեջ է մտել՝ 15.06.2001թ., սկզբնաղբյուր՝ ՀՀ ՊՏ 2001.06.15/17(149): Պաշտոնական կայքէջ՝ file:///C:/Users/Hp/Downloads/146285.pdf:



սահմանադրական սկզբունքներով: Օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ և 43-րդ հոդվածներում: Սահմանադրության նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ դրանց իրավական բովանդակությունը, ի թիվս այլոց, հանգում է նրան, որ հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է ընդհանրապես **իրավաբանական պատասխանատվության** և, մասնավորապես՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը, որի ապահովման տեսանկյունից էլ նախևառաջ անհրաժեշտ է գնահատել վիճարկվող նորմի սահմանադրականությունը:

Մասնավորապես՝ վարչական պատասխանատվության ենթարկելը կարող է դիտվել, մի կողմից, որպես գործընթաց, որը նպատակաուղղված է վարչական իրավախախտում կատարած անձին հարկադրելու կանխարգելել խախտումների կատարումը սանկցիաների կիրառմամբ<sup>10</sup>:

Այսպիսով՝ «Վարչական պատասխանատվության ենթարկելու» հայեցակարգի բովանդակության բացահայտումը հիմք է ապրանքների չհայտարարագրման կամ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրման համար վարչական պատասխանատվության ենթարկելու կարգի էության մեկնաբանման համար:

Վարչական պատասխանատվությունը, լինելով հստակ սահմանված իրավական պատասխանատվության տեսակ, բնութագրվում է մի շարք բնութագրական վարչական և իրավական հատկություններով, որոնցով տարբերակում են վերջինիս իրավական պատասխանատվության այլ տեսակներից: Միևնույն ժա-

մանակ, հաշվի առնելով այն փաստը, որ իրավական պատասխանատվության ընկալման առկա մոտեցումները ձևավորում են վարչական պատասխանատվության ընկալման մոտեցումները, զուգահեռական կանցկացնենք այդ հասկացությունների միջև՝ վերջիններիս հետագա վերլուծության ենթարկելով:

Շատ գիտնականներ կարծում են, որ իրավական պատասխանատվությունը պետության ազդեցության (հարկադրանքի) ձև կամ միջոց է (Ս. Ս. Ալեքսեև, Ս. Ն. Բրատուս, Ս. Ս. Սամոչենկո, Մ. Խ. Ֆարուքշին): Այս տեսակետի ձևավորման հիմքը «սովետական» տեսլականն էր, թե ինչ է իրավական պատասխանատվությունը: Այս դիրքորոշումը հիմնված է հաստատված քաղաքական շահերի պաշտպանության գերակայության վրա և, որպես արդյունք, ուղղված է պետական կամքի արտահայտմանը<sup>11</sup>:

Ն.Վ. Վիտրուկը, իրավական պատասխանատվությունը դասում է որպես պետական հարկադրանքի միջոց, կենտրոնանալով վերջինիս իրավական կիրառության վրա՝ հաշվի առնելով օրենքի գերակայությունը<sup>12</sup>:

Հետագոտության ընթացքում ուսումնասիրվել է նաև Պ.Պ. Սերկովի տեսակետն այն մասին, որ «**ցանկացած ձևի պետական իրավական հարկադրանք հանդես է գալիս որպես իրավական կարգավորման նպատակին հասնելու միջոց՝ չհանդիսանալով նյութական և դատավարական իրավական հարաբերությունների օբյեկտ**»<sup>13</sup>, որի հետ կապված պետության ազդեցության ձևերը կամ միջոցները (**հարկադրանքը**) դիտարկվում է որպես անհրաժեշտ հատկանիշ, որը երաշխավորում և ապահովում է ընդհանուր պատասխանատվության, և մասնավորապես՝ վարչական պատասխանատվության իրականացումը, բայց չի ապահովում և երբեկից չի կարող ներկայացնել *դրանց* էությունը:

<sup>10</sup> Sбu Толковый словарь русского языка: В 4 т. / Под ред. Д. Н. Ушакова. - М.: Альта-Принт, 2005. - С.765.  
<sup>11</sup> Sбu Алексеев С.С. Социальная ценность права в советском обществе. - М.: Юридическая литература, 1971. - С. 106; Братусь С. Н. Юридическая ответственность и законность (очерк теории). - М.: Юридическая литература, 1976. - С. 85, 94; Самощенко И. С., Фарукшин М. Х. Сущность юридической ответственности в советском обществе. - М.: Знание., 1974. - С. 6.  
<sup>12</sup> Sбu Витрук Н.В. Общая теория юридической ответственности. Монография. - 2-е изд., испр. и доп. - М.: Норма, 2009. - С. 235.  
<sup>13</sup> Sбu Серков П.П. Административная ответственность в российском праве: современное осмысление и новые подходы: монография. - М. : Норма, Инфра-М, 2012. - С. 75.

Վարչական պատասխանատվությունը հասարակական կարգի պահմանման, կառավարման ամենարդյունավետ մեխանիզմներից մեկն է՝ ի շահ քաղաքական ռեժիմի: Այս տեսակետը, ի վերջո, հիմք ծառայեց Ա.Է. Լունևի «վարչական պատասխանատվության» հասկացության մեկնաբանումը հասկանալու համար: Լունևը վարչական պատասխանատվությունը պարզաբանում էր որպես «պետության ղեկավար մարմինների կողմից կիրառվող միջոց արգելված գործողություններ կատարելու դեպքում»<sup>14</sup>, իսկ Վ.Մ. Մանուխինը մեկնաբանում էր որպես «վարչական հարկադրանք»<sup>15</sup>:

Վարչական հարկադրանքը հիմնված է օրենքի գերակայության, իրավախախտի վրա պետության օրինական ազդեցության հնարավորության վրա՝ իրավասու գործադիր մարմնի կողմից պատասխանատվության միջոցների կիրառման միջոցով: Այսինքն՝ վարչական հարկադրանքը պետք է դիտարկել ոչ թե որպես վարչական պատիժ, այլ որպես «շարժիչ ուժ՝ պետության հանդեպ վարչական իրավախախտի պատշաճ վարքագծի դրսևորման համար վարչական իրավախախտման գործի ողջ ընթացքում՝ վարչական վարույթի հարուցման պահից մինչև վարչական տույժ նշանակելու մասին որոշում կայացնելը և որոշման կատարումը»<sup>16</sup>:

Գիտնականների մի խումբ էլ Մ. Յու. Տիխոմիրով, Բ. Թ. Բազիլև, Ի. Ա. Գալազան) իրավական պատասխանատվության, այն որպես

վարչական պատասխանատվության արդյունք մեկնաբանում են իրավահարաբերությունների միջոցով, «իրավահարաբերության սուբյեկտների՝ մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների ամբողջություն»<sup>17</sup>, որի շրջանակներում իրականացվում է պատիժ<sup>18</sup>: Այդուհանդերձ, իրավական պատասխանատվության այս ըմբռնումը բավականաչափ ուսումնասիրված չէ և հիմնավոր չէ վարչական պատասխանատվության նպատակներն արտացոլելու համար: Իր բովանդակությամբ իրավական հարաբերությունները ծառայում են որպես իրավական ձև նման պատասխանատվության իրականացման համար, բայց ոչ չափանիշ այդպիսի պատասխանատվության առկայության կամ բացակայության համար, եթե սահմանված նպատակը չի իրականացվում:

Այսպիսով՝ հիմնվելով միջազգային փորձի և տեսաբանների մոտեցումների համակարգային վերլուծության արդյունքում **գտնում ենք, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածում պետք է տալ սահմանում, թե ո՞ր գործողություններն են ներառվում «ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու զանցակազմի մեջ»**, որոնց հստակ մատնանշմամբ զերծ կմնանք ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի և ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի միջև հակասությունների առաջացումից՝ **անհամաչափ պատասխանատվության միջոց նախատեսելու տեսանկյունից:**



<sup>14</sup> Տե՛ս Լунев А.Е. Административная ответственность за правонарушения. - М.: Госюриздат. 1961. - С. 40.

<sup>15</sup> Տե՛ս Серков П.П. Административная ответственность в российском праве: современное осмысление и новые подходы: монография. - М.: Норма, Инфра-М, 2012. - С. 76.

<sup>16</sup> Տե՛ս Серков П.П. Административная ответственность в российском праве: современное осмысление и новые подходы: монография. - М.: Норма, Инфра-М, 2012. - С. 76.

<sup>17</sup> Տե՛ս Галаган И.А. Административная ответственность в СССР. Процессуальное регулирование. - Воронеж: Изд-во Воронежского ун-та, 1976. - С. 59.

<sup>18</sup> Տե՛ս Базылев Б. Т. Юридическая ответственность: теоретические вопросы. - Красноярск: Изд-во Красноярского гос. ун-та, 1985. - С. 87.

**ՆՈՐԱՅՐ ԱՏԵՓԱՆՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՍՈԴԵՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Արդարադատությունն աշխարհում կառուցվում է՝ ըստ աշխարհայացքի և պատմական ավանդույթի տարբեր մոդելների, երբ ազգային մշակույթն ու ավանդույթները, կրոնական գիտակցությունը, բարոյական արժեքները տալիս են դատարանների գնահատման գործունեության որոշ առանձնահատկություններ: Այսպիսով՝ եվրոպական երկրներին բնորոշ է արևմտյան արժեքների և մարդու իրավունքների հայեցակարգի ավելի մեծ ներմուծումը դատական գործընթաց:

Մահմեդական աշխարհի երկրներում իսլամի սահմանադրական ճանաչումը՝ որպես օրենսդրության հիմք, տալիս է իրավական նորմերի մեկնաբանումը և կիրառումը կրոնի նորմերից մի տեսակ ածանցյալ իմաստով: Չինաստանում նկատվել է դատական իշխանության ակնհայտ գործունեություն և դատական համակարգի շրջանակների ընդլայնում՝ զուգորդված զսպվածության սկզբունքի հետ: Սա արտացոլում է երկրի համար կոնֆուցիականության ավանդական ոգին: Նայելով շատ երկրներում արդարադատության զարգացման երկար ուղուն՝ կարելի է նշել հետևյալ հիմնական միտումները. նախ, արդարադատության շրջանակն ընդլայնվում է մասնակիցների երաշխավորված գործողությունների կանխատեսելիության պատճառով: Քրեական և քաղաքացիական իրավունքի հիմնական հոսքի մեջ զուտ հատուկ անհատական գործերի լուծումից անցում է կատարվել հասարակության և հասարակական լայն գործերի՝ ներառյալ վեճերի՝ հանրային գործողությունների և գործողությունների հետ կապված վեճերի ներառմանը՝ արդարադատության շրջանակներում իշխանությունները և նույնիսկ միջազգային ինստիտուտները:

Երկրորդ՝ արդարադատության ժողովրդավարական սկզբունքների անընդհատ խորացում կա, ինչը նպաստում է քաղաքացիների համար դրա ավելի մատչելիությանը և նրանց դատավարական իրավունքների երաշխիք-

ների ամրապնդմանը: Ցավոք, այս ոլորտում խախտումները չեն վերացվել, ինչը հասարակության դժգոհությունն է առաջացնում: Դատական գործունեության որակի բարելավմանը նպաստում է դրա տեղեկատվայնացումը: Երրորդ՝ նկատվում է նախաքննական և ոչ դատական գործընթացների ծավալի զգալի աճ, ինչը հարստացնում է արդարադատությունը՝ իր առաջնային իրավասության ոլորտից հանելով համեմատաբար պարզ գործեր:

Արբիտրաժային վարույթները, միջնորդությունը, վարչական բողոքների և այլ հաստատությունների քննարկման վարչական-հասարակական հանձնաժողովները նպաստում են արդարադատության առավել նշանակալի դերի ձևավորմանը, իրավական կոնֆլիկտների լուծմանը, և համապատասխանաբար, իրավագիտակցության և քաղաքացիների կողմից օրենսդրության պահպանման տեսակներին, որում նրանք ավելի պատրաստ են ինքնուրույն մասնակցել բախման իրավիճակների կանխարգելմանը և վերացմանը:

**Չորրորդ՝ նկատելի է դատական ակտերի հատկությունները որպես օրենք ձևավորող գործոն հարստացնելու ուշագրավ միտում: ՌԴ-ում դրա արտահայտությունը Սահմանադրության մեկնաբանությունն է, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները և Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի և Ռուսաստանի Գերագույն արբիտրաժային դատարանի պլենումների ուղեցույցը: Նորացվում է նախադեպի կիրառման շրջանակը ընդհանուր իրավունքի երկրներում, որը փոխանցվում է նաև այլ դատական համակարգերին: Այսպիսով՝ դատական ակտերի դերը ուժեղանում է ոչ միայն ընդլայնելով դրանց ավանդական գործողությունների սահմանները որոշակի դեպքում, այլև օրենսդիրին դրդելով ընդունել նոր կամ փոփոխել գործող օրենքները: Արդարադատությունը պետական**

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 126 2021

գործունեության ամենակարևոր տեսակն է, որն անմիջական կապ ունի դատավարական իրավունքներով և պարտականություններով օժտված մարդկանց հետ: Եվ դրա ապահովումը, և բոլոր պետական գործունեության արդյունավետության ապահովումը հասարակության և պետության ժողովրդավարության զարգացման մակարդակի ցուցիչներ են:

Արդարադատություն: Ո՞րն է այս բառի հիմքը: Մարդիկ ի՞նչ գաղափարներ դրեցին այն հիմքի վրա, որի վրա կառուցվել է այս իրավական ինստիտուտը: Արդարադատության և օրենքի գաղափարներն ինչպե՞ս միավորվեցին այս սահմանման մեջ և հիմք դրեցին դատական իշխանության առաջացմանը, որն այսօր ցանկացած իրավական ժողովրդավարական պետության պատվարն է: Վերլուծելով իրավական գրականությունը՝ կարելի է նշել, որ պետականության, իրավունքի և արդարադատության վերաբերյալ հարցերը մտահոգում էին Արիստոտելին, Գ.Վ.Ֆ. Հեգելին, Գ. Գրոցիին, Է. Կանտին, Պլատոնին, Մ. Ցիցերոնին, Մոնտեսքյոին և հնագույն ժամանակներից հայտնի այլ մտածողներին: Հետագայում նրանց գաղափարներն արտացոլվեցին մեր ժամանակակից Ս. Ալեքսեևի, Օ. Դանիլյանի, Դ. Իկոննիկովայի, Դ. Քերիմովի, Ա. Լևչենկովի, Վ. Ներսեսյանցի, Ա. Սաչկովի, Վ. Սմորոդինսկու, Վ. Սուխանցևայի, այլ ռուս, ուկրաինացի և հայ հեղինակների աշխատություններում: Այնուամենայնիվ, արդարության բնույթը դիմամիկ է, արդարությունն անընդհատ զարգանում է հասարակության և պետության մեջ տեղի ունեցող վերափոխիչ գործընթացների ազդեցության ներքո: Այսպիսով՝ դեռ Մ. Ցիցերոնն իր «Պետության մասին» տրակտատում տեղին է նշում, որ «օրենքը, արդարադատությունը, հավատարմությունը, արդարացիությունը գալիս են այն մարդկանցից, ովքեր հաստատել են մեկը սովորույթներով, իսկ մյուսը՝ ամրապնդվել օրենքներով»<sup>1</sup>: Ուստի, զարմանալի չէ, որ մեր քաղաքակրթության վրա ազդած և նրա ներկայիս դեմքը ձևավորող հիմնարար գաղափարների շարքում ամենապատվավոր տեղերից մեկը զբաղեցնում է արդարադատության

գաղափարը, առանց որի օրինական պետականության զարգացումն անհնար է: Ակտուալ է նաև Պլատոնի այն գաղափարը, որն արտահայտել է նա «Պետություն», «Քաղաքականություն», «Օրենքներ» և այլ ստեղծագործություններում. «Եթե օրենքը ուժ չունի և գտնվում է ինչ-որ մեկի իրավասության ներքո, պետության մոտալուտ մահն անխուսափելի է»<sup>2</sup>:

Նա նշում է, որ արդարության նպատակը ոչ միայն պատիժն է, այլ նաև վիճաբանողների հաշտեցումը: Հույն փիլիսոփան դատարանների նշանակումը հավասարեցնում է կառավարիչների նշանակմանը: Ի վերջո, «յուրաքանչյուր ղեկավար որոշակի դեպքերում գործում է որպես դատավոր. դատավորը, չլինելով իշխանավոր, այնուամենայնիվ, դառնում է այն օրը, երբ նա իր որոշմամբ ավարտում է դատական գործը»: Պլատոնը շեշտում է, որ արդարադատության իրականացումը յուրաքանչյուրի գործն է, հիմնավորում է ժողովրդական դատարանի սկզբունքը. «Պետական հանցագործություններին առաջադրված մեղադրանքները նախ պետք է հանձնվեն ժողովրդի որոշմանը: Երբ պետությունը վիրավորվում է բոլոր քաղաքացիները, զոհեր են ունենում: Ինչ վերաբերում է մասնավոր դեպքերի քննությանը, ապա բոլորը պետք է իրենց հնարավորությունների սահմաններում մասնակցեն դրան: Նա, ով չի օգտագործում արդարադատության ընդհանուր վարչարարության հնարավորությունը, համարվում է, որ նա բացարձակապես կապ չունի պետության հետ»<sup>3</sup>:

Ցիցերոնը օրենքի անփոփոխ հիմքը համարեց մարդկային բնույթին բնորոշ պատճառը և արդարադատությունը: Հին Չինաստանում և Հնդկաստանում պնդում էին. զարգացող երկիրը պետք է առաջնորդվի արդարադատությամբ: Հին փիլիսոփաների այս և այլ գաղափարները իրավունքի, ազատության, արդարության, մարդկային արժանապատվության, հումանիզմի վերաբերյալ հիմք են դարձել բոլոր հաջորդ սերունդների հումանիստական և մարդածին հայացքների, որոնք հիմք են հանդիսացել օրենքի գերակայության ժամանակակից հայեցակարգերի: Արդարադատության

<sup>1</sup> Цицерон Марк Туллий. О государстве; О законах; О природе богов / пер. с лат. – К., 1998, с. 30.

<sup>2</sup> Нерсесянц В.С. Философия права: учебник. – М.: Норма, 2005, с. 411.

<sup>3</sup> Платон. Соч.: в 3 т. / пер. с древнегреч. – М., 1971. – Т. 3. – Ч. 2. с. 410.

խնդրի՝ որպես «ամեն ինչի պատճառը», ուսումնասիրությունը շարունակեց Պլատոնի ուսանող Արիստոտելը: Նրա կարծիքով՝ Սոլոնը ներկայացրեց ժողովրդական դատարան, որտեղ բոլորը կարող են դատավոր լինել: Ավելին, քաղաքացիները պետք է համարվեն նրանք, ովքեր «մասնակցում են դատին և ժողովրդական ժողովին: Քաղաքացու հասկացության նման սահմանումը լավագույնս համապատասխանում է բոլոր նրանց, ովքեր քաղաքացի են կոչվում»<sup>4</sup>: Արդարադատության խնդիրների հետագա խորը բացահայտումը Եվրոպայում իրականացվել է արդի ժամանակներում:

Այսպիսով՝ դատարանի շատ բարձր գնահատականը Գ. Գրոտիուսի արտահայտությունն է. «Չնայած այն հանգամանքին, որ պետական դատարանները ստեղծվել են ոչ թե բնության կողմից, այլ մարդու կամքով, դրանք անհամեմատ ավելի կատարյալ են, քան բնության ստեղծագործությունները, ավելի հարմար են մարդկանց հանգստության համար, ուստի դրանց դիմելը ոչ մեկի համար այնքան կարևոր չէ, որքան անհատների համար: Նման գովելի վերաբերմունքի խոնարհությունը ներշնչված է բուն արդարադատությունից և բնական պատճառներից: Իհարկե, կասկած չկա, որ կամայականությունները, որոնք գոյություն ունեն մինչ դատարանների ստեղծումը, խիստ սահմանափակվել են»<sup>5</sup>: Հինավուրց ժամանակներից դատական համակարգը կամ դրա նախատիպերը կոչ են անում լուծել հակամարտությունները իրենց հայեցողությամբ: Ցանկացած պատմական իրավիճակում, պետությունների կառավարման այս հատուկ ճյուղի օգնությամբ իրականացվել է արդարադատություն (բառի բուն ռուսական իմաստով՝ դատարանի արդարադատություն), որն ապահովում էր շահերի դատական պաշտպանություն և խախտված իրավունքների վերականգնում<sup>6</sup>: Արդարադատությունը վերջ է տալիս իրավախախտումներին, վեճերը լուծում է ոչ թե զեն-

քով, այլ՝ օրենքով: Արդարության պահպանումը, ինչպես նաև օրենքից օգտվելը, Գրոտիուսը սահմանում է որպես պետության վճռական հատկանիշներ՝ այն առանձնացնելով, օրինակ, ավազակախմբից<sup>7</sup>:

Արդարադատության գաղափարը որակապես նոր մակարդակի է հասել՝ կապված նորագույն ժամանակների և ներկայիս սահմանադրական մեծագույն դոկտրիններից մեկի՝ իշխանությունների տարանջատման տեսության ձևավորման հետ: Որպես դրա հիմնադիր՝ Ս.Լ. Մոնտեսքիոյի, նման բաժինն անհրաժեշտ է անձի քաղաքական ազատությունն ապահովելու համար:

Այսպիսով՝ դատական համակարգի համատեղումը օրենսդիր կամ գործադիր իշխանությունների հետ բացառում է ազատությունը, քանի որ առաջին դեպքում քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները կախված կլինեն դատական կամայականությունից, իսկ երկրորդում դատավորը կարող է դառնալ ճնշող: Իշխանության բոլոր երեք տիպերի կենտրոնացումը մեկ անձի կամ հաստատության մեջ, որը բաղկացած է մեկ պետության անձանցից, հիմնականում հանգեցնում է «ամեն ինչի ոչնչացմանը»: Այս նկատառումներից Ս.Լ. Մոնտեսքյոն տրամաբանական եզրակացություն է անում, որ իշխանության բոլոր երեք տեսակները պետք է պատկանեն ոչ միայն տարբեր մարմինների, անհատների, այլև հասարակության տարբեր խավերի: Իշխանության այս բաժանման մեջ է, որ մտածողը արդյունավետ մեխանիզմ է տեսնում ոչ միայն քաղաքական ազատության ապահովման, այլ նաև սոցիալական փոխզիջման հասնելու համար: Ի վերջո, եթե պաշտոնապես բաժանված իշխանության բոլոր ճյուղերը, առաջին հերթին դատական համակարգը, իրականում պատկանում են մեկ խավի կամ մեկ քաղաքական ուժի, ապա քաղաքական ազատություն կամ սոցիալական միասնություն չի լինի<sup>8</sup>:

<sup>4</sup> Аристотель. Политика / пер. с давногрец. – К., 2005, с. 67.

<sup>5</sup> Гроций Г. О праве войны и мира: три книги, в которых объясняются естественное право и право народов, а также принципы публичного права / пер. с лат. – М., 1956, с.119.

<sup>6</sup> Сачков А.Н. Правосудный образ судебной власти России XXI века: национальный подход к конструированию // Философия права. – 2010. – № 5 (42). – С. 23.

<sup>7</sup> Гроций Г. О праве войны и мира: три книги, в которых объясняются естественное право и право народов, а также принципы публичного права / пер. с лат. – М., 1956, ст. 63.

<sup>8</sup> Монтескье Ш. Избр. Произведения / пер. с фр. – М., 1955, ст. 289.

Ըստ Ս.Լ. Մոնտեսքյոյի՝ անկախ դատական համակարգը կարևոր նշանակություն ունի մարդու քաղաքական ազատության ապահովման գործում: Դա այն դատարանն է, որը պետության իշխանության, իրավունքի և անհատի անմիջական շփման կետն է, և կարող է ծառայել որպես լավագույն պաշտպանություն պետական իշխանության անօրինական գործողությունների համար, քաղաքացու ամենահավանական պաշտպանը կամայականությունից [8, p. 290]: Այս իմաստով նույնքան կարևոր են Ի. Կանտի գաղափարները, որոնք նշանակալի դեր ունեցան ժողովրդական իշխանության իրականացման ընթացքում՝ հասարակական պարտքի մասին գաղափարների ձևավորման գործում:

Եթե Կանտը պարտականության գաղափարը կապում էր անձի մեջ բարոյական օրենքի առկայության, հասարակության մեջ որոշակի վարքի անհրաժեշտության մասին իր գիտակցման հետ, ապա իրավունքի ժամանակակից էթիկան ավելի շուտ բխում է անձի սոցիալական էությունից և դրա սոցիալական ձևի գոյությունից, որի միջոցով մարդը միշտ պարտականություններ ունի հասարակության, կոլեկտիվի, ժողովրդի հետ հարաբերություններում:

Արդարադատության խնդիրները որպես փիլիսոփայական և իրավական դիսկուրս, և միևնույն ժամանակ կարևոր սոցիալական ինստիտուտ, մանրակրկիտ ուսումնասիրված են. Կանտի՝ «Իրավունքի դոկտրինի մետաֆիզիկական հիմունքները» աշխատության մեջ, որտեղ նա դատարանի նպատակը սահմանում է որպես «յուրաքանչյուրին արժանվույնս՝ օրենքի համաձայն», բերում է նրան պրակտիկ եզրակացության. «մեծ ուղերձ, փոքր ուղերձ-կալանավորում» ձերբակալվածի կալանավայրը, որը պարունակում է «Դատարանի որոշումը (դատավճիռը) այն մասին, թե տվյալ դեպքում ինչն է համապատասխանում օրենքին»<sup>9</sup>:

Հետագայում արդարադատության փիլիսոփայությունը զարգացում ունեցավ Հեգելի՝ «Իրավունքի փիլիսոփայություն» աշխատության մեջ: Ըստ մտածողի՝ դատարանը քաղաքացիական հասարակության անդամի արդա-

րադատություն իրականացնելու իրավունքի իրացման, վիճարկվող իրավունքի (դատական համակարգի հասարակական արժեքի ճանաչում) ձեռքբերման երաշխավորն է. «Քաղաքացիական հասարակության անդամը իրավունքը վիճարկել կարող է միայն դատարանի միջոցով»: Դատական գործընթացների ընթացքը պետք է որոշվի օրենքով: Արդարադատության իրականացումը պետք է լինի թափանցիկ, հրապարակային, քանի որ «օրենքը վերաբերում է, մասնավորապես, քաղաքացիների հանդեպ ունեցած վստահությանը և որոշակի ասպեկտի, որը պահանջում է դատական գործընթացների հրապարակայնություն» (արդարադատության օրինականացման անհրաժեշտություն):

Այս պարագայում դատարանին անհրաժեշտ է երկու տեսակի օրինականություն. 1. ընդհանուր՝ հասարակության բոլոր քաղաքացիների վստահություն, 2. անհատական՝ վստահություն «որոշում կայացնող սուբյեկտիվության նկատմամբ» (դատավորների):

Հեգելը դատարանի կազմում տեսնում է հասարակության անդամների ինքնագիտակցության իրավունքի մարմնացումը: Նա երդվյալ ատենակալների դատավարության անհրաժեշտությունը (որպես օրինականություն) վեր է դասում զուտ «իրավական դատարանների» (որպես օրինականության մարմնավորում) կողմից օրենքի ավելի լավ իրականացման հնարավորության: Միևնույն ժամանակ, գիտնականը լավագույն էլքը տեսնում է ոչ թե այս դատարաններին հակադրվելով, այլ դրանք միավորելով մեկ դատարանում, որտեղ դատարանը հայտնում է հանցակազմի մասին (կայացնում է դատավճիռ), և պրոֆեսիոնալ դատավորը որոշում է կայացնում՝ օրենքի համաձայն: Այսպիսով՝ երդվյալ ատենակալների դատավարության ներդրմամբ ձեռք է բերվում ինչպես դատարանների, այնպես էլ արդարադատության օրինականության և օրինականության համընկնում: Ըստ Հեգելի հայեցակարգի՝ դատավորը «ոչ միայն իրականացնում է օրենքները, նա նաև ակտիվ կողմ է, նրա տեսակետը, կարծիքը և այլն, ազդում են գործի ընթացքի վրա»: Այսպիսով՝ դատավճիռը, ըստ փիլիսոփայի, բաղկացած է երկու տարրից.

<sup>9</sup> Кант И. Основы метафизики нравственности / пер. с нем. – М., 1999, ст. 690.

դրանցից մեկը օրենքն է, երկրորդը՝ դատավորի կարծիքը, տեսակետը, բնավորությունը և այս երկրորդ կողմը մեծապես գոյություն ունի»:

Ռ.Ֆոն Իերինգը իր՝ «Նպատակը օրենքում» աշխատության մեջ արդարությունը սահմանում է որպես օրենքի անվտանգության արտաքին երաշխիք (ներքին երաշխիքը անհատի իրավական գիտակցությունն է):

Եվ դրանում նա տեսնում է իր սոցիալական նպատակը: Ռուդոլֆ Ֆոն Իերինգի հայեցակարգի համաձայն՝ դատական իշխանության և պետական իշխանության այլ ճյուղերի («պետական գործունեության ճյուղեր») միջև տարբերությունը հիմնականում պայմանավորված է «նպատակի ներքին յուրահատկությամբ», ի տարբերություն արդարադատության մյուս ճյուղերի, «պետք է իրականացնել բացառապես օրենքը» (իրավունքի այլ ճյուղերում օրենքը զուգորդվում է նպատակահարմարության հետ): Դրանից բխում է դատավոր գործչի՝ որպես օրենքի կենդանի մարմնավորման պատկերացումը: Դատական գրասենյակի ստեղծման ժամանակ իրավաբանը տեսնում է պետական իշխանության հիմնարար ինքնազսպում դատարանի իրավական տարածքի հետ կապված: Այստեղից նա եզրակացնում է, որ դատավորը պետության կողմից լիազորված է «գտնել իր համոզմամբ իրավունք՝ անկախ պետական իշխանությունից, և դրանով կայացված որոշումների պարտադիր ուժի ճանաչումը»<sup>10</sup>:

Ռ. Ֆոն Իերինգը սահմանում է երեք միջոց, որոնք դատավորին տալիս են «ազատորեն արտահայտելու և պաշտպանելու իր համոզմունքները ինչպես մասնավոր անձի, այնպես էլ պետական իշխանության հետ կապված»։ Անփոփոխելիություն, հանդիպման գաղտնիություն և համապատասխան բովանդակություն<sup>11</sup>: Իրավաբանը համարում է երդվյալ ատենակալներին արդարադատության լիակատար անկախություն իշխանությունից, որը «բնութագրում

է բացարձակությունից անցումը օրենքի գերակայությանը»<sup>12</sup>:

Կասկած չկա, որ արդարադատության անկախ, անկողմնակալ, ազնիվ և բարձր պրոֆեսիոնալ իրականացումը որոշիչ գործոն է օրենքի գերակայության և դատական համակարգի համար: Հետևաբար, դրա սկզբունքները պետք է ներմուծվեն ժամանակակից կյանք և հաշվի առնելով արևմտյան քաղաքակրթության դարավոր փորձը՝ պետական կամայականության նկատմամբ իրական, ոչ թե թղթի վրա հիմնված օրենքի գերակայության փորձ, իրական, ոչ դեկլարատիվ, ուժի օրենքը հոգուտ օրենքի ուժի:

Պատմականորեն դատական համակարգը և դրա նախատիպերը նախատեսված էին հակամարտությունները լուծելու իրենց հայեցողությամբ: Ցանկացած իրավիճակում, պետությունների կառավարման այս հատուկ ճյուղի օգնությամբ իրականացվեց արդարադատություն, բառի բուն իմաստով՝ դատարանի արդարադատություն, որն ապահովում էր շահերի դատական պաշտպանություն և խախտված իրավունքների վերականգնում: Բայց գերագույն իշխանությունն ու ժողովուրդը, հակամարտությունները լուծելու պետության իրավունքով օժտելով, գերագույն իշխանությունը և ժողովուրդը տարբեր կերպ են ընկալել դրա նպատակը, արդարացի բնույթը: Իր իրավական հարցի նյութական և հոգևոր բաղադրիչների անհամապատասխանությունն արտահայտվում է պատշաճ արդարության ձևական-իրավական և հոգևոր-բարոյական սկզբունքների, նրանց դատական իշխանությունը առաջացնող և փոփոխող պատճառների պայմանականության գնահատման մեջ եղած անհամապատասխանության մեջ:

Այս բաղադրիչները օբյեկտիվացված են համապատասխան դատական-իշխանական հարաբերություններում, որոնք որոշում են դատական իշխանության փաստացի գոյության պրակտիկան:

<sup>10</sup> Иеринг Р. Избранные труды: в 2 т. / пер. с нем. – СПб., 2006. – Т. 1., ст. 327.

<sup>11</sup> Иеринг Р. Избранные труды: в 2 т. / пер. с нем. – СПб., 2006. – Т. 1., ст. 388.

<sup>12</sup> Иеринг Р. Избранные труды: в 2 т. / пер. с нем. – СПб., 2006. – Т. 1., ст. 366.

**ԼԵՈՆԻԴ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,  
Երևան քաղաքի Աջափնյակ-Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ

**ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ձինվորական հանցավորության դեմ պայքարի հիմնական ուղղությունը, ինչպես գիտենք, կանխարգելումն է: Մարդկային հասարակությունն արդեն վաղուց համոզվել է, որ բացասական ցանկացած երևույթի կանխումը միշտ ավելի արդյունավետ և նպատակահարմար է, քան դրան հաջորդող վերականգնողական աշխատանքների իրականացումը (հիվանդության բուժումը, հանցագործության համար պատժելը և այլն): Հանցավորության կանխմանն ուղղված գործունեությունը ենթադրում է փոխկապակցված և նպատակային այնպիսի միջոցառումների մշակում և իրականացում, որոնք անհրաժեշտ և բավարար են հանցավոր արարքների կատարման պատճառների և նպաստող պայմանների վրա դրականորեն ներգործելու կամ դրանց առաջացմանը խոչընդոտելու համար<sup>1</sup>:

Հանցավորության կանխման սոցիալական արժեքավորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այն համարվում է հանցագործությունների դեմ պայքարի առավել արդյունավետ ուղղություններից նախ և առաջ այն պատճառով, որ կոչված է ապահովելու հանցավորության արմատների և աղբյուրների, պատճառների և պայմանների բացահայտումն ու վերացումը (չեզոքացումը, ուղեփակումը)<sup>2</sup>: Այլ կերպ ասած, կանխումը, որպես կանոն, ենթադրում է հանցավոր արարքների կատարման հնարավորության բացառում: Դրա հետ մեկտեղ կանխարգելիչ միջոցների արդյունավետ կիրառումը հնարավորություն է ընձեռում խափանել նախապատրաստվող կամ արդեն իսկ սկսված հանցավոր գործունեությունը, բա-

ցառել օրենքով պահպանվող հասարակական հարաբերություններին վնաս պատճառելու հնարավորությունը:

Հայ հասարակությունում ներկայումս մտահոգություն է առաջացնում ՀՀ Ձինված ուժերի և ոազմական այլ զինվորական ձևավորումներում զինծառայողների շարքում հանցավորության խնդիրը:

Ժամանակակից քրեագիտությունը մշակել է հանցավորության կանխարգելումը ստորանց պատճառների և պայմանների մակարդակների.

1. պատճառների և պայմանների ընդհանուր սոցիալական մակարդակին համապատասխանում է հանցավորության սոցիալական կանխարգելումը,
2. հանցավորության պատճառների և պայմանների հատուկ մակարդակներին համապատասխանում է հանցավորությունների հատուկ քրեագիտական կանխարգելումը,
3. հանցավորության պատճառների և պայմանների անհատական մակարդակին համապատասխանում է հանցավորության անհատական կանխարգելումը<sup>3</sup>:

Հանցավորության կանխարգելման հարցերում անհրաժեշտ է դասել.

- հանցագործությունների կանխարգելման հարցերում պետական քաղաքականության հիմքերի հաստատումը,
- հանցավորության կանխարգելման վերաբերյալ օրենքների փոփոխում, դրանց իրականացման հսկողություն,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 126 2021

<sup>1</sup> Տեն А. И. Алексеев, С. И. Герасимов, А. Я. Сухарев. Криминологическая профилактика. Теория, опыт, проблемы. М., 2014, ст. 6-7.  
<sup>2</sup> Մանրամասն տե՛ս **Грибанов Е.В.** Технологии предупреждения преступлений: проблемы формирования и развития // Государство и право, 2019, №10, ст. 96-97.  
<sup>3</sup> Մանրամասն տե՛ս **Раска Э. Э.** Криминологическая профилактика: Теоретические и методологические основы: Автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 1988.



ինչպես նաև հանցագործությունների կանխարգելմանն ուղղված պետական ծրագրերի իրականացում և ֆինանսավորում,

- ըստ հանցավորության կանխարգելման՝ գործադիր իշխանության մարմինների գործողությունների համադասում և համագործակցություն,
- հանցավորության կանխարգելման ոլորտում պետական ստանդարտների մշակում և հաստատում,
- հանցավորության կանխարգելման ոլորտում վիճակագրական հաշվառման և հաշվետվության պետական միասնական համակարգի հաստատում,
- հանցավորության կանխարգելման իրականացման ժամանակ քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանություն:

Այս հարցերը ավանդաբար իրականացվում են, ըստ հետևյալ սկզբունքների, օրինականություն, մարդասիրություն և սոցիալական արդարություն:

XXI դարում «բնակչության սոցիալական պաշտպանվածությունը վերածվել է հայ հասարակության զարգացման կարևոր քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական, բարոյահոգեբանական գործոնի<sup>4</sup>: Սոցիալական պաշտպանության ինստիտուտը, իրականացնելով կենսաապահովման, սոցիալ-կայունացնող և զարգացնող իր հիմնական հասարակական գործառույթները, սերտորեն համագործակցում է սոցիալական այլ ինստիտուտների հետ և խաղում համակարգային ինտեգրված ինստիտուտի կարևոր դեր:

Զինծառայողների սոցիալական պաշտպանության առումով անհրաժեշտ է հասկանալ զինվորական հանրույթի, զինծառայողների, նրանց ընտանիքների, զինծառայությունից հեռացված անձանց, բանակի հաշմանդամների և վետերանների նորմալ գործառնության և զարգացման աջակցմանը, օրինական իրավունքների ու ազատությունների, արտոնությունների շահերի պահպանությանը կողմն-

որշված պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և հաստատությունների աշխատանքը:

Այսպես՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 29 նոյեմբերի 2017 թվականի ՀՕ-195Ն ՀՀ օրենքի<sup>5</sup> 6-րդ բաժինը ամբողջությամբ նվիրված է զինծառայողների դրամական ապահովության և սոցիալական ապահովության հարցերին, մասնավորապես՝ զինծառայողների դրամական, պարենային և իրային ապահովությունը, դրամական օգնությունները, բժշկական օգնությունը և սպասարկումը, բնակարանային ապահովությունը, տրանսպորտային ապահովումը, կրթություն ստանալու երաշխիքները, դրամական աջակցությունը և այլն: Զինված ուժերի պայմաններում սոցիալական պաշտպանվածությունը ներառում է օրենսդրական, տնտեսական, սոցիալական, քաղաքական բնույթի միջոցների համակարգ: Այն արտացոլում է զինծառայողների տարբեր կատեգորիաների և նրանց ընտանիքի անդամների կարևոր սոցիալական իրավունքների և երաշխիքների իրականացման աստիճանը և լիարժեքությունը, ինչն էլ վերջիններիս հնարավորություն տալիս բավարարել ծառայության սահմանափակումները և զրկանքները փոխհատուցող անհրաժեշտ նյութական և հազարավոր պահանջները:

Բանակը վակումում չէ, հասարակությունից զատ չի ապրում: Այն վերջինիս բաղադրիչ մասն է և անմիջական կախված է հասարակությունում և դրա ինստիտուտներում ընթացող խորքային գործընթացներից ու փոփոխություններից: Բանակի սոցիալական կերպարը սահմանվում է պետական և հասարակական կառուցվածքով, երկրի տնտեսական զարգացման մակարդակով, իրականացվող սոցիալական քաղաքականությամբ և տվյալ պետության քաղաքացիների բարեկեցությամբ, նրանց ազատությունների և իրավունքների իրականացմամբ, հասարակության քրեականացվածության աստիճանով, սոցիալական ոլորտի վիճակով և ժողովրդագրական գործընթացներով, «քաղաքացիական» և «զինվո-

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս Հարությունյան Մ.Ա. Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փոխհատուցությունը: Երևան, «Նաիրի» հրատ., 2014:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀՊՏ, № 73 (1348) 6 դեկտեմբերի 2017:

րական» հանրայինների համագործակցության բնույթով և մակարդակով:

«Սահմանադրությանը, օրենսդրական այլ ակտերին համապատասխանությամբ զինծառայողները նույն կերպ, ինչպես երկրի բոլոր քաղաքացիները օժտված են այն բոլոր իրավունքներով, ազատություններով, արտոնություններով, որոնք ապահովում են վերջիններիս սոցիալական պաշտպանությունը: Դրանց թվին պատկանում են ազատության, արժանապատվության պաշտպանությունը, տեղաշարժի և բնակության վայրի ընտրության ազատ իրավունքը, խոսքի ազատությունը, ժողովներում, ցույցերում, քայլարշավներում, պիկետներում մասնակցության իրավունքը, խղճի և դավանանքի ազատությունը, պետական գործերի և հասարակական կազմակերպությունների կառավարման իրավունքը, աշխատանքի իրավունքը, ծառայողական ժամանակի և հանգստի իրավունքը, բնակարանի, առողջության պահպանության և բժշկական օգնության, սեփականության իրավունքը:

Ձինվորական աշխատանքի բարդության և լարվածության հետ կապված, զինծառայողներին և նրանց ընտանիքներին տրամադրվում են որոշակի արտոնություններ՝ ըստ հարկերի, ապահովագրական երաշխիքների, վնասի հատուցման, ոչ իրավաչափ գործողությունների բողոքարկման, բնակարանի, կոմունալ-կենցաղ ծառայությունների վճարման, արձակուրդի, գործուղման ժամանակ երկաթուղային, օդային, ջրային և ավտոմոբիլային (բացառությամբ տաքսիի) անվճար երթևեկության, սակայն որոշ, բայց կարևոր արտոնություններ ներկայումս չեղյալացված են կամ չեն գործում:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերը նախատեսում են զինծառայողների իրավունքների սահմանափակման հնարավորություն միայն առանձին, խիստ որոշակի պայմաններում<sup>6</sup>:

Հիմնականում երկրի նոր քաղաքական ղեկավարությունը, ըստ զինվորական հանրային, սոցիալական պաշտպանության համակարգի ստեղծման որոշակի ջանքեր է ձեռնարկել և շարունակում է ձեռնարկումները: Արմատական բարեփոխությունների իրականացման

շրջանում ընդունվել է, ինչպես վերը նշել ենք, զինծառայողների իրավական կարգավիճակի տարբեր ասպեկտները կարգավորող օրենքը, վերափոխատավորման են ենթարկվել Հայաստանի պաշտպանական պոտենցիալի գրեթե բոլոր բաղադրիչները: Աստիճանաբար սկսում են ձևավորվել նաև կոնկրետ զինծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մեխանիզմներ, այդ թվում նաև դատական մարմինների միջոցով: Դրա շնորհիվ պաշտպանության միջոցների և երկրում ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում հաջողվել է բավականին բարեհաջող, առանց զինծառայողների կողմից զանգվածային բողոքների ձևափոխել ռազմաքաղաքական խնդիրների վերափոխատավորումը և արժևորումը:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ զինվորական հանրային սոցիալական պաշտպանության ապահովման առավել հեռանկարային ուղղության թվին դասվում են.

1. Ըստ զինծառայողների և նրանց ընտանիքների շահերի՝ պաշտպանության բազայի համապատասխանեցում առկա սոցիալ-տնտեսական պահանջներին:

Այս առումով, առաջարկում ենք.

1. մշակել և ընդունել «Ձինծառայողների, զինվորական ծառայությունից հեռացված քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների և սոցիալական արտոնությունների վերաբերյալ» կողիֆիցիրացված նորմատիվ-իրավական ակտ: Այդ նորմատիվ-իրավական ակտում հատուկ տեղ պետք է գրավեն պատերազմական և այլ գործողությունների իրականացման ժամանակ ռազմական օպերացիաների գործընթացին մասնակցություն ունեցող զինծառայողների համակողմանի ապահովման վերաբերյալ դրույթները:

2. Ըստ զինծառայողների սոցիալ-տնտեսական շահերի՝ ապահովման անհրաժեշտ երաշխիքների համակարգի ստեղծումը: Այս նպատակով անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ ըստ դրամական ապահովման բարձրացման մինչև այն չափերի, որոնք կապահովեն զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների նորմալ կենսագործունեություն-

<sup>6</sup> Մանրամասն տե՛ս **Зайка Л. М.** Правовое положение в армии //Социалистическая законность. 1989, № 12, էջ 14-15:

նը, տնտեսապես հիմնավորված կադրային պատվերի հիման վրա մշակել նրանց սոցիալական պաշտպանության համալիր ծրագիր:

3. Անհրաժեշտ է ձեռնարկել բնակարանային խնդիրների, զինվորականների և զինվորական կայազորների սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործման առավել արմատական լուծումներ, կորդինացնել զինծառայողների համար սոցիալական կարևոր նշանակություն ունեցող սոցիալական պաշտպանությունը ապահովող հատուկ ծառայությունների գործունեությունը (բժշկական, թիկունքի, ռազմաիրավական, հոգեբանական): Անհրաժեշտ է յուրաքանչյուր տարի անցկացնել զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների, ՀՀ Ձինված ուժերի քաղաքացիական անձնակազմի սոցիալ-տնտեսական և իրավական կարգավիճակի մոնիթորինգ: Դրանց ընդհանրացված արդյունքները ներկայացնել խորհրդարանական նիստերին՝ ըստ արդիական խնդիրների օպերատիվ լուծումների ընդունման նպատակներով:

4. Բարելավել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության առկա ինստիտուտները և մեխանիզմները ու ստեղծել նորերը: Նպատակահարմար է բարձրացնել Ձինված ուժերի դաստիարակչական կառույցների առկա կարգավիճակը, զորամասերում, միավորումներում և հաստատություններում ստեղծել՝ ըստ զինծառայողներին, պատերազմի վետերաններին և զինծառայության վետերաններին, Հայկական Բանակի ծառայողներին, հաշմանդամներին և մարդկանց այլ կատեգորիաներին հասցեային օգնության ցուցաբերման և աջակցության ռազմասոցիալական աշխատանքի ծառայություններ:

5. Ապահովել աճող սերնդի ըստ հոգևոր-բարոյական դաստիարակության համալիր ծրագրերի անցկացումը, Ձինված ուժերում պետական հայրենասիրության գաղափարների և սեփական Հայրենիքի նկատմամբ սիրո ներածումը: Անհրաժեշտ է պետական համագային գաղափարախոսության մշակում, Հայաստանի Հանրապետության պատմական ավանդույթների հիման վրա երիտասարդության հայրենասիրական դաստիարակության համակարգի վերականգնում, զանգվածային

լրատվական միջոցներում ռազմական աշխատանքի հեղինակության բարձրացում:

6. Ձինծառայողների սոցիալական պաշտպանությունը հանդիսանում է սոցիալական քաղաքականության կարևոր բաղադրիչ և անմիջական կախված է իրականացվող բարեփոխությունների սոցիալական ուղղվածությունից, պետության, հասարակության և անհատի սոցիալական անվտանգության նպատակաուղղված ձևավորումից, ազգի առողջության վերականգնումից և ամրապնդումից, քաղաքացիների կենսագործունեության սոցիալական ցուցանիշների բարելավումից, մշակույթի, բարոյականության, իրավակարգի զարգացվածությունից, մարդկանց սոցիալական ակտիվության բարձրացումից:

7. Ձինծառայողի սոցիալական պատշաճ պաշտպանությունը կհանդիսանա զինվորական հանցավորության կանխարգելման արդյունավետ միջոցառումներից մեկը:

Հանցավորության, այդ թվում զինվորական հանցավորության ընդհանուր կանխարգելման հիմնական ուղղություններից է նաև քրեական օրենսդրության կատարելագործումը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքը ընդունվել է 2003 թվականին, որից հետո դրա իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը և քրեաիրավական նորմերի մեկնությունները վկայում են բազմաթիվ թերությունների ու բացթողումների մասին:

Մինչև այժմ գործող ՀՀ քրեական օրենսգրքում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ և լրացումներ: Սակայն այդ փոփոխությունների և լրացումների չհամաձայնեցված մոտեցումները, միասնական հայեցակարգային լուծումների բացակայությունը և կրիմինալոգիական հիմնավորվածության անտեսումը որոշ դեպքերում հանգեցրել են օրենսգրքում առկա հակասությունների, թերացումների և իրավական որոշակիության ավելի խորացմանը, ինչը բացասական ազդեցություն է թողել քրեական և պատժողական քաղաքականություն, հանցավորության դեմ արդյունավետ պայքարի իրականացման վրա:

Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում ենք նոր քրեական օրենսգրքի նախագծի և դրա հայեցակարգի մշակման գործընթացում ու-

շաղրություն դարձնել հետևյալ ելակետային դրույթների վրա, որոնք, մեր կարծիքով, պետք է տեղ գտնեն նշված փաստաթղթերում:

Քրեական օրենսգիրքը այն եզակի օրենքներից է, որն առավելագույնս պետք է լինի կայուն, կանխատեսելի, հստակ: Քրեական

օրենսգրքի նորմերը պետք է պայմանավորված և հիմնավորված լինեն սոցիալ-իրավական և կրիմինալոգիական տեսանկյունից: Քրեական օրենքը պետք է կոչված լինի ապահովելու մարդու, հասարակության և պետության անվտանգության արդյունավետ պաշտպանությունը<sup>7</sup>:



<sup>7</sup> Մանրամասն տե՛ս Противодействие современной преступности: криминологические, уголовноправовые и уголовно-процессуальные аспекты. Под общей ред. **А.Н. Савенкова**. - М, 2019:

**ԻԳՆԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀՀ ոստիկանության ԵԲՎ Կենտրոնական բաժնի  
 հետաքննության բաժանմունքի տեսուչ,  
 ոստիկանության լեյտենանտ

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԸ՝  
 ՈՐՊԵՍ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ**

Հոդվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավորության մակարդակը: Հատկապես ընդգծվում է անչափահասների հանցավորությանը նպաստող գործոնների, մասնավորապես ընտանեկան անբարենպաստ միջավայրի և քրեական ենթամշակույթի բացասական ազդեցությունը անչափահասների աշխարհայացքի և ձևավորվող վարքագծի վրա: Որպես առանցքային գործոն նշվում է ծնողական վերահսկողության կարևորությունը, ինչպես նաև դաստիարակության հարցերում ծնողների կողմից ընտրված մեթոդների համակարգերն ու միջոցները:

**Բանալի բառեր.** անչափահասների հանցավորություն, քրեական ենթամշակույթ, ընտանիք, ծնողական վերահսկողություն, շեղվող վարքագիծ:

**ИГНАТ ХАЧАТРЯН**

Инспектор дознания Центрального отдела УГЕ Полиции РА,  
 лейтенант полиции

**НЕБЛАГОПРИЯТНОЕ СЕМЕЙНОЕ ОКРУЖЕНИЕ И КРИМИНАЛЬНАЯ СУБКУЛЬТУРА КАК ФАКТОРЫ,  
 СПОСОБСТВУЮЩИЙ ПРЕСТУПНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ.**

В статье обсуждается уровень преступности несовершеннолетних в Республике Армения. В частности, подчеркивается негативное влияние факторов, способствующих преступности несовершеннолетних, а именно неблагоприятной семейной среды и уголовной субкультуры на мировоззрение несовершеннолетних и формируемое поведение. В качестве ключевого фактора отмечается важность родительского контроля, а также системы и средства методов, отобранных родителями в вопросах воспитания.

**Ключевые слова:** преступность несовершеннолетних, уголовная субкультура, семья, родительский контроль, отклоняющееся поведение.

**IGNAT KHACHATRYAN**

Inspector of Investigation of the Central Division  
 of the Yerevan Department of the RA Police,  
 Police Lieutenant

**THE UNFAVORABLE ENVIRONMENT OF FAMILY AND CRIMINAL SUBCULTURE AS FACTORS  
 CONTRIBUTING TO JUVENILE DELINQUENCY.**

The article discusses the level of juvenile criminality in the Republic of Armenia. In particular, the author emphasizes the two factors that have negative influence to juvenile criminality: the unfavorable family environment and criminal subculture. The main factor is the importance of parental control, as well as the methods and means chosen by parents in matters of upbringing.

**Keywords:** juvenile criminality, criminal subculture, family, parental control, deviated behavior.

**ՆԵԼԼԻ ՏԵՐ-ԹՈՐՈՍՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

**«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

Գիտական հոդվածում վերլուծվել է «պաշտոնատար անձ» հասկացությունը, անդրադարձ է կատարվել տարբեր իրավական ակտերում այդ հասկացության բովանդակության առանձնահատկություններին: **Բանալի բառեր.** պաշտոնատար անձ, հատուկ սուբյեկտ, ՀՀ քրեական օրենսգիրք, օրենսդրություն:

**НЕЛЛИ ТЕР-ТОРОСЯН**

Прокурор по управлению по взысканию имущества незаконного происхождения Генеральной прокуратуры РА, соискатель кафедры уголовного права юридического факультета ЕГУ

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, КАСАЮЩИЕСЯ КОНЦЕПЦИИ “ОФИЦИАЛЬНОГО ЛИЦА”**

В научной статье анализировано понятие “официального лица” и указаны особенности содержания этого понятия в разных легальных актов.

**Ключевые слова:** официальное лицо, специальный субъект, Уголовный кодекс РА, законодательство.

**NELLY TER-TOROSYAN**

Prosecutor of the department for confiscation of property of illicit origin of the RA Prosecutor General’s office, applicant for the Department of Criminal Law, YSU Faculty of Law

**CERTAIN ISSUES RELATED TO THE NOTION OF “OFFICIAL”**

The notion of “official” was analyzed in the scientific article. The peculiarities of the content of this concept in different legal acts were referred to.

**Keywords:** official, special subject, Criminal code of RA, legislation.

\* \* \*

**ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ**

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՓՈՐՁԱԳԵՏԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՄՈՂՄՈՒՆՔԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հեղինակը յուրովի ուսումնասիրության է ենթարկել փորձագետի՝ որպես դատական փորձաքննություն իրականացնող սուբյեկտի, ներքին համոզմունքին վերաբերող հարցերը՝ փորձելով դրանք վերլուծել ՀՀ գործող քրեական դատավարության օրենսդրության ընդհանուր համատեքստում: Մասնավորապես՝ քննարկման առարկա են դարձել ներքին համոզմունքին վերաբերող այնպիսի տեսական և իրավական նշանակության հարցեր, որոնց վերաբերյալ ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ մի շարք քրեագետների և հեղինակավոր գիտնականների կողմից, արտահայտվել են կարևոր դիրքորոշումներ:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում, վերջինիս կողմից ներկայացվել են առաջարկություններ, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ ՀՀ քրեական դատավարական օրենսդրության կատարելագործման, ինչպես նաև դատական փորձաքննությունների ապացուցողական նշանակության բարձրացման համար:

**Բանալի բառեր.** ներքին համոզմունք, փորձագիտական եզրակացություն, փորձագետի ձեռնհասություն, հատուկ գիտելիքներ, փորձագետ, Վճռաբեկ դատարան:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 126 2021

**ԱՐԱԿ ԱՏԼԱՆՅԱՆ**

Заместитель начальника  
отдела криминалистических исследований  
Экспертно-криминалистического управления  
Полиции РА, подполковник полиции,  
кандидат юридических наук

**ВНУТРЕННЕЕ УБЕЖДЕНИЕ ЭКСПЕРТА В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ**

Эксперт своеобразно изучил вопросы, касающиеся внутреннему убеждению эксперта как проводящего судебную экспертизу субъекта, с целью их анализа в общем контексте действующего уголовного судопроизводства Республики Армения. В частности, предметом обсуждения стали касающиеся внутреннему убеждению такие вопросы теоретического и правового назначения, относительно которых были выражены важные позиции как со стороны Кассационного суда Республики Армения, так и со стороны ряда криминалистов и известных ученых.

В результате проведенных изучений были выдвинуты предложения, которые могут иметь важное значение в деле совершенствования уголовного судопроизводства Республики Армения, а также повышения доказательственного значения судебных экспертиз.

**Ключевые слова:** Внутреннее убеждение, экспертное заключение, компетентность эксперта, специальные знания, эксперт, Кассационный суд.

**ԱՐԱԿ ԱՏԼԱՆՅԱՆ**

Candidate of Jurisprudence, Police Colonel  
and Deputy Head of the Subdivision of Criminal Scientific Researches  
of the Expert- Criminal Department of the RA Police

**THE EXPERT'S INTERNAL CONVICTION IN CRIMINAL PROCEEDINGS**

The expert studied the issues on the expert's internal conviction as the subject carrying out forensic investigation in order to analyze them in general context of criminal proceedings of the Republic of Armenia in force. In particular, the subject for the discussion is the issues of theoretical and legal purpose relating to internal conviction, regarding which the Court of Cassation of the Republic of Armenia, as well as a number of criminalists and well-known scientists expressed important position.

As a result of the carried out studies the proposals were advanced, which may have important meaning in improvement of criminal proceedings of the Republic of Armenia, as well as increase of evidential significance of forensic investigations.

**Keywords:** Internal conviction, expert's report, expert's competence, special knowledge, expert, Court of Cassation.

\* \* \*

**ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**

Фաստաբան, Հայ-Ռուսական համալսարանի հայցորդ

**ՀԱՅՏԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Հոդվածում բացահայտված է հայցի նախնական ապահովման միջոցների հասկացությունը և դերը քաղաքացիական դատավարությունում: Հեղինակը վերլուծել է հայցի նախնական ապահովման միջոցները բնութագրող հատկանիշները: Վերհանված են հայցի նախնական ապահովման միջոցների օրենսդրական կարգավորումների թերությունները և դրա հիման վրա ներկայացված են օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկներ: Հոդվածում մանրամասն ուսումնասիրված են հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման դատավարական ընթացակարգերը:

**Բանալի բառեր.** հայցի նախնական ապահովման միջոցներ, հայցի ապահովում, քաղաքացիական դատավարություն

**ЛУСИНЕ САРГСЯН**

Адвокат, Соискатель Российско-Армянского университета

**ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ МЕРЫ ПО ОБЕСПЕЧЕНИЮ ИСКА**

В статье раскрывается понятие, и роль предварительных мер по обеспечению иска в гражданском судопроизводстве. Автор проанализировал признаки, которые характеризуют предварительные меры обеспечения иска. Выявлены недостатки законодательных норм о предварительных мерах по обеспечению иска, на основании чего внесены предложения по совершенствованию гражданского процессуального законодательства. В статье подробно рассмотрен судебный порядок применения предварительных мер обеспечения иска.

**Ключевые слова:** Предварительные меры обеспечения иска, обеспечение иска, гражданское судопроизводство,

**LUSINE SARGSYAN**

Advocate, applicant of Russian-Armenian University

**PRELIMINARY MEANS OF SECURING THE ACTION**

In this article there is revealed the notion and the role of preliminary means of securing the action in Civile Procedure Code of the Republic of Armenia.

The author analysed the characteristic of preliminary means of securing the action. It is found out the regulations of preliminary means of securing the actions' imperfections and based on the latter here is being shown suggestions for improving them.

This article examines in detail the litigation of applying system of preliminary means of securing the actions.

**Keywords:** Preliminary means of securing the action, provisional remedies, civil procedure, claim proceedings

\* \* \*

**ԷԴԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ԵՀ, Իրավագիտության ամբիոն, ասպիրանտ

**ՄԱՍՆԱՎՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

Տեղեկատվության ազատության հիմնական իրավունքն առաջացել է, առաջին հերթին, պետական մարմինների գործունեության հրապարակայնության ապահովման, հետագայում նաև մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը նպաստելու նպատակով: Ժամանակակից աշխարհում տեղեկատվության ազատության ապահովման շրջանակն ընդարձակվում է պետական մարմիններից բացի՝ ընդգրկելով նաև որոշակի առանձնահատկություններ ունեցող մասնավոր մարմինները:

Անդրադառնալով տեսական գրականությունում և այլ երկրների իրավական ակտերում մասնավոր մարմիններից տեղեկատվություն ստանալու վերաբերյալ մոտեցումներին՝ ուսումնասիրության մեջ ներկայացրել ենք որոշ առաջարկներ, հստակեցրել և ընդլայնել ենք տեղեկատվության տրամադրման պարտականություն ունեցող մարմինների շրջանակը, որով հետապնդել ենք տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի էլ ավելի ապահովման նպատակը:

**Բանալի բառեր.** տեղեկատվություն, տեղեկատվության ազատություն, մարդու հիմնական իրավունք, մասնավոր մարմին, պետական մարմին, տեղեկատվության տրամադրում, պատվիրակված լիազորություն:



**ЭДГАР АВETИСЯН**

ЕУ, кафедра юриспруденции, аспирант

**ПРАВОВЫЕ ОГРАНИЧЕНИЯ ПРИМЕНЕНИЯ ОСНОВНОГО ПРАВА НА СВОБОДУ ИНФОРМАЦИИ ДЛЯ ЧАСТНЫХ ЛИЦ**

Основное право на свободу информации возникло, во первых, для обеспечения гласности деятельности государственных лиц, в последствии так же, с целью содействия эффективной защите прав человека. В современном мире круг обеспечения свободы информации расширяется, включая помимо государственных органов так же, частных органов с некими особенностями.

Ссылая на подходы получения информации от частных органов, в теоретической литературе и в юридических актах других стран, в исследованиях представили некоторые предложения, уточнили и расширили круг лиц, имеющих должность предоставления информации, которым последовали цель большего обеспечения основного права свободы информации.

**Ключевые слова:** информация, свобода информации, основное право человека, частный орган, государственный орган, предоставление информации, делегированные полномочия.

**EDGAR AVETISYAN**

EU, Chair of Law, postgraduate student

**LEGAL LIMITS OF THE APPLICATION OF FUNDAMENTAL RIGHT TO FREEDOM OF INFORMATION FOR THE PRIVATE BODIES**

The fundamental right to freedom of information arose, first of all, to ensure the publicity of the activities of state bodies, and later to promote the effective protection of human rights. In the modern world, the scope of freedom of information is expanding to include, in addition to state bodies, private bodies with certain characteristics.

Referring to the approaches to obtaining information from private bodies in theoretical literature in the legal acts of other countries, we have presented some suggestions in the study, clarified the scope of bodies responsible for providing information, with which we have pursued the goal of further ensuring the fundamental right to freedom of information.

**Keywords:** information, freedom of information, fundamental human rights, private body, state body, provision of information, delegated authority.

\* \* \*

**ՎԱԽԹԱՆԳ ԲԱԲԱՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի հայցորդ,  
ՀՀ Միասնական սոցիալական ծառայության նշանակման վարչության  
երրորդ բաժնի պետ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

Հոդվածում մանրամասն վերլուծության է ենթարկվել սոցիալական պետության հասկացությունը և էությունը, սոցիալական պետության հատկանիշներն ու առանձնահատկությունները, հիմնավորվել է սոցիալական պետության առաջնահերթությունները հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտներում, կարևորվել է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական պետության կայացման անհրաժեշտությունը՝ սահմանադրաիրավական արդի կարգավորումների համատեքստում, տեսականորեն արձանագրվել է, որ սոցիալական պետությունը այն կատարելությունն է, որին մարդկությունը ձգտում է բազում դարերի ընթացքում, այն պետական շինարարության նոր որակ է, որի գործունեությունը հիմնված է սոցիալ-տնտեսական իրավունքների ճանաչման և երաշխավորված պաշտպանության վրա:

**Բանալի բառեր.** սոցիալական պետություն, սոցիալական արդարություն և հավասարություն, մարդու իրավունքներ, սոցիալական քաղաքականություն, պետության սոցիալական գործառույթ:

**ВАХТАНГ БАБАЯН**

Соискатель Института философии, права и социологии НАН РА,  
начальник третий отдел обсуждения единой социальной службы  
Республики Армения

**РЕСПУБЛИКА АРМЕНИЯ КАК СОЦИАЛЬНОЕ ГОСУДАРСТВО**

В статье подробно анализируется понятие и сущность социального государства, признаки и особенности социального государства, приоритеты социального государства были обоснованы в разных сферах жизни общества, подчеркнули необходимость создания социального государства в контексте современного конституционно-правового регулирования. Задokumentировано, что социальное государство – тот эталон, к чему человечество стремится на протяжении многих веков. Это новое качество государственного строя, деятельность которого основана на признании социальных и экономических прав и гарантированной защиты.

**Ключевые слова:** социальное государство, социальная справедливость и равенство, права человека, социальная политика, социальная функция государства.

**YAKHTANG BABAYAN**

PHD applicant, RA NAS Institute of Philosophy Sociology and Law  
Head of the third department of the joint social service

**THE REPUBLIC OF ARMENIA AS A SOCIAL STATE**

The article thoroughly analyzes the concept and essence of the social state, the features and peculiarities of the social state. In different spheres of public life the priorities of social country has been substantiated, in the context of modern constitutional and legal regulations, the necessity of the establishment of the Republic of Armenia as a social country has been emphasized. Theoretically it was stated that social country is perfection which humanity has been appealing for hundreds of centuries. It is a new quality of state construction, the activity of which is based on the recognition of social and economic rights as well as guaranteed protection.

**Keywords:** social state social justice and equality, human rights, social policy, social function of the state.

\* \* \*

**ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ**

ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ, մագիստրոս  
ՀՀ սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական  
վարչության գլխավոր մասնագետ

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ**

Սույն գիտական աշխատանքը նպատակ է հետապնդում վեր հանել այն հիմնական և առանցքային հարցերը, որոնք վերաբերում են Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրացման սահմանադրական և օրենսդրական կառուցակարգերին: Վերոնշյալ հարցն առավելապես քննարկել ենք սահմանադրական վերահսկողության շրջանակներում՝ Նախագահին դիտարկելով որպես սահմանադրական վերահսկողության սուբյեկտ: Նախագահի՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի դիտարկումը իրականացրել ենք Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումների, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի դիմելու և Սահմանադրական դատարանի լիազորությունների համատեքստում՝ վեր հանելով այն խնդիրները, որոնք ոչ ամբողջական են դարձնում Սահմանադրության պահպանմանը հետևելու կարևորագույն գործառույթը: Խնդրո առարկայի դիտարկումը գիտական հարթության շրջանակներում իրենից մեծ կարևորություն է ներկայացնում՝ պայմանավորված խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում Հանրապետության նախագահի կարգավիճակի էական փոփոխությամբ և դրանից բխող խնդիրներով՝ կապված ինչպես Նախագահի դերի համարժեք ընկալման, այնպես էլ վերջինիս լիազորությունների պատշաճ իրականացու-

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ, № 126 2021

մը ապահովելու նկատառումներով: Հանրապետության նախագահի սահմանադրաիրավական դերի և իրավասության տիրույթի ուսումնասիրումն ու համապատասխան իրավական վերլուծությունների լույսի ներքո այդ կարգավիճակի հստակեցումը և իրավասության տիրույթի սահմանների ընդգծումն իրենից մեծ կարևորություն է ներկայացնում այդ Նախագահի լիազորությունների պատշաճ իրականացումը ապահովելու առումով: Սույն աշխատանքում քննարկվող թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն խնդրի առկայությամբ, որ Հանրապետության նախագահի՝ Սահմանադրական դատարան դիմելու հարցերով նախատեսված դեպքերը ուղղակիորեն չեն տեղավորվում Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունների շրջանակներում, որպիսի անորոշությունը հստակեցվել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով: Ըստ այդմ՝ աշխատանքում առանձնացվել են վերոնշյալ թեմային առնչվող որոշ հիմնախնդիրներ և ներկայացվել դրանց համարժեք և հնարավոր լուծումներ՝ հիմք ընդունելով նաև տարբեր տեսաբանների աշխատանքներում խնդրո առարկայի վերաբերյալ առկա տեսակետներն ու եզրահանգումները:

**Բանալի բառեր.** Հանրապետության նախագահ, ՀՀ Սահմանադրություն, սահմանադրական վերահսկողություն, սահմանադրական դատարան, հետևել Սահմանադրության պահպանմանը, սահմանադրականություն, խորհրդարանական կառավարման համակարգ:

**АСМИК АКОБЯН**

ЕГУ, юридический факультет, магистр  
 Главный специалист  
 Правового консультативного управления  
 Конституционного Суда РА

**ПРЕЗИДЕНТ РЕСПУБЛИКИ КАК СУБЪЕКТ КОНСТИТУЦИОННОГО НАДЗОРА**

Данная научная работа преследует цель выявлять те основные и ключевые вопросы, которые касаются конституционных и законодательных механизмов функции президента Республики следить за соблюдением Конституции. Вышеуказанный вопрос мы в основном обсудили в рамках конституционного надзора, рассматривая президента как субъект конституционного надзора Соответственно. Изучение функции президента следить за соблюдением Конституции нами был выполнен в контексте положений, закрепленных в Конституции, касающихся права обращаться в Конституционный суд и полномочий Конституционного суда, поднимая вопросы, которые делают наиважнейшую функцию следить за соблюдением Конституции неполной. Рассмотрение данного вопроса имеет большое значение в научной сфере в связи с существенным изменением статуса президента Республики при парламентской системе правления, и возникающими в результате проблемами, связанными с правильным пониманием роли президента и осуществлением своих полномочий. Изучение конституционно-правовой роли президента Республики, также изучение сферы его компетенции и уточнение данного статуса в свете соответствующего правового анализа, также определение пределов компетенции имеет большое значение для обеспечения надлежащего осуществления полномочий президента. Актуальность темы, обсуждаемой в данной статье, обусловлена также тем, что случаи для обращения в Конституционный суд президентом Республики, напрямую не помещаются в круг полномочий Конституционного суда, указанных в Конституции, что также уточнилось Конституционным законом «О Конституционном суде». В работе были подчеркнуты некоторые проблемы, связанные с вышеупомянутой темой, и были представлены их эквивалентные и возможные решения, основываясь так же на мнениях и выводах разных теоретиков.

**Ключевые слова:** Президент республики, Конституция РА, конституционный надзор, конституционный суд, следит за соблюдением Конституции, конституция, парламентская система правления

**HASMIK HAKOBYAN**

YSU, Faculty of Law, Master  
 Chief Specialist of the Legal Advisory Department of the Constitutional Court  
 of the Republic of Armenia

**THE PRESIDENT OF THE REPUBLIC AS A SUBJECT OF CONSTITUTIONAL CONTROL**

This scientific work is aimed to rise those essential and key issues, which refer to the constitutional and legislative structures of the function of the president of the republic to follow the protection of the constitution. The above issue is mostly discussed within the framework of constitutional control observing the president as a

subject of constitutional control. We have observed the function of the President to follow the observance of the Constitution in the context of the constitutional provisions, in particular, to apply to the Constitutional Court in the context of the powers of the Constitutional Court, raising issues that make incomplete the function of following the observance of the Constitution. Consideration of the issue in the scientific field is of great importance due to the significant change in the status of the President of the Republic under the parliamentary system of government, and the resulting issues related to the adequate understanding of the role of the President and the proper implementation of his powers. The study of the constitutional-legal role of the President of the Republic and the scope of competence and the clarification of that status in the light of the relevant legal analysis and the emphasis on the limits of the scope of competence is of great importance in ensuring the proper exercise of the powers of the President. The urgency of the topic discussed in this paper is conditioned by the fact that the cases of the President of the Republic to apply to the Constitutional Court do not directly fall within the powers of the Constitutional Court, as the uncertainty is clarified by the Constitutional Law on the Constitutional Court. Accordingly some issues refer to this theme are separated in the work and equivalent and possible solutions are presented taking the ground different theorists' views and conclusions referring to this theme.

**Keywords:** The president of the republic, The RA Constitution, constitutional control, constitutional court, to follow the protection of the constitution, constitutionalism, parliamentary government system

\* \* \*

**ՍՅՈՒՉԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱԼ**

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության  
մաքսային կանոնների խախտումների  
վերաբերյալ վարույթների իրականացման  
ավագ մաքսային տեսուչ

**ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ  
ՉՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԿԱՄ ՈՉ ՃՇԳՐԻՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

Սույն հոդվածի առարկան Եվրասիական տնտեսական միության գործունեության պայմաններում ապրանքների չհայտարարագրման կամ ոչ ճշգրիտ հայտարարագրման դեպքում վարչական պատասխանատվության ինստիտուտի ներդրման խնդիրներն են:

Հեղինակը մանրամասն վերլուծում է մաքսային և վարչական օրենսդրությունը, ինչպես նաև իրավապահ պրակտիկան մաքսային իրավահարաբերությունների բարեխիղճ մասնակիցների նկատմամբ համաներման իրականացվող պայմանների բավարարության և օբյեկտիվության վերաբերյալ: Հոդվածի հեղինակն ուսումնասիրում է մինչև ապրանքների բացթողումը տեղեկատվություն չհայտարարագրելու կամ ապրանքների մասին ոչ ճշգրիտ տեղեկություններ հայտարարելու հետևանքների կամավոր վերացման դեպքում վարչական պատասխանատվությունից ազատման լրացուցիչ հիմքի ներդրման իրավական հիմքը:

Մեթոդաբանությունը և հետազոտության մեթոդները պայմանավորված են ճանաչման դիալեկտիկական-մատերիալիստական մեթոդի և դրա վրա հիմնված ընդհանուր գիտական և մասնավոր գիտական մեթոդների կիրառմամբ՝ որոշված գիտական և որակավորման աշխատանքի (հետազոտական) նպատակներով և խնդիրներով, ներառյալ, բայց ոչ. սահմանափակվում են հետևյալ մեթոդներով՝ համակարգային կառուցվածքային վերլուծություն, տրամաբանական, ընդհանրացում, ֆորմալ իրավական, բովանդակության վերլուծություն և այլն:

Հետազոտության գիտական նորույթը այն է, որ առաջին անգամ գիտական հրապարակման մակարդակով հեղինակը կատարել է ապրանքների չհայտարարագրման կամ ոչ ճշգրիտ հայտարարագրման համար վարչական պատասխանատվությունից ազատելու իրավական հիմքերի համապարփակ վերլուծություն: Եվ մաքսային միության, և Եվրասիական տնտեսական միության գործունեության պայմանները, մաքսային իրավահարաբերությունների բարեխիղճ մասնակցի համաներման լրացուցիչ պայման առաջարկվել է ապրանքների չհայտարարագրման կամ ոչ ճշգրիտ հայտարարագրման համար վարչական պատասխանատվությունից:

**Բանալի բառեր.** Վարչական պատասխանատվություն, վարչական իրավախախտում, ապրանքների չհայտարարագրում կամ կեղծ հայտարարագրում, Եվրասիական տնտեսական միություն, ապրանքների բացթողում, բացթողում, հայտարարագրում, փոփոխություններ, մաքսային:

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ, № 126 2021

**СЮЗАННА ВАРДАНЯН**

Старший таможенный инспектор  
 Отдела управления по делам  
 о нарушениях таможенных правил  
 Юридическое Управление Комитета Государственных Доходов РА

### АДМИНИСТРАТИВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА НЕДЕКЛАРИРОВАНИЕ ЛИБО НЕДОСТОВЕРНОЕ ДЕКЛАРИРОВАНИЕ ТОВАРОВ

Предметом данной статьи являются проблемы реализации института административной ответственности за недекларирование либо недостоверное декларирование товаров в условиях функционирования Евразийского экономического союза.

Автором подробно проводится анализ таможенного и административного законодательства, а также правоприменительной практики по вопросу достаточности и объективности реализуемых условий амнистирования добросовестных участников таможенных правоотношений. Автор статьи исследует правовые основы введения дополнительного основания освобождения от административной ответственности в случае добровольного устранения последствий не заявления сведений либо заявления недостоверных сведений о товарах до выпуска товаров.

Методология и методы исследования обусловлены использованием диалектико-материалистического метода познания и основанной на нем совокупности общенаучных и частных научных методов, определенных целями и задачами научно-квалификационной работы (исследования), включая, но не ограничиваясь следующими методами: системно-структурный анализ, логический, обобщение, формально-юридический, контент-анализ и др.

Научная новизна исследования заключается в том, что впервые на уровне научной публикации автором проведен комплексный анализ правовых оснований освобождения от административной ответственности за недекларирование либо недостоверное декларирование товаров в условиях функционирования как Таможенного союза, так и Евразийского экономического союза, предложено дополнительное условие амнистирования добросовестного участника таможенных правоотношений от административной ответственности за недекларирование либо недостоверное декларирование товаров.

**Ключевые слова:** Административная ответственность, административное правонарушение, недекларирование либо недостоверное декларирование товаров, Евразийский экономический союз, выпуск товаров, освобождение, декларация, изменения, таможня.

**SYUZANNA VARDANYAN**

Senior Customs Inspector of Proceedings on Violations of Customs  
 Rules, Legal Department at State Revenue Committee of the RA

### ADMINISTRATIVE RESPONSIBILITY FOR NON-DECLARATION OR INCORRECT DECLARATION OF GOODS

The subject of this article is the problems of implementing the institution of administrative responsibility for non-declaration or inaccurate declaration of goods in the conditions of the functioning of the Eurasian Economic Union.

The author analyzes in detail the customs and administrative legislation, as well as law enforcement practice on the issue of the sufficiency and objectivity of the implemented conditions of amnesty for bona fide participants in customs legal relations. The author of the article examines the legal basis for the introduction of an additional basis for exemption from administrative responsibility in the event of voluntary elimination of the consequences of not declaring information or declaring inaccurate information about goods before the release of goods.

The methodology and research methods are due to the use of the dialectical-materialist method of cognition and the set of general scientific and private scientific methods based on it, determined by the goals and objectives of scientific qualification work (research), including but not limited to the following methods: system-structural analysis, logical, generalization, formal legal, content analysis, etc.

The scientific novelty of the research lies in the fact that for the first time at the level of a scientific publication, the author carried out a comprehensive analysis of the legal grounds for exemption from administrative liability for non-declaration or inaccurate declaration of goods in the conditions of the functioning of both the Customs Union and the Eurasian Economic Union, an additional condition for amnesty of a bona fide participant in customs

legal relations was proposed from administrative responsibility for non-declaration or inaccurate declaration of goods.

**Keywords:** Administrative liability, administrative offense, non-declaration or false declaration of goods, the Eurasian Economic Union, release of goods, declaration, changes, customs.

\* \* \*

**ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԼԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Արդարադատության գենեզն ունի շատ երկար պատմություն: Այն ձևավորվել է ազգային մշակույթի և ավանդույթների, կրոնական գիտակցության, բարոյական արժեքների առանձնահատկությունների վրա և կրելով դինամիկ բնույթ, անընդհատ քննարկվել է անվանի փիլիսոփաների, մտածողների կողմից:

**Բանալի բառեր.** արդարադատություն, արդարադատության մոդելներ, արդարադատության գենեզի պատմական ակնարկ:

**НОРАЙР СТЕПАНИЯН**

Аспирант института Философии, социологии и права НАН РА

**МОДЕЛИ ПРАВОСУДИЯ В РАЗНЫХ СТРАНАХ**

Возникновение справедливости имеет очень долгую историю. Он формировался на основе национальной культуры, традиций, религиозного сознания, нравственных ценностей, имея динамичный характер, постоянно обсуждался известными философами и мыслителями.

**Ключевые слова:** правосудие, модели правосудия, исторический обзор генезиса правосудия.

**NORAYR STEPANYAN**

PhD student of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

**MODELS OF JUSTICE IN DIFFERENT COUNTRIES**

The emergence of justice has a very long history. It was formed on the basis of national culture, traditions, religious consciousness, moral values, having a dynamic character, it was constantly discussed by famous philosophers and thinkers.

**Keywords:** justice, models of justice, historical overview of the genesis of justice.

\* \* \*

**ԼԵՈՆԻԴ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,  
Երևան քաղաքի Աջափնյակ-Դավթաշեն վարչական շրջանների  
դատախազության դատախազ

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Սույն հոդվածի հեղինակը հանգամանորեն քննարկում է զինվորական հանցագործությունների կանխարգելման հիմնախնդիրները, ինչպես նաև վերլուծվում են կանխարգելման հիմնական ուղղությունները:

**Բանալի բառեր.** զինվորական հանցագործություն, հանցագործությունների կանխարգելում, հանցավորություն, հատուկ սուբյեկտ:

**ЛЕОНИД НАГАПЕТАН**

Соискатель Института философии, социологии и права НАН РА,  
старший прокурор прокуратуры административного района  
Ачапняк-Давташен г. Еревана

**ПРОБЛЕМЫ ОБЩЕЙ ПРОФИЛАКТИКИ ВОЙЕННЫХ ПРЕСТУПЛЕНИЙ.**

В данной статье автором обстоятельно рассматриваются проблемы общей профилактики войсковых преступлений, а также анализируются основные направления противодействие преступлением.

**Ключевые слова:** профилактика преступление, войсковые преступление, противодействие преступлением, преступность специальный субъект.

**LEONID NAHAPETYAN**

Applicant for the Institute of Philosophy, Sociology and  
Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Prosecutor of the Prosecutor’s Office of the Ajapnyak-Davtashen  
administrative district of Yerevan

**THE ISSUES OF GENERAL PREVENTION OF MILITARY-CONNECTED CRIMES**

In thus article, the author discusses the issues of prevention of military-connected crimes in detail, as well as the main directions of prevention are analyzed.

**Keywords:** Military-connected crime, crime prevention, criminality, special subject.

**ՀՀ ԴԱՏԱԿԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ**

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել [orinakanutyun@prosecutor.am](mailto:orinakanutyun@prosecutor.am) հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարահրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև՝ այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Եթե հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, ապա այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

**Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները, և հնարավոր է՝ չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:**